




ԶԱՌԱԾԻՆ

1985

9



ԽԲ

ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Յուլիս


1985



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ»
ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆԸ՝ ՏԵՂԻ Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ
ԿԻՑ «ՀԱՅ ԿԵԴՐՈՆ» ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ժ Ե Ն Ե Ն

Ուրախութեամբ կ'ողջունենք ձեր ձեռնարկը, համայնքիդ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Խորհուրդի հետ սերտ գործակցութեամբ, Ս. Յակոբ Եկեղեցւոյ կողքին կառուցելու ջիւղութիւն մը որ կոչուած պիտի ըլլայ դառնալու մշակութային կեդրոնը համայն Վոյցերահայութեան:

Մենք, այսու Մեր գրով կը բերենք Մեր հայրապետական օրինութիւնը ձեր այս ազգանուէր ծրագրի լիակատար յաջողութեան համար, սրտագին կոչ ուղղելով Վոյցերահայ մեր զաւակներուն, որ բոլորը առանց խտրութեան իրենց բարոյական ու նիւթական օժանդակութիւնը բերեն լիաբոլոն կերպով, որպէսզի մօտ ապագային միջազգային համբաւ վայելող ձեր քաղաքը օժտուի հայ մշակութիւն նուիրուած ջիւղութեամբ մը:

Հայաստանեայց Եկեղեցի ու հայ մշակոյթ, բազմադարեան այն երկու մեծ արժէքներն են հայկական ոգեկանութեան, որոնք քաղաքակիրթ աշխարհի հորիզոնի վրայ կը հանդիսանան փառքն ու պատիւը մեր ազգին, երէկ, այսօր և յաւիտեան:

Արդ, կը շնորհատրենք ձեր մտադրացումը և ծրագիրը Ս. Յակոբ ձեր աղօթքի Տունին կողքին բարձրացնելու ներկայանալի ջիւղութիւն մը, մաղթելով ձեզի բոլորիդ անսպառ ջիւղարար եռանդ ու լաւատեսութեան ոգի:


Ձեր ծրագիրը անպայման կը պատկուի լիակատար յաջողութեամբ:
Մենք եւ ոգևորուած ձեր այս սքանչելի ծրագրի իրագործումով, կը մղուինք Մայր Աթոռիս խնայողութիւններէն ձեր արտադրութեան տակ դնելու տասը հազար դոլլարի համեաւ գումար մը, որ կը խորհինք թէ պիտի հանդիսանայ հրաւեր՝ ուղղեալ բոլոր բարեսիրտ նուիրատուներուն, որպէսպի կարճ ժամանակ անց Սուրբ Էջմիածնէն Մենք երջանկութիւնը ունենանք Մեր օրհնութիւնը առաքելու ձեր նորակառոյց մշակութային կեդրոնին:


«Ողջ լերուք պօրացեալ Սուրբ Հոգով և յաւետ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

Հայր Դե Ռ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 4 Յունիսի
1895 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԴ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1357





Ք Ն Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԿՈՒՍԱԿՐՈՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ

1. Ստուգելու համար անհրաժեշտ գիտելիքները և իմացական հասունությունը կուսակրոն քահանայության թեկնածու սարկավագների, հաստատում ենք չորս առարկաների քննության կարգ:
2. Չորս առարկաների քննիչ դասախոսները կազմում են Քննիչ Հանձնաժողովը:
3. Քննության առարկաներն են՝
 - ա. Սուրբ Գիրք և Հայ Եկեղեցու դավանաբանություն.
 - բ. Հայ Եկեղեցու Մատենագրություն.
 - գ. Հայոց պատմություն.
 - դ. Քարոզչություն:
4. Առաջին երեք առարկաներից քննությունները կլինեն գրավոր ու բանավոր: Քարոզչությունը՝ գրավոր:
5. Յուրաքանչյուր առարկայի գնահատականը կորոշվի գրավոր և բանավոր քննություններից հետո:
6. Գնահատականը կլինի՝ հաջողված կամ մերժված:
7. Գրավոր քննության թեկնածուին կտրվի երկու հարց՝ պատասխանելու համար մեկին:
8. Բանավոր քննությանը կտրվի երկու հարց:
9. Որպեսզի թեկնածուն հաջողված նկատվի, պետք է չորսից գոնե երեք առարկաների քննությունները «հաջողված» լինեն:
10. Մեկ առարկայից անհաջող քննություն հանձնելու դեպքում, թեկնածուին հնարավորություն տալ երկրորդ անգամ ներկայանալ տվյալ առարկայի քննության:
11. Թե՛ գրավոր և թե՛ բանավոր քննությունների գնահատականները կդրվեն Քննիչ Հանձնաժողովի կողմից:

ՎԱԶԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին,

19 մայիսի 1985 թ.



ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ 40-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

«Կոտորեցեն զառներս իւրեանց ի խոփս, եւ զգեղարդունս իւրեանց ի մանգալս. ոչ եւս առցէ ապգ յազգի վերայ սուր, եւ ոչ եւս ուսանիցին պատերազմել» (Միքիա Դ 4):

Հունիսյան խաղաղ մի գիշեր գերմանական ֆաշիստները հարձակվեցին Սովետական Միության վրա: Սովետական ողջ ժողովուրդը, մեկ բռնեցք դարձած, ելավ ընդդէմ չար և կործանարար ուժի՝ պաշտպանելու համար իր հայրենիքը և փրկելու իր պատիվն ու նվիրական ընտանիքը:

1941 թվականին մահվան ուրվականն էր թևածում սովետական երկրով՝ իր ետևից թողնելով արցունք, ավերածություն, սարսափ, ոչնչացում: Չորս գարուններ տևող այս պատերազմում ընկան միլիոնավոր մարդիկ, որոնք չտեսան Մայիսյան հաղթանակի արփիայույս առավոտը:

1945 թվականի մայիսի 9-ին Բեռլինի Ռայխստագի շենքի վրա ծածանվեց հաղթության, խաղաղության և եղբայրության կարմիր դրոշակը: Այդ դրոշակի ամեն փողփողումի հետ սփռվում էր խաղաղությունը ողջ աշխարհին՝ ամենքին և ամենուր:

Քրիստոնեական Եկեղեցին երկու հազար տարի է, որ ս. սեղաններից ժողովրդին է բաշխում երկնային խաղաղությունը՝ միշտ հավատարիմ մնալով Քրիստոսի պատգամներին: Բանկի Քրիստոս Իր Աստվածային իմաստությամբ հաստատեց այն ճշմարտու-

թյունը, որ «սուր բարձրացնողը սրով կընկնի»:

Մայիսի 5-ին, կիրակի.—Տօն երևման Ս. Խաչի:

Այսօր Մայր տաճարի Ավագ ս. սեղանի վրա ս. պատարագ էր մատուցում Ս. Հռիփսիմե վանքի վանահայր հոգեշնորհ Տ. Մասիս վրդ. Գալստյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ հայր սուրբը ընթերցեց Վեհափառ Հայրապետի՝ Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի 40-ամյակի առթիվ գրված սրբատառ կոնդակը (տես Բ—Գ, էջ 3):

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստի արարողություն «վասն քսան միլիոն քաջարի զօրավարաց, անձնուէր զօրաց և անմեղ նահատակաց Խորհրդային Միութեան, որք կատարեցան լընթացս Հայրենական մեծի պատերազմին՝ վասն հայրենեաց պաշտպանութեան և վասն խաղաղութեան ամենայն աշխարհի»:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը, ինչպես նաև սպյուռքահայ հյուրեր:

Նույն օրը, հետ միջօրեի, Վեհարանի հանդիսությունների դափնիճում տեղի ունեցավ



ԾԱՂԿԵՊՍԱԿԻ ՋԵՏԵՂՈՒՄ ԱՆՀԱՅՏ ՋԻՆՎՈՐԻ ԳԵՐԵՉՄԱՆԻՆ
(ՄՈՍԿՎԱ, 17 ԱՊՐԻԼԻ 1985 Թ.)



ՄԱՅՈՒ ԵԳԵՐԵՑԱԿԱՆ ԵՎ ԿՈՌՆԱԿԱՆ ՀԱՐԱՆՎԱՐՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՀԱՄԱԺՈՐՈՎԸ ՆԿԻՐՎԱԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵՃ ՊԱՏԵՐԱԾԻ ՀԱՂԹՆԱԿԻ
 40-ԱՄՅԱԿԻՆ ԶԱԳՈՐԱԿԻ ՎԱՆՔՈՒՄ (18 ԱՊՐԻԼԻ 1985 թ.)



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ

հանդիսավոր հավաքույթ՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի 40-ամյակին:

Օրը տոնական էր և հանդիսավոր:

Դահլիճը լեփ-լեցուն էր հրավիրյալներով: Հանդիսությունը սկսվեց Վեհափառ Հայրապետի Տերունական աղոթքով, որից անմիջապես հետո հնչեց Խորհրդային Հայաստանի պետական հիմնը:

Հետո բացման խոսքով հանդես եկավ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպ. Վանթուրյանը:

Նա իր խոսքի մեջ ի միջի այլոց ասաց. «Ուղիղ քառասուն տարի առաջ՝ 1945 թ. մայիսի 9-ի գեղապարզ առավոտյան հնչեց հաղթանակի ջեփորը՝ մեծ ոգևորություն և ուրախություն պատճառելով սովետական և աշխարհի բոլոր ժողովուրդներին: Հաղթանակ բառի տակ կա պատերազմի հինգ երկար տարիների մահաաքսոս ծանրությունը: Հաղթանակը ձեռք բերվեց արցունքով, համառ աշխատանքով, անսահման զոհողություններով և Սովետական Միության օգնությամբ և աշխատասեր ժողովուրդների քսան միլիոն զոհերով: Այդ պատերազմը մեզ համար դարձավ հայրենական, որովհետև այն հայրենիքի փրկության և ապատության համար մղվող պատերազմ էր:

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրից մասնակցեց նաև հայ ժողովուրդը: Ավելի քան վեց հարյուր հազար հայ մարտիկներ մեկնեցին ռազմաճակատ՝ ջախջախելու ոսոխի բանակները: Հաղթանակը փրկություն էր նաև մեր փոքրիկ հայրենիքի՝ Սովետական Հայաստանի համար:

Անցել են քառասուն տարիներ: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը այն ժամանակ կատարեց և այսօր շարունակում է իր խաղաղասիրական ու հայրենասիրական առաքելությունը հանուն աշխարհի և մեր մեծ հայրենիքի խաղաղության»:

Բացման խոսքից հետո ամբիոն հրավիրվեց օրվա բանախոս, հոգևոր ճեմարանի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ պրն. Պետրոս Բեդիրյանը, որը հանդես եկավ օրվա տոնին նվիրված սրտահույզ ճառով:

Բանախոսությունից հետո ամբիոն հրավիրվեց Վեհափառ Հայրապետը իր օրհնության խոսքն ասելու օրվա խորհրդի առթիվ:

«Այս վերջին տասն օրերի ընթացքում մենք նշեցինք երկու տարեթվեր: Առաջինը հայոց ցեղասպանության 70-րդ տարելիցը և հիմա Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 40-ամյակը:

Այս երկու տարեթվերը երեսուն տարով հեռու են իրարից: Իմ կարծիքով, սակայն, կարելի է մի վուզահեռ անցկացնել նրանց

միջև, որովհետև Առաջին և Երկրորդ պատերազմները ծնունդ են առել և սանձազերծվել են նույն ակունքներից, պատերազմի հրձիգները նույն հեղինակներն են, նույն նպատակներն էին հետապնդում և ունեցան նույն վախճանը: Ասում եմ նույն հրձիգներն էին, որովհետև երկու համաշխարհային պատերազմների պատճառը եղավ Գերմանիան: Առաջին համաշխարհային պատերազմինը վիլհելմյան Գերմանիան և Ավստրիան միասին, իսկ Երկրորդ պատերազմինը՝ հիտլերյան, ֆաշիստական Գերմանիան: Նրանք երկուսն էլ հետապնդում էին նույն նպատակը. երկուսն էլ վաղուց մտածված, ծրագրված հարձակումներ էին, որպեսզի իրականացնեին գերման ցեղի տիրապետությունը Եվրոպայի և աշխարհի վրա: Այս նվաճողական և աշխարհին իրենց կամքին ենթարկելու քաղաքականությունն էր, որ ծրնունդ տվեց այս երկու ահավոր պատերազմներին: Առաջին պատերազմին զոհ զրնացին մոտ քսան միլիոն մարդիկ, որոնց մեջ են նաև մեր երկու միլիոն նահատակները, իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմին՝ հիսուն միլիոն:

Կրոնական տեսակետից Հիտլերը հակաքրիստոնյա էր: Նա բացարձակ դեմ էր և այրելու ենթակա էր հաճարում ամբողջ Հին Կտակարանը: Իսկ Նոր Կտակարանը որոշ չափով հանդուրժում էր՝ այն էլ երևի տակտիկական տեսակետից: Նրա կրոնքը հին Գերմանական հեթանոսական կրոնն էր, որի կուռքն էր Վոթան: Վոթան մարմնավորումն էր դաժանության, վրեժխնդրության, անպիշտության և տիրակալության: Այդ հոգեբանական հատկանիշներն էին, որ Հիտլերն ունում էր դուրս բերել դիցաբանության ակունքներից՝ ներշնչելու համար իր ժողովրդին, որպեսզի նրանք էլ դառնան դաժան, անխիղճ:

Հայ ժողովրդի շահերի տեսանկյունից մտնելով, ինչպե՞ս պիտի դիտենք Հիտլերի այս հրեշավոր անձնավորությունը: Հիտլերը Ռուզվելթի թույլ էր տվել Անդրկովկասի «վայրենի ցեղերի» հետ վարվել ինչպես ուսում է:

Ահա թե ինչ էր սպասվում նաև մեզ՝ հայերիս, եթե Աստված մի արասցե, Վուզայի ափերին գերմանացիները հաղթեին: Արաքսի մյուս կողմում կազմ ու պատրաստ կանգնած էին Գերմանիայի օգնությամբ կազմված թուրքական 39 դիվիզիաներ, սպասում էին Ստալինգրադի ճակատամարտի ելքին, որպեսզի Հայաստանի վրայով հասնեն Բաքու: Ահա թե ինչ ճակատագիր էր սպասում մեր ժողովուրդին, եթե պատերազմը հաղթական ավարտ չունենար:

Ահա թե ինչու մենք չենք մառանում մեր պոհերին, և մասնակցում ենք հաղթանակի ուրախության: Հաղթանակ, որ մեր ժողովրդի և հայրենիքի համար նոր վերածնունդի, ծաղկումի և վերաշինության ճամփա բացեց:


...Թույլ տվեք վերջացնեմ իմ խոսքը մեր Եկեղեցու սրբազան աղոթքներից մեկով. «Տէր Աստուած մեր, տուր աշխարհիս խաղաղութիւն, ապգիս Հայոց սէր, միութիւն»:

Հանդիսությունը ունեցավ նաև բարձր մա-

կարդակի գեղարվեստական բաժին, որտեղ ելույթ ունեցան «Շարական» վոկալ-գործիքային խումբն ու Մայր տաճարի երգչախումբը: Սակայն գեղարվեստական հայտագրի փայլը եղավ ասմունքող Նունե Սահակյանը, որը խորագույն ներշնչումով և բացառիկ ընկալումով արտասանեց մանավանդ Դ. Վարուժանի «Առկայծ ճրագ» գողտրիկ բանաստեղծությունը:

ՀԱՎՈՒ ՄԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ





ՍՓՅՈՒՌԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՊԼԵՆՈՒՄԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՔԱՌԱՍՈՒՆԱՄՅԱԿԻՆ

Սույն թվականի մայիսի 11-ին, ժամը 15-ին, Երևանի Դերասանի տանը տեղի ունեցավ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հանդիսավոր պլենումը՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակի 40-ամյակին:

Հանդիսավոր պլենումին ներկա էին մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ, գրողներ, արվեստագետներ, գիտնականներ, Հայրենական մեծ պատերազմի և դիմադրական ջարժման մասնակիցներ, սփյուռքահայ հասարակական-քաղաքական և մշակութային գործիչներ ու այլ անձինք:

Պլենումին ներկա էր նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը՝ ընկերակցությամբ Մայր Աթոռի դիվանապետ Ս. Ներսես եպիսկոպոս Պոպապայանի, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանի և Մայր Աթոռի միաբաններ Ս. Հայ-

կապուն վարդապետ Նաջարյանի ու Ս. Շնորհք արքեպիսկոպոս Բաղդասարյանի:

«Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակի 40-ամյակը և սփյուռքահայության պայքարը հանուն խաղաղության» թեմայի շուրջ զեկուցումով հանդես եկավ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համապասայանը: Նա իր զեկուցման մեջ ի մասնավորի ասաց.

«...Ողիղ քառասուն տարի առաջ, մայիսյան այս օրերին, ավարտվեց մարդկության պատմության մեջ ամենաահավոր ու կործանիչ պատերազմը...

...Այսօր մենք փառաբանում, միաժամանակ մեր գլուխն ենք խոնարհում այն հերոսների պայծառ հիշատակի առջև, ովքեր չվերադարձան ռազմի դաշտից, ովքեր չոհաբերեցին իրենց կյանքը հանուն մեր ծաղկուն հայրենիքի...

Մեր մեծ հայրենիքի ազատությունը և անկախությունը պաշտպանելու ելան նաև Սո-

վետական Հայաստանի աշխատավորները... Հայրենիքի պաշտպանների շարքում կանգնեցին ավելի քան 500 հազար հայ մարտիկներ: Հայ զինվորը կռվում էր այն վսեմ գիտակցությամբ, որ պաշտպանելով սովետական երկրի արևմտյան սահմանները, պաշտպանում է իր փոքրիկ Հայաստանը: Հայ զինվորը անձնուրաց մարտի էր նետվում ֆաշիստական հորդանների դեմ՝ քաջ գիտակցելով, որ մեր դարավոր թշնամին դարանաճուտ սպասում է սահմանի վրա, սպասում է հարմարագույն առիթի, Ստալինգրադի անկումին, որպեսզի հարձակվի մեր հայրենիքի վրա և իրագործի թուրք բարբարոսների կիսակատար մնացած ծրագիրը, 1915 թվականի ցեղասպանությունը, հրեշավոր ոճիր, որը հովանավորեցին նույն կայսերական Գերմանիայի և, այսպես կոչված, արևմտյան քաղաքակիրթ երկրների կառավարողները...»:

Ձեկուցումից հետո խոսքը տրվեց Հայրենական պատերազմի մասնակից, ակադեմիկոս Գևորգ Ղարիբջանյանին: Նա վեր հանեց սովետական ժողովուրդների անձնուրաց և անձնագոհ պայքարը: Հայ զինվորները «կռվում էին հերոսաբար, որովհետև հստակորեն գիտեին, որ նույն գերմանական ցեղապաշտներն էին եղել ուսուցիչները թուրք իթթիհատականների, որոնք իրագործեցին 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը մեր ժողովրդի նկատմամբ»:

Այնուհետև Մեծ հաղթանակի 40-ամյակի առթիվ իր սրտի խոսքն ասաց Նորին Սուրբ Օծություն Ս. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ս. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱԴԵՏԻ ԽՈՍՔԸ

Վերջին երկու համաշխարհային պատերազմների փոթորիկների, ողբերգությունների ու արյան հեղեղների հորձանքի մեջ որոշվեց նաև մեր ազգի բախտը:

Առաջին համաշխարհային պատերազմին մեր ժողովրդի կեսը, արևմտահայությունը, զոհ գնաց 1915-ի ցեղասպանության և հրաշքի համապար փայտաններում նույն մեր ժողովուրդը Արևելահայաստանում 1918 թվին Սարդարապատի պատմական հաղթանակով փրկվեց մի նոր եղեռնից, իսկ 1920-ի աշնան, շնորհիվ ռուս ժողովրդի օգնության, գտավ իր պետականության նոր կյանքի ուղին, ապահովության ու խաղաղ վարձագման փայտաններում:

Երկրորդ համաշխարհային պատերազմին մեր ժողովուրդն էլ ահավոր վտանգի առաջ էր գտնվում, սակայն նաև այս անգամ, շնորհիվ սովետական ժողովուրդների աշխարհա-

սասան հաղթանակի, նա փրկվեց կործանումից ու եղբայր ազգությունների մեծ ընտանիքում շարունակեց ապրել վերաշինության և վերելքի ճամփով իբրև ազգային պետություն, անդամ սովետական ազգությունների միության:

Մեծ հաղթանակը, բազում բախտորոշ բարիքների հետ, սփյուռքաբնակ մեր ժողովրդին ընծայեց նաև հնարավորությունը հոգեպես միանալու մեր մայր երկրին ու աստիճան առ աստիճան սերտացնելու և վարձացնելու իր մշակութային կապերը հայրենաբնակ իր եղբայրների ու թույրերի հետ: Այդ ճանապարհի վրա մեր օրերին մեծ դեր է կատարում Հայաստանի Մշակութային Կապի Կոմիտեն, հուրախություն արտասահմանի ողջ հայության:

Մեր ազգի ապագայի համար կենսական կարևորություն ունի հայրենիք-սփյուռք միասնության պահպանումը և էլ ավելի ամրապնդումը:

Այդ միասնության գլխավոր պայմաններից է նաև Հայ Առաքելական Եկեղեցու միության պահպանումը: Միասնություն՝ Ամենայն Հայոց Սուրբ Էջմիածնով, որ հիմնաքարն է մեր ազգային միասնության, ահա մոտ տասնյոթ դարերից ի վեր: Այս տեսակետից մեր ուրախությունը, սրտի ցավոք, ավերողական չէ: Ինչ-ինչ կուսակցական նկատումներով 1956-ից սկսյալ ծայր տվեց մի աննախընթաց պառակտում արտասահմանի Հայ Եկեղեցու ծոցում: Հետևանքը եղավ այն, որ կադևոր եկեղեցական համայնքներ արհեստականորեն բաժանվեցին Սուրբ Էջմիածնից միանալով Անթիպատի Աթոռին, կարգախոս ունենալով՝ «Էջմիածինը Հայաստանի համար, Անթիպատը արտասահմանի հայության համար»: Այս աղետալի կարգախոսը ամբողջապես ժխտումն էր հայրենիք-սփյուռք միասնության: Այս պառակտյալ վիճակը շարունակվում է մինչև այսօր: Հայրենիք-սփյուռք միասնության ահրապանդման, հայրենիք-սփյուռք մշակութային կապերի սերտացման տեսակետից Հայ Եկեղեցու ներքին միության վերականգնումը բախտորոշ կարևորություն ունի, որովհետև արտասահմանի հայ կյանքի միջնաբերդը Հայ Առաքելական Եկեղեցին է, ոչ միայն կրոնական, այլև մեծ չափով՝ կրթական, մշակութային, սփյուռքահայ երիտասարդության կազմակերպությունների գործունեության տեսակետից:

Մեծ հաղթանակի ոգեկոչման այս օրերին, մաղթում եմ, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և Սփյուռքահայ Կոմիտեն նոր եռանդով, նոր լավատեսությամբ լծվեն առավել լայնածավալ աշխատանքի, էլ ավելի հյորացնելու և բերմանավոր դարձնելու հայրենիք-սփյուռք կապերը:

Տեր Աստված, տուր աշխարհիս խաղաղություն, ազգիս հայոց սեր, միություն: Համայն հայության սեր և միություն՝ Սուրբ Էջմիածնով, սեր և միություն՝ մայր Հայրենիքով, հանուն մայր Հայրենիքի:

Ապա ամերիկահայ հայտնի քանդակագործ, Մարտիրոս Սարյանի անվան մրցանակի դափնեկիր, նկարիչ Խորեն Տեր-Հարությունը մեծ կրքով խոսեց խաղաղության պաշտպանության գործում արվեստագետի ունեցած դերի մասին:


«Ես առաջին ցեղասպանության զոհերն եմ: Երբեք չեմ մոռնար իմ բյուրավոր հայրենակիցներու, անմեղ մանուկներու և ծերունիներու սպանողը: Երբե՛ք: Եվ այն օրեն, որ վրձին վերցուցի ձեռքս, և այն օրեն, որ սկսա փայտեն ու քարեն աղձաններ կերտել, ես երդվեցա արվեստով պայքարիլ չարի դեմ»:


Հանդիսավոր պլենումում ելույթներ ունեցան նաև Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Էդ. Միրզոյանը, դիմադրական ջարժման մասնակից, Միսաք Մանուշյանի մարտական ընկեր ֆրանսահայ Արսեն Չաքրյանը, ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը, լիբանանահայ հասարակական գործիչ Պողոս Թութունջյանը և Երեվանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի սփյուռքահայ ուսանող Ավետիս Սափսպյանը:

Վերջում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահի տեղակալ Սպարտակ Բաղդասարյանը հրապարակեց հանդիսավոր պլենումի ուղերձը՝ ուղղված սփյուռքահայությանը:

Պլենումի հանդիսավոր մասից հետո տղրվեց ճոխ համերգ:

ԹՂԹԱԿԻՅ





ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

«Ծառայի իմաստնոյ՝ յաշուեսցին գործք իւր եւ ուղղեսցին ճանապարհք նորա: Օրէնք իմաստնոյ աղբիւր կենաց: Իմաստութիւն բարի՝ տայ շնորհս»:

(Առակաց ԺԳ 13—15)

Նորից աշխուժություն և ուրախություն է հոգևոր ճեմարանում, նորից տոնական մթնոլորտ է ճեմարանի հանդիսությունների դահլիճում: Սակայն Ե լսարանի սարկավագների համար պահը հուպումնալից է, քանի որ նըրանք ուսանողական իրենց վերջին վայրկյաններն են ապրում իրենց համար այնքան սիրելի և հարապատ ճեմարանի հարկի տակ:

Հունիսի 7-ին, առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում հոգևոր ճեմարանի 1984—1985 ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունը:

Հանդիսությանը ներկա են Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, սփյուռքահայ հյուրեր և այլ հրավիրյալներ:

Հանդիսության նախագահության սեղանի շուրջ, Վեհափառ Հայրապետի կողքին, տեղ են գրավել ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ս. Տիրան արքեպս. Ներսիսյանը, Ս. Սիոն արքեպս. Մանուկյանը, Ս. Հուսիկ արքեպս. Սանթրոյանը, Ս. Արսեն եպս. Բերբերյանը և Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Գարեգին եպս. Ներսիսյանը:

Տերունական աղոթքի և Հայաստանի պետական հիմնի կատարումով սկսվում է հանդիսությունը: Այա ճեմարանի սաները կատարում են ճեմարանի քայլերգը:

Այնուհետև հոգևոր ճեմարանի փոխտեսուչ

Ս. Հայկազուն վրդ. Նաջարյանը հանդես է գալիս բացման հետևյալ խոսքով:

«Հասել է պահը 1984—85 ուսումնական տարեշրջանը ընդհանուր հայտարարի բերելու և հանձնելու այն պատմությանը: Մեր Տիրոջ՝ Հիսուսի վերջին խոսքերն իր աշակերտներին եղան՝ «Գնացե՛ք այսուհետև և աշակերտեցե՛ք չամենայն հեթանոսս»: Բայց աշակերտները, նախքան իրենց առաքելությանն ուղարկվելը, ուսանեցին մեր Տիրոջ խոսքերով և նրա կենդանի օրինակով:

Մարդու կյանքը իսկապես խոտի կնմանվի, եթե տրված ժամանակը չիմաստավորվի, տրված շնորհները չօգտագործվեն: Ամեն մի անհատ ունի ի վերուստ տրված մի շնորհ, և ամենամեծ մեղքը այդ շնորհի խեղաթյուրումն է կամ վատնումը:

Այսօր էլ մենք, հոգևոր ճեմարանի հարկի տակ, մեր Տիրոջ օրինակով աշխատում ենք պատրաստել երիտասարդ՝ հոգևորականներ, որոնք ապագային պիտի կարողանան իրենց ստացած հոգևոր և մտավոր լույսը բաշխել մեր ժողովրդի պալկներին: Հոգևոր ճեմարանի, ուսուցչական կազմի համար այս տարեշրջանը եղավ փորձառության ևս մի շրջան, իսկ ուսանողներինը՝ ամբարելու մի շրջան: Վստահ ենք, թե մեր ուսանողներից ամենաթույլն իսկ ինչ-որ մի բան կարողացավ ավելացնել այն հիմքին, որի վրա ապագային կանգնելու է այն փառավոր Դառույցը, որ մենք կոչում ենք հայ հոգևորական:

Վեհափառ Տեր, այս հակիրճ խոսքերից հետո թույլ տվեք 1984—85 ուսումնական տարվա ամսավերջի հանդեսը համարել բացված»։ Փոխտեսչի բացման խոսքից հետո ձեռնարանի սաները հանդես են գալիս գեղարվեստական հետաքրքիր ծրագրով, որի ընթացքում հնչում են «Էջմիածին» և «Որք վարդաբեցին» շարականները։

Վ. Դավթյանի «Իմ մայրենի, իմ բարբառ» և Վ. Թեքեյանի «Եկեղեցին Հայկական» բանաստեղծությունները արտասանում են Ռազմիկ Իսախանյանը (Դ լսարան) և Սարգիս սրկ. Մելքոնյանը (Ե լսարան)։ Իսկ դաջնամուրային կատարումներով հանդես են գալիս ուսանողներ Հովակիմ Բիլեջյանն ու Սամվել Հովհաննիսյանը։ Նրանք կատարում են Ա. Խաչատրյանի «Տոկկատա» և Կոմիտաս վարդապետի «Գարուն ա» ստեղծագործությունները։

Գեղարվեստական ծրագիրն ավարտվում է եր. Հովհաննիսյանի «Հայրենիք» և Ա. Բաբաջանյանի «Տղերքը, որոնք չեկան» երգերով, որ կատարում է ձեռնարանի երգչախումբը։

Այնուհետև ուսանողության անունից շնորհակալական հետևյալ խոսքով հանդես է գալիս Ե լսարանի ուսանող Սամվել սրկ. Դանիելյանը։

«Այսօր մեզ համար նշանակալից օր է։ Հրաժեշտ ենք տալու մեր սիրելի հոգևոր ձեռնարանին, դասախոսական կազմին և մեր եղբայր ուսանողներին։ Ուրախ ենք, որ բարեհաջող ավարտեցինք հոգևոր ձեռնարանի ուսման հնգամյա դասընթացը և այսուհետև սկըսելու ենք ծառայել մեր Եկեղեցուն և ժողովրդին։ Ծառայելու ենք այն Եկեղեցուն, որը տարիներ շարունակ գոյգոյրել է մեզ, սնել ու դաստիարակել հարապատ մոր նման։ Հուզված ենք, որ բաժանվելու ենք մեր շատ սիրելի հոգևոր ձեռնարանից ու դասախոսներից, որոնք անձանձրությամբ ջանքել են մեզ հոգևոր սնունդ։

Այս առթիվ որդիական անխառն պգացումներով մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում մեր սիրելի դասախոսներին՝ գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի։ Նաև Հուսիկ արքեպս. Սանթրոյանին, որը եկեղեցու մեջ եղավ ծիսական արարողությունների մեր ուսուցիչը։ Հնորհակալական խոսք ունենք նաև հոգևոր ձեռնարանի տեսչությանը՝ ի դեմս հոգևոր ձեռնարանի տեսուչ Տ. Եսնիկ քնն. Պետրոսյանի և փոխտեսուչ Տ. Հայկապետյանի։ Նաջարյանի։

Սիրելի և անսոռանալի դասախոսներ, մենք անչափ շնորհակալ ենք ձեզանից։ Այն ամեն լավը, որ կա մեր մեջ, մենք ձեզ ենք պարտական։ Հիշում ենք, երբ առաջին անգամ խնդրեցիք այս սուրբ հաստատություն, դուք

հայրաբար ընդունեցիք և քանքարաթագույց չեղաք մեր հանդեպ, մեզ տվեցիք ձեր մտքի լույսը, ձեր հոգու շերտությունը՝ մեզ պիտանի և եռանդուն անձնավորություններ դարձնելու ավելի ակնկալությամբ։ Մեր հոգու և մտքի խոսքն անդաստաններն ակոսեցիք գիտության արորներով, սերմանեցիք բարի սերմեր, որոնք պարարտ հող գտնելով՝ արմատ գցեցին և բերք տվեցին։ Մեր հետագա կյանքը իմաստավոր դարձնելու համար դուք մեզ ներշնչեցիք պաշտամունքը վեհ գաղափարների՝ հայրենիք, Եկեղեցի, ժողովուրդ։ Դուք վստահություն ներշնչեցիք մեզ, որպեսզի մենք հետագայում չհուսահատվենք և անընկուն պայքար մղենք ամեն մի դժվարության և վատի դեմ, ձգտենք կյանքի բարձունքներին՝ վեհ իդեալների։

Մենք շատ ուրախ ենք, որ սովորեցինք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ձեռնարանում ու ավարտեցինք Վեհափառ Հայրապետի հայրական հոգատարության ներքո։ Մենք վստահեցնում ենք, որ մեր կյանքի ընթացքում կանենք ամեն ինչ հանուն այս հաստատության պայծառության ու ծաղկման։

Վեհափառ Տեր,

Այս տարի լրանում է հոգևոր ձեռնարանի վերաբացման 40 տարին։ 30 երկարածիգ տարիներ Դուք եք եղել այս հաստատության հովանավորն ու ոգեշնչողը։ Ձեր օրհնությամբ այդ տարիներին մեզ նման բազում երիտասարդներ լծվել են հայ ազգին և Եկեղեցուն ծառայելու սրբապան գործին։ Ցանկանում ենք, որ դեռևս երկար տարիներ Դուք ոգեշնչեք և սրբապան ծառայության կոչվեք բազում երիտասարդների։

Վեհափառ Տեր, թույլ տվեք համբուրել Ձեր Սուրբ Աջը՝ մաղթելով Ձերդ Սրբությանը քաջամոռջություն և երկար տարիների բեղմնավոր գործունեություն՝ ի պայծառություն հայ ազգի և Հայաստանյայց Եկեղեցու։

Այնուհետև հաշվետու վեկուցումով հանդես է գալիս հոգևոր ձեռնարանի տեսուչ Տ. Եսնիկ քնն. Պետրոսյանը։

«Վեհափառ Տեր, հարգարժան անդամք Գերագույն Հոգևոր Խորհրդի, գերաշնորհ սրբապան հայրեր, հոգեշնչորհ և արժանապատիվ հայրեր, սիրելի դասախոսներ, սաներ և ներկաներ։

Աստուծո ողորմությամբ և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնությամբ իր լուսին հասավ հոգևոր ձեռնարանի ևս մեկ ուսումնական տարի։

Մարդկությունը սահման չունեցող ժամանակը սահմանել ու տրոհել է հատված-միավորների՝ իբրև տարի, ամիս, օր, ժամ և վայրկյան։ Եվ այս բաժանումը կատարված է այնքան ճշտությամբ, որ օրը, ժամը ամենուր և միշտ նույնն է, ոչ մի րոպե ավել կամ պա-

կաս: Այս առումով էլ ժամանակի բաժանումը չափազանց առարկայական է: Սակայն մարդու ենթակայական պզտոգոյության մեջ հաճախ են լինում պահեր, երբ մի քանի րոպեները տարիներ են թվում կամ, ընդհակառակը, երբ օրերը թռչում են րոպենների նման: Ավելորդ է ջեշտել, որ այն լինում է տխրության կամ ուրախության պահերին՝ համապատասխանաբար:

Կարծում եմ մեզանից շատերի մոտ այն պզտոգումն է տիրում այժմ, թե դեռ երեկ էր, երբ հնչեց 1984—1985 ուս. տարվա անդրանիկ պնզը: Իրապես, որ այս տարվա օրերը թռան վայրկյանների պես, ամիսները՝ օրերի: Հետևաբար սխալված չենք լինի, եթե հաստատենք, որ անցնող ուսումնական տարին մեզ համար եղավ արդյունավետ, օգտակար, ուրախ մի ժամանակաշրջան:

Արդեն 40 տարի է, ինչ վերաբացվել է հոգևոր ճեմարանը Մայր Աթոռում: Այդ 40 տարիների մեծագույն մասը՝ 30 տարին, ճեմարանը գտնվել է Նորին Սրբության ուղադրության կենտրոնում: ճեմարանի բարօրության համար արված Նորին Սրբության խորհուրդներն ու առաջարկությունները միշտ էլ եղել և մնում են տեսչության գործունեության ամենակարևոր ուղենիշը: Ահա այս սկզբունքով է, որ այս տարի ևս հոգևոր ճեմարանի տեսչությունը և դասախոսական կազմը շարունակեց իր պատասխանատու աշխատանքը հոգևոր ճեմարանում, Ս. Էջմիածնի կամարների տակ:

ՏԵՍՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Հոգևոր ճեմարանի տեսչական կազմը այս տարի հետևյալն էր.

1. Տեսուչ—Տ. Եսնիկ քին. Պետրոսյան
2. Փոխտեսուչ—Տ. Հայկապուն վրդ. Նաշարյան
3. Քարտուղար—Տ. Հուսիկ քին. Լազարյան
4. Վերակացուներ—Աշոտ սրկ. Թովմասյան

Վաչագան Հովհաննիսյան
Լևոն Պետրոսյան

5. Գրադարանավար—Հենրիկ Բալյան

ԴԱՍԱՆՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Ինչպես 29 տարի շարունակ, այս տարի ևս հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը գլխավորեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Վեհափառ Հայրապետի կողքին իրենց դասախոսական աշխատանքները շարունակեցին Հայկապուն վրդ. Նաշարյանը, Եսնիկ քին. Պետրոսյանը, Արտակ քին. Սիմոնյանը, Եղիշե քին. Բաղդասյանը, Հուսիկ քին. Լազարյանը, Հայկ սրկ. Ֆռունջ-

յանը, պարոնայք Պարզև Շախբալյանը, Սիմոն Գրքաշարյանը, Երվանդ Մելքոնյանը, Պետրոս Բեդիրյանը, Արտաշես Մաթևոսյանը, Խորեն Պալանը, Երվանդ Գրիգորյանը և Նորիկ Գրիգորյանը: Դասախոսական կազմում տեղի ունեցած որոշ փոփոխությունների բերումով այս տարի հոգևոր ճեմարան դասախոսելու հրավիրվեցին Եղիշե քին. Սարգսյանը (Հայ Եկեղեցու պատմություն), Մկրտիչ սրկ. Ներսիսյանը (Հին Կտակարան), պարոնայք Արմեն Հովսեփյանը (անգլերեն) և Կոմիտաս Քեշիշյանը (երաժշտագիտություն):

Տեսչությունը հաճելի պարտականություն է պգում շնորհակալություն հայտնելու վերոհիշյալ բոլոր դասախոսներին՝ իրենց նվիրյալ աշխատանքի համար:

ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր ճեմարանը 1984—1985 ուսումնական տարին սկսել է 41 ուսանողներով, որոնցից 13-ը՝ նոր ընդունվածներ: Տարվա ընթացքում 7 ուսանող հեռացել է այս կամ այն պատճառով, իսկ 6 ուսանողներ վերադարձել են բանակից: Տարեշրջանը ճեմարանը փակում է 40 ուսանողներով, որոնք ըստ լսարանների բաշխված են հետևյալ կերպ.

Ե լսարան	7 ուսանող
Դ լսարան	7 ուսանող
Գ լսարան	9 ուսանող
Ա և Բ միացյալ լսարան	15 ուսանող
Ազատ ունկնդիր	2 ուսանող

Ուսանողներից 11-ը օտարազգիներն են՝ Սիրիայից, Լիբանանից, Իրաքից, Հնդկաստանից, Արգենտինայից և Ֆրանսիայից:

Այս ուսումնական տարում ունենք 7 շրջանավարտներ: Անցյալ տարվա 9 շրջանավարտներից 5-ը պաշտպանել են իրենց ավարտաճառերը:

Այս ուսումնական տարում ևս հոգևոր ճեմարանը կատարեց իր առաջնահերթ խնդիրը, այն է՝ սպասավորներ պատրաստել Հայ Եկեղեցու համար: 1984 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնին, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ Հուսիկ արքեպիսկոպոս Սանթրոյանի Ե լսարանի 7 ուսանողներ արժանացան սարկավագական ձեռնադրության, Դ լսարանի 7 ուսանողների շնորհվեց ուրարակության, իսկ Ա—Գ լսարանների 13 ուսանողների՝ դպրության աստիճաններ:

Տեսչությունն ու դասախոսական կազմը հուսա ունեն, որ նրանց կիսնեն իրենց կոչմանն արժանի, գիտակից և նվիրված սպասավորները Հայ Եկեղեցու:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔ

Հոգևոր ձեմարանի տեսչությունը և դասախոսական կազմը այս տարի ևս շարունակեց իր աշխատանքները հոգևոր ձեմարանը կայուն և բարձր մակարդակի ուսումնական ծրագրերով ու դասագրքերով օժտելու համար:

Անցյալ ուսումնական տարվա վերջին և այս ուսումնական տարվա սկզբին կազմվեցին նոր ուսումնական ծրագրեր 8 առարկաների համար: Արդեն այսօր կարող ենք նշել, որ կազմվել և փորձնական դասավանդման են դրվել այդ ծրագրերին համապատասխան դասագրքեր: Ընդհանուր գրականության հումա-հոռմեական գրականության բաժնի (դասախոս՝ Ս. Գրքաշարյան) և Վերածննդի բաժնի (դասախոս՝ Պ. Շահբալյան), առաջին և երկրորդ տարվա գրաբարի (դասախոս՝ Պ. Բեդիրյան), Հայ ժողովրդի պատմության Ա և Բ մասերը (դասախոս՝ Ս. Գրքաշարյան) վերոհիշյալ ծրագրերից անկախ՝ Շարականագիտության և Ժամակարգության (դասախոս՝ Խ. Պալյան), Չեռագրագիտության (դասախոս՝ Ա. Մաթևոսյան):

Հոգևոր ձեմարանի պատմության մեջ առաջին անգամ այս տարի ուսանողներին հանձնարարվեց փոքրիկ ուսումնամիություններ գրելու աշխատանք: Այդ աշխատանքների նպատակն էր սովորեցնել ուսանողներին ինքնուրույն աշխատել: Ճիշտ է, ամեն ինչ չէ, որ հարթ ընթացավ, սակայն արդյունքները գոհացուցիչ են: Փորձը ցույց տվեց, որ ուսանողների մեջ սեր և պատրաստակամություն կա: Ավելին, ուսանողները մեծ սիրով ու հետաքրքրությամբ այնպիսի շարադրություններ գրեցին, որ որոշ մասը արժանի է տպագրության, անշուշտ որոշ խմբագրական աշխատանքից հետո:

Ուսանողների իմացությունը քույր եկեղեցիների մասին թերի է, քանի որ ձեմարանում չկա մի առարկա, որը ծանոթացնի նրանց քույր եկեղեցիների պատմությանը, ծիսական և դավանաբանական առանձնահատկություններին ու այսօրվա վիճակին: Այս բացը լրացնելու համար, մենք Լենինգրադի հոգևոր ակադեմիայից հրավիրել ենք հայր Ինոկենտիին, որ մեկ ամիս կարդաց դասախոսությունների շարք Օրթոդոքս եկեղեցու և մասնավորապես Ռուս եկեղեցու մասին:

Ամեն տարվա նման, այս տարի ևս կազմակերպվել են հանդիսություններ Նոր Տարվա և Վարդանանց հիշատակի առիթներով: Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների մասին երեք դասախոսություններ են եղել՝ գումամոր անշարժ պատկերների ցուցադրմամբ: Այդ դասախոսություն-

ները վարել են Թիերի ամուսինները, լուսանկարիչ Հովհաննես Շիրազը և պարոն Շահնապարյանը:

Այս տարի ուսանողները դիտել են թատերական, օպերային ներկայացումներ, բալետի, կինոֆիլմեր: Պտույտներ են կազմակերպվել դեպի Նորավանք և Գլաձոր, իսկ ձմռանը 4 օր ուսանողները հանգստացել են Ծաղկաձորում:

Իսկ այժմ, Վեհափառ Տեր, թույլ տվեք հոգևոր ձեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության անունից ջերմապես շնորհակալություն հայտնել Ձերդ Սրբությանը, այն հոգատար վերաբերմունքի և հայրական խնամքի համար, որ տաժում է Ձերդ Սրբությունը հոգևոր ձեմարանի նկատմամբ:

Շնորհակալություն եմ հայտնում նաև Մայր Աթոռի միաբանությանն ու պաշտոնեությանը, իրենց ցուցաբերած վանական օժանդակությունների համար:

Այժմ թույլ տվեք, Վեհափառ Տեր, Ձերդ Սրբությանը ներկայացնելու առաջադեմ ուսանողների անունները՝ ստանալու համար իրենց տրվելիք նվերները:

Ե լսարան—4,36 միջինով առաջինն է Սամվել սրկ. Կճոյանը

4,05 միջինով երկրորդն է

Հայկ սրկ. Չուլջանը

Դ լսարան—4,65 միջինով առաջինն է

Ռազմիկ Իսախանյանը

4,43 միջինով երկրորդն է

Գևորգ Մկրտչյանը

Գ լսարան—4,86 միջինով առաջինն է

Գևորգ Աջապահյանը

4,72 միջինով երկրորդն է

Սամվել Հովհաննիսյանը

Ա և Բ միացյալ լսարան—4,42 միջինով

առաջինն է Տիգրան Աբելյանը

4,12 միջինով երկրորդ մըր-

ցանակ են ստացել երեք ուսանողներ՝ Սարգիս Դանդիլյանը, Հենրիկ Մանուկյանը և Մուրադ Սողոմոնյանը:

«Կոմիտաս վարդապետի» երկրորդ կարգի մրցանակ՝

Ե լսարան—Սամվել սրկ. Կճոյան—Եկեղեցական երաժշտության մեջ ցուցաբերած առաջադիմության համար

Դ լսարան—Հովակիմ Քիլեջյան—Դաշնամուրի լավ կատարման համար:

Տեսչությունը ցանկանում է պարգևատրել նաև լավագույն շարադրություններ պատրաստած ուսանողներին:

Ե լսարանից Սամվել սրկ. Կճոյանին—«Հաղորդության ս. Բաժակի մեջ Հայ եկեղեցու ջուր չխառնելու սովորությունը»:

Դ լսարանից Գևորգ Մկրտչյանին—«Վերին Նորավանքի դպրոցը»:

Գ լսարանից Սամվել Հովհաննիսյանին— «Հերմասի «Հովիվ»-ը»:

Եկեղեցասիրության համար ցանկանում ենք պարգևատրել Բ լսարանի ուսանող Մուրադ Սողոմոնյանին, իսկ կարգապահության և օրինակելի վարքի համար՝ Բ լսարանի ուսանող Սարգիս Ղանդիսյանին»:

Նվերներն ուսանողներին հանձնվելուց հետո, Տ. Եկնիկ քին: Պետրոսյանը հրավիրում է Վեհափառ Հայրապետին՝ տալու իր օրհնությունը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ
ԽՈՍՔԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ
ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍԻՆ
(7 հունիսի 1985 թ.)

Արդեն 30 տարի է, որ ես ներկա եմ լինում մեր հոգևոր ճեմարանի փակման հանդեսներին: Քիչ առաջ խորհրդածություններ եղան ժամանակի մասին: Երբ ես լսում էի այդ խորհրդածությունները, մտածում էի, թե դրանք որոշ չափով վերաբերում են նաև ինձ, որովհետև ես էլ չգիտեմ, թե այդ երեսուն տարիները ինչպես արագ անցան:

Այսօր նույն ուրախությամբ գալիս եմ այստեղ իմ հայրապետական օրհնությունը բերելու այս հոգևոր կրթական հաստատությանը՝ մեր ճեմարանին, նրա տեսչությանը և դասախոսական կազմին: Գնահատանքի պգացումներով եմ գալիս, որովհետև հետեված լինելով քիչ-շատ գիտեմ, տեղյակ եմ, որ իրոք լուրջ, կազմակերպված և հետևողական աշխատանք է կատարված և՛ տեսչության, և՛ բոլոր դասախոսների կողմից: Եվ արդյունքները, կխորհիմ, թե գոհացուցիչ են: Նախորդ տարիներին, նման առիթներով, արտահայտել եմ բաղձանքը, որ՝ նախանձախնդրությունն ունենանք մեր արդի հոգևոր ճեմարանը հասցնելու այն բարձունքին, որի վրա գտնվեց այս հաստատությունը մինչև առաջին համաշխարհային պատերազմ՝ Գևորգյան ճեմարանի շրջանում: Միշտ էլ բաղձանքն եմ ունեցել, որ նաև մեր օրերին կարողանանք մեր Եկեղեցու համար պատրաստել և հասցնել իրապես արժանավոր հոգևորականներ, որոնք ունենան գիտական մակարդակ, խորունկ քրիստոնեական հավատք և գիտակցությունը իրենց առաքելության՝ մեր ժողովրդի կյանքում: Եվ բարեբախտաբար որոշ հուսադրիչ, շոշափելի իրական տվյալներ ունենք ասելու, որ մենք հետզհետե մոտենում ենք հասնելու այդ բարձունքին:

Իմ խոսքը առանձնապես ուսանողներին ուղղվելով՝ ուզում եմ ասել, ավելի ճիշտ՝ հարց տալ. արդյոք մտածե՞լ եք, թե ինչ իմաստ ունի, որ մեր հոգևոր ճեմարանի փակման

հանդեպ պոզադիպում է հունիսյան այս շաբաթին, երբ մեր Եկեղեցին ոգեկոչում և փառաբանում է հիշատակը Ս. Հովսիսիանց, Ս. Գալանյանց, Ս. Շողակաթի և Ս. Գրիգոր Լուսավորչի: Այս շաբաթվա մեջ մի տեսակ, ես պիտի ասեի՝ խորհրդապաշտաբար կրկնվում է մոտ երեք հարյուր տարվա քրիստոնեական կյանքի նախապատրաստության շրջանը պատմական Հայաստանի տարածքի վրա: Ինչպես գիտեք, 301 թ. քրիստոնեությունը Հայաստանում, ճիշտ է, պաշտոնապես հայտարարվեց, դարձավ պետական կրոն, և մեր Եկեղեցին ու Մայր Աթոռը հիմնվեց Ս. Գրիգոր Լուսավորչի երանելի օրերին, սակայն մակերեսային մտածելակերպ պիտի լիներ և ոչ պատմական կարծել, թե 301 թվականին հայ ժողովուրդը միանգամից հոգեպես պատրաստ եղավ ընդունելու Քրիստոսի լուսավոր ուսմունքը: Անշուշտ այդպես չի եղել ո՛չ մեր ժողովրդի պարագային և ո՛չ էլ որևէ ժողովրդի քրիստոնեացման պատմության մեջ: Համաձայն մեր աւանդության, սերմերը ցանվեցին նույնիսկ առաքելական դարուց սկսյալ. հետագա դարերին կազմվեցին փոքրիկ համայնքներ. հիշվում են նույնիսկ եպիսկոպոսներ: Եղել են, այո, այդ համայնքներից հավատացյալներ, որոնցից ոմանք հալածվել են և ոմանք՝ նահատակվել: Ահա թե ինչու ասում եմ, որ այս շաբաթը խոացված կերպով մեզ է ներկայացնում այդ երեք հարյուր տարվա նախաքրիստոնեական Հայաստանի նախապատրաստման շրջանը, երբ կամաց-կամաց մեր ժողովրդի հոգին շաղախվեց Քրիստոսի հավատքի լույսով:

Այստեղ կամենում եմ բերել վկայությունը Ալեքսանդրիայում Բ դարի մի քրիստոնյա հեղինակի, որը վիճում էր հույն հեթանոս փիլիսոփա Դիոկնետի հետ: Դիոկնետը հարց է տալիս նրան, թե ինչո՞ւ Հիսուս այդքան ուշացավ աշխարհ գալու: «Եթե, ինչպես դու ես ասում, նա եկավ մարդկությունը փրկելու, ապա ինչո՞ւ այդքան ուշ եկավ»: Քրիստոնյա անծանոթ հեղինակը պատասխանում է. «Հիսուս աշխարհ իջավ այն ժամանակ, երբ մարդկությունը հասավ գիտակցությանը իր անպորտության (իր անարդարության) և գիտակցությանը փրկվելու անհրաժեշտության: Այն ժամանակ Աստված ցույց տվեց իր պորտությունը և բարությունը»:

Շատ հետաքրքրական վկայություն է: Այս դատողությունը վերաբերում է նաև մեր ժողովրդին: Եվ այս շաբաթը իր տոներով խորհրդանշում է այս ճշմարտությունը:

Այս տարեվերջին դուք էլ մի տեսակ նույն հոգեկան վիճակի մեջ եք: Դուք էլ քայլ առ քայլ պատրաստվում եք, որպեսզի Քրիստոսի լույսը հետզհետե թափանցի ձեր հոգի-


ների մեջ, որպեսզի ձեր սովորածը չլինի սովորական ուսմունք, ինչպես գիտական գաղափարն ուսմունքներ, որոնց ճշմարտությունները երբեմն վիճելի են, երբեմն՝ փոփոխելի: Այն ճշմարտությունները, որոնք Ս. Ավետարանից են գալիս, հիմնական և մնայուն ճշմարտություններ են մարդկային կյանքում, որոնք չեն փոփոխվել ու չեն փոփոխվի իրենց հիմնական դրույթների մեջ: Այդ բանում դուք պետք է համոզված լինեք: Նույնիսկ եթե տարակարծություններ կան ձեր մեջ, դա նշանակություն չունի, տարակարծություններ ունենալը նույնիսկ լավ նշան է, որպեսզի հետզհետե այդ տարակարծությունները հաղթահարելով հասնեք վերջնական համոզումի, որը գրանիտյա ամրությամբ հաստատվի ձեր հոգում, և դուք համոզվեք, որ իրոք Քրիստոսի Ավետարանի ուսմունքը հավիտենական ճշմարտություններ է պարունակում, միշտ այժմեական՝ երեկ, այսօր և հավիտյան:


Այս մի քանի խորհրդածությունները և մաղթանքները ցանկացա ձեզ բերել սիրելի սաներ: Ուրախ եմ, որ գեղարվեստական այս հաճելի ծրագիրն ի գործ դրեցիք, իսկ ուսման մեջ լավ արդյունքների հասաք և պարգևներ էլ ստացաք: Բոլորդ էլ իմ առջև ներկայանում եք իբրև արժեքներ, և մաղթում եմ, որ Աստված պորացնի ձեզ մարմնապես, հոգեպես, իմացապես և այս տարվա ամառային արձակուրդից հետո վերադառնաք Մայր Աթոռ, հոգևոր ճեմարան՝ շարունակելու համար ձեր հոգևոր-իմացական պատրաստության նոր շրջանը:

Մեր օրհնությունը ձեզ բոլորիդ:

Ամալերջի հանդիսությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

ՀԱՂՈՒ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ





Կ. ՊՈԼՍԻ ՀՈՒՆԱՑ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԷԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի հունիսի 13-ին, միօրյա պաշտոնական այցով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Ժնևի Էկումենիկ կենտրոնում Կ. Պոլսի հունաց տիեզերական պատրիարքության մշտական ներկայացուցիչ և Պատրիարքի նվիրակ, Ժնևի հույն համայնքի միտրոպոլիտ Դամասկինոսը՝ ընկերակցությամբ պրոֆ. Պետրոս Պերտիկիսի:

Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում հյուրերին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Մայր տաճարի լուսաբարապետ Ս. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, հոգևոր ձեմարանի փոխտեսուչ Ս. Հայկապուն վրդ. Նաջարյանը և Հակոբ սրկ. Մարտիրոսյանը:

Հունիսի 14-ին, Մայր տաճարում առավոտյան ժամերգությանը մասնակցելուց հետո, հյուրերը առաջնորդվեցին Վեհարան և ընդունելությունների սրահում հանդիպում ունեցան Նորին Սրբություն Վեհափառ Հայրապետի հետ:

Հանդիպման ընթացքում միտրոպոլիտ Դամասկինոսը պաշտոնապես Հայոց Հայրապետին ներկայացրեց Ս. Դիմիտրիոս Պատրիարքի հրավերը՝ մասնակցելու Արևելյան ուղղափառ հին Եկեղեցիների և օրթոդոքս Եկեղեցիների ներկայացուցիչների միջև տեղի ունենալիք երկխոսությանը, որը նախատեսվում է անցկացնել սույն թվականի հոկտեմբերի վերջին Ժնևում, Տիեզերա-

կան պատրիարքության կենտրոն Շամբեպիում:

Ամենայն Հայոց կաթողիկոսը սկսբունքով իր համաձայնությունը հայտնեց ներկայացված առաջարկությանը:

Հանդիպմանը, որն անցավ ջերմ, բարեկամական մթնոլորտում, ներկա էին Ս. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը և Ս. Հայկապուն վրդ. Նաջարյանը:

Հանդիպումից հետո հյուրերը Մայր Աթոռի թանգարաններում հայ մշակույթի հոգեվոր հարստություններին ու գանձերին ծանոթանալուց հետո մեկնեցին Երևան: Նրանք եղան Ս. Սարգիս եկեղեցում, Ծիծեռնակաբերդում, ապա այցելեցին Ս. Գեղարդա վանք:


Այնուհետև «Հայկաջեն» ամառանոցում ի պատիվ հյուրերի տրվեց ճաշերույթ, որն անցավ ջերմ, եղբայրական մթնոլորտում: Գալուցից հետո ներկա էին Վեհափառ Հայրապետն ու Մայր Աթոռի միաբանությունը:

Սույն օրը, երեկոյան ժամը 21.30-ին, Երեվանի «Զվարթնոց» օդանավակայանից հյուրերը մեկնեցին Մոսկվա: Հյուրերին ճանապարհում էին Մայր տաճարի լուսաբարապետ Ս. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը և հոգևոր ձեմարանի տեսուչ Ս. Եզնիկ քին. Պետրոսյանը:





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ Կ. ՊՈԼՍԻ ՀՈՒՆԱՅ ՏԻԵՋԵՐԱԿԱՆ
 ՊԱՏՐԻԱՐԺԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻԶՆԵՐՈՎ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՎ,
 ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌՋԵՎ
 (14 ՀՈՒՆԻՍԻ 1985 Թ.)



ՍՈՒՐԲ ԱԼԲԱՆՁ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՒՆՏԱՎՈՐՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի մայիսի 27-ին, երկօրյա այցով, Մայր Աթոռ ժամանեցին Անգլիայի Սուրբ Ալբանյ եկեղեցու շուրջ 30 ուխտավորներ՝ Հերդֆորդի եպիսկոպոս Ռիչարդ Ռուդի գլխավորությամբ:

Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում հարգարժան հյուրերին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Ս. Հայկապուն վրդ. Նաջարյանը և Ստեփան սարկավագ Կարապետյանը:

Մայիսի 28-ին, Վեհարանի ընդունելությունների սրահում, հյուրերին ընդունեց և ջերմորեն ողջունեց Ս. Ս. Վապգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը: Ընդունելությանը ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Ս. Սիոն արքեպս. Մանուկյանը և Մայր Աթոռի դիվանապետ Ս. Ներսես եպս. Պոպապայանը:

Իր ողջույնի խոսքում Վեհափառ Հայրապետը նշեց Հայ Առաքելական և Անգլիկան եկեղեցիների միջև գոյություն ունեցող պատմական բարեկամությունը, եղբայրական սերը և փոխադարձ հարգանքը: Հայոց Հայրապետը մաղթեց նաև, որ «բոլոր քույր եկեղեցիները պորանան ու լուսավորվեն Աստուծո հոգով, ավելի պորանան միջեկեղեցական կապերը, միատեղ աղոթելու և միատեղ գործելու ոգին, որը հրամայական պահանջ է դարձել մեր օրերին, քանի որ աշխարհը ալեկոծ է միջուկային պատերազմի սպառնալիքով, բազում անարդարություններով, վատառնող կրքերով ու անսանձ թշնամանքներով»:

Ընդունելությունից հետո հյուրերը մեծ հե-

տաքորթությամբ ծանոթացան Մայրավանքի տեսարժան վայրերին. այցելեցին «Ալեք և Մարի Մանուկյան գանձատուն», Մայր տաճար, հոգևոր ճեմարան և Վեհարան:

Ի պատիվ հյուրերի, Ս. Էջմիածնի միաբանական սեղանատանը տրվեց ճաշկերույթ:

Հետմիջօրեին հյուրերը այցելեցին քաղաքամայր Երևանի մի շարք տեսարժան վայրեր՝ Ս. Մեսրոպ Մաջոցի անվան Մատենադարան, պետական պատկերասրահ, Ծիծեռնակաբերդի նահատակաց հուշարձան և Էրեբունի թանգարան:

Հաջորդ օրը, մայիսի 29-ին, ընկերակցությամբ Ս. Հայկապուն վրդ. Նաջարյանի և Ստեփան սարկավագ Կարապետյանի, անգլիացի ուխտավորները մեկնեցին Ս. Գեղարդա վանք, ուր Ս. Մովսես քին. Ղապարյանը բարի գալուստ մաղթելուց հետո հյուրերին՝ ծանոթացրեց նրանց վանքին ու նրա շրջակայքին՝ համառոտ տեղեկություններ հաղորդելով եկեղեցու անցյալի ու ներկայի մասին:

Ապա Ս. Գեղարդա վանքի դարավոր ու սրբապան կամարների տակ հյուրերը կատարեցին «Ս. Հաղորդության մասնավոր խորհուրդ»-ը, որին իր մասնակցությունը բերեց նաև Ս. Հայկապուն վրդ. Նաջարյանը:

Պահը խորհրդավոր էր ու տպավորիչ: Բոլորը ս. խորանի առջև միասնաբար աղոթում էին «վասն խաղաղության ամենայն աշխարհի և հաստատության սրբոյ եկեղեցւոյ», վասն սիրո և միության աշխարհի բոլոր եկեղեցիների՝ ի խնդիր համայն աշխարհում Փրկչի Ավետարանի ճշմարտության հաղթանակի:

«Ս. Հաղորդության խորհրդից» հետո Ս. Գեղարդյա վանքի սեղանատանը տեղի ունեցած «սիրո ճաշ»-ն անցավ բարեկամական և եղբայրական ջերմ մթնոլորտում:

Երևան վերադառնալիս անգլիացի ուխտավորները այցելեցին Գեղամա լեռների հիասքանչ բնության գրկում ծվարած Գառնիի հեթանոսական տաճար:

Մայիսի 30-ին Մայրավանքի հյուրերը անմոռաց տպավորություններով ու երախտագետ պգացումներով հրաժեշտ տվեցին Ս. Էջմիածնին և Երևանի «Զվարթնոց» օդանավակայանից մեկնեցին Մոսկվա:

ՍՏԵՓԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 10-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին են ժամանում ֆրանսիական «Կեն» եկամենիկ խմբի շուրջ 20 անդամներ՝ հայր Էմմանուել Պայենի և վերապատվելի Ռընե Լսոնյանի գլխավորությամբ:

Կաթոլիկ և բողոքական հավատացյալներից կազմված այս խմբի նպատակն է՝ ուխտագնացությունների միջոցով ավելի մոտիկից ծանոթանալ Արևելյան Եկեղեցիներին:

Հյուրերը Վեհարանում հանդիպում են ունենում Ամենայն Հայոց Հայրապետի հետ: Հանդիպմանը ներկա էին Գերագույն Հոգեվոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպս. Մանուկյանը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբալյանը:

Հանդիպման ժամանակ Վեհափառ Հայրապետը ողջունում է հյուրերին և համառոտ տեղեկություններ տալիս Հայ Եկեղեցու պատմության վերաբերյալ:

Հյուրերից ողջույնի փոխադարձ խոսքով հանդես են գալիս վերապատվելի Ռընե Լեփոնյանը և հայր Էմմանուել Պայենը, որոնք իրենց երախտագիտությունն են հայտնում Վեհափառ Հայրապետին՝ ցույց արված ջերմ

ընդունելության համար, և հուշանվերներ հանձնում նրան:

Ս. Էջմիածնում գտնվելու ժամանակ հյուրերը այցելում են Մայր տաճար, Վեհարանի թանգարան, ապա «Ալեք և Մարի Մանուկյան» գանձատուն, ուր մեծ հետաքրքրությամբ ծանոթանում են հայ հոգևոր մշակույթի մեծարժեք գանձերին:

Հետմիջօրեին ֆրանսիացի ուխտավորները մեկնում են Ս. Էջմիածնից՝ ուղևորվելով դեպի Օջականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի:

*
*
*

Մայիսի 12-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Եղիշե քին. Բաղդամյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագից տեր հայրը քարոզ է խոսում «Չամենեսեան Կորմիանգամ կամիջիք թե արասցեն ձեզ մարդիկ, այնպես եւ դուք արարէք նոցա» (Մատթ. է 12) բնաբանով:

Իր քարոզի մեջ պատարագից տեր հայրը նշում է, որ Ավետարանը Քրիստոսի կողմից հաստատված օրենքների մի ամբողջություն է, որոնց նպատակն է մարդկանց համար ստեղծել խաղաղ և անդորր կյանք: Ապա

անդրադառնալով իր քարույի բնաբանին՝ տեր Եղիշե քահանան ասում է, որ եթե Քրիստոսի այդ պատվիրանը հասկացվեր մարդկանց կողմից և գործադրվեր այնպես, ինչպես Քրիստոս է պատվիրում, ապա չարագործությունները խապառ կվերանային աշխարհի և մարդկանց միջից:

Իր քարույի վերջում, դիմելով բարեպաշտ ժողովրդին, տեր հայրը հորդորում է նրանց միշտ ի մտի ունենալ այն, որ ինչ իրենք են պահանջում մարդկանցից, որ կատարեն իրենց համար, նույնը իրենք պարտավոր են անելու նրանց նկատմամբ, որպեսզի աշխարհում միշտ խաղաղություն և արդարություն լինի: Քրիստոսի առջև ամեն ոք իր կատարած գործերի համաձայն պիտի արդարանա կամ դատապարտվի:

*
* *

Մայիսի 14-ին, երեքշաբթի.—Այսօր, իր տիկնոջ ընկերակցությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին է այցելում «Լուս Անջեղես Թայմս» օրաթերթի Մոսկվայի գրասենյակի թղթակից պրն. Վիլյամ Իթընը և հարցապրույց ունենում Մայր Աթոռի դիվանապետ Ս. Ներսես եպյ. Պոլսապալանի հետ:

*
* *

Մայիսի 15-ին, չորեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին են այցելում Նկրուիրաբուժական միջազգային ընկերակցության մի խումբ մասնագետներ՝ նույն ընկերակցության նախագահ Ալեն Հյուդսոնի գլխավորությամբ:

Հյուրերը Վեհարանում Հայոց Հայրապետի հետ ունենում են հանդիպում և պրույց, որն անցնում է ջերմ, բարեկամական մթնոլորտում:

*
* *

Նույն օրը Վեհարանի ընդունելությունների սրահում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում հոգևոր ձեմարանի տեսուչ Ս. Եվնիկ քին. Պետրոսյանը ներկաներին ծանոթացնում է սույն թվականի ապրիլի 18—21-ը Մեքսիկայում տեղի ունեցած «Աստվածաբանական կրթության ծրագիր» ժողովում քննարկված հարցերին: Այդ ժողովին, որպես Հայ Եկեղեցու ներկայացուցիչ, մասնակցել էր նաև տեր հայրը:

Հավաքույթի վերջում Ս. Եվնիկ քահանան պատասխանում է հիշյալ ժողովի վերաբերյալ իրեն ուղղված մի շարք հարցերի:

*
* *

Մայիսի 16-ին, հինգշաբթի.—Համբարձումն Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում հոգևոր ձեմարանի փոխտեսուչ Ս. Հայկապոն վրդ. Նաշարյանը:

«Գոհաբանական մաղթանք»-ից առաջ պատարագից հայր սուրբը քարույ է խոսում՝ «Երանի որոց որ ոչ իցե տեսնալ եւ հաւատացնել» (Հովհաննես Ի 29) բնաբանով:

Իր քարույի մեջ հայր սուրբն ասում է, որ Քրիստոսի Հարության դեպքը միանգամից չընդունվեց առաջին հավատացյալների կողմից, միանգամից չհասկացվեց իր խորության մեջ, նույնիսկ առաքյալների կողմից: Հատերը թերահավատորեն էին վերաբերվում Հիսուսի Հարությանը: Անգամ Թովմաս Առաքյալը մինչև չջողափեց Հիսուսի վերքերը, ամբողջությամբ չհավատաց նրան: Հավատքը նրա մեջ հաստատվեց տեսնելու փաստով միայն:

Այնուհետև, շարունակելով իր քարույը, հայր սուրբը նշեց, որ հավատալու համար անպաքանտորեն աչքով տեսնելը, ականջով լսելը պարտադիր չէ, որովհետև հավատքը չի ներկայանում միայն աչքով տեսածի, ականջով լսածի և ձեռքով շոշափածի մեջ:

Հավարտ ս. պատարագի կատարվում է Հայրապետական մաղթանք՝ նախագահությամբ Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Ս. Սիոն արքեպս. Մանուկյանի՝ «Ի յիշատակ փոխադրութեան Հայրապետական Աթոռոյն Հայոց ի Սոյ ի Ս. Էջմիածին յամի Տեառն 1441 թ.»:

*
* *

Մայիսի 17-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 18.30-ին, Վեհարանում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

*
* *

Մայիսի 19-ին, կիրակի.—Երկրորդ Ծաղկապարզ:

Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Մայր տաճարի լուսարարապետ Ս. Հուսիկ արքեպս. Սանթրոյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագից սրբապանը քարույ է խոսում՝ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» (Եղիշե) բնաբանով, որի ընթացքում նա պատմական անցյալի դեպքերի լույսի տակ վեր

է հանում հայ ժողովրդի հերոսական մաքառումները Ավարայրից մինչև Սարդարապատ: Կանգ առնելով մասնավորապես Սարդարապատի հերոսամարտի հաղթանակի պատմական նշանակության վրա՝ քարույիչ սըրբազանը նշում է, որ Սարդարապատի ճակատամարտի լիազորական ավարտը առաջնորդ ուժ դարձավ հայ ժողովրդի համար, և առանց այդ հաղթանակի գոյություն չէր ունենա այսօրվա լուսավոր ու ծաղկուն Սովետական Հայաստանը:

Հավարտ ս. պատարագի «յեկեղեցիս Հայաստանեայց կատարի հոգեհանգիստ վասն աշխարհապօրաց և պօրավարացն հայոց, որք կատարեցան ի հերոսամարտին Սարդարապատի 1918 ամի, վասն հաւատոյ և հայրենեաց»:

Ս. պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները և սկյուռքահայ ուխտավորներ:

*
* *

Մայիսի 21-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին են այցելում Ս. Տիրան արքեպս. Ներսայանն ու Ս. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը՝ շարունակելու համար Հայ Առաքելական Եկեղեցու նոր Կանոնադրության նախագծի կազմման աշխատանքները:

Ս. Տիրան արքեպիսկոպոսին ուղեկցում էր Հրաչ սրկ. Զիլինգարյանը (Նյու Յորք):

*
* *

Մայիսի 22-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանի ընդունելությունների սրահում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Ս. Հայկապուն վրդ. Նաջարյանը ներկաներին ծանոթացնում է Ագապի Նասիբյանի Լոնդոնում 1984 թ. անգլերեն լեզվով հրատարակված, «Բրիտանիան և Հայկական հարցը 1915—1923 թթ.» գրքի առաջին մասի բովանդակությանը:

*
* *

Մայիսի 26-ին, կիրակի.—Հոգեգալուստ (Պետեկոստէ, յիսներորդ օր ի Զատիկէ):

Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Մայր Աթոռի դիվանապետ Ս. Ներսես եպս. Պոպապայանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ սրբազանը քարոյ է խոսում «Օրհնութիւն ի բարձունս եղողին ի Հօրէ Հոգւոյն Սրբոյ, որով Առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն եւ հրալիրեցին Վերկիրս ի յերկինս» (Շարական) բնաբանով, որի ընթացքում

նշում է, որ «Սուրբ Հոգին Աստուծո շնորհքն է՝ տրված մարդկությանը: Սուրբ Հոգին այն ուժն է, որը մարդիկ փոխանցում են միմյանց, որպեսպի լցվեն, պորանան նորանոր շնորհներով»:

Այնուհետև սրբազանը դիմելով հավատացյալներին՝ մաղթում է, որ «մարդիկ լինեն ավելի երջանիկ, եղբայրասեր, մարդասեր և ծառայասեր, իսկ աշխարհը լինի ավելի խաղաղ ու ապահով»:

Վերջում աղոթելով Սուրբ Հոգուն՝ սրբազանը հայցում է, որ «Սուրբ Հոգին այսօր ևս իջնի իր փոքրիկ հոտի վրա՝ ի Հայաստան և ամբողջ աշխարհի»:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մայիսի 29-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանի ընդունելությունների սրահում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Ս. Հայկապուն վրդ. Նաջարյանը ներկաներին ծանոթացնում է Ագապի Նասիբյանի 1984 թ. Լոնդոնում անգլերեն լեզվով հրատարակված «Բրիտանիան և Հայկական հարցը 1915—1923 թթ.» գրքի երկրորդ մասի բովանդակությանը:

Հավաքույթի վերջում հայր սուրբը պատասխանում է իրեն տրված հարցերին:

*
* *

Հունիսի 2-ին, կիրակի.—Յիշատակ եղիւ ի մարգարէին:

Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Կենտրոնական Եվրոպայի (Ավստրիա, Արևմտյան Գերմանիա և Շվեդիա) Հայրապետական պատմիկ Ս. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը:

«Հայր մեր»-ից առաջ ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ս. Տիրան արքեպս. Ներսայանը քարոյ է խոսում, որի ընթացքում, անդրադառնալով Քրիստոսի Հարության խորհրդին, նշում է, որ այն «մեր կրոնի և հավատքի ամենամեծ ու կարևոր տոնն է, կենտրոնը ամբողջ քրիստոնեական վարդապետության և քրիստոնեական կյանքի: Քրիստոսի Հարությունը քրիստոնեական փրկագործության մեջ ամենակարևորն ու ամենաէականն է»:

Վերջում սրբազան հայրը իր մաղթանքներն է ուղղում հավատացյալներին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունիսի 3-ին, երկուշաբթի.—Տօն Սրբոց կուսանացն Հռիփսիմեանց:

Այսօր տեղի է ունենում «Եկեղեցական հանդեսի վանս Սրբուհոյ կուսին Հռիփսիմեայ»: Օրվա պատարագիչն է Ս. Շնորհք արքեպիսկոպոս Բաղդասարյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ հայր սուրբը քարոզ է խոսում՝ «Հռիփսիմե մեծ խորհուրդ և անուն ցանկալի, ընտրեալ ի յերկրի և դասեալ ընդ հրեշտակս» (Շարական) բնաբանով:

Իր խոսքի մեջ հայր սուրբը վեր է հանում նահատակ կույսերի մարտիչոսացման նշանակությունը Հայաստանում քրիստոնեության տարածման գործում:

Հունիսի 4-ին, երեքշաբթի.—Տօն Սրբոց կուսանացն Գայիանեանց:

Այսօր տեղի է ունենում «Եկեղեցական հանդեսի վանս Սրբուհոյ կուսին Գայիանեայ», որտեղ պատարագ է մատուցում Ս. Գայանե վանքի վանահայր Ս. Գուրգեն քին. Աշուրյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ տեր հայրը քարոզ է խոսում՝ «Դարձեալ վերըստին արարչագործ պորոթին, և դարձեալ եղեմ աստուածատունկ վարդարի, քանպի ծառն կենաց տնկեցաւ ի դրախտին, բերելով մեզ պտուղ վերանելին Գայիանե» (Շարական) բնաբանով:

Հունիսի 6-ին, հինգշաբթի.—Տօն Սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանգինեայ եպիսկոպոսին:

Այսօր տեղի է ունենում «Եկեղեցական հանդեսի վանս Ս. Շողակաթի»: Օրվա պատարագիչն է Ս. Շողակաթ վանքի վանահայր Ս. Ղևոնդ քին. Հարությունյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ տեր հայրը քարոզ է խոսում՝ «Շնորհեցաւ մեզ դեղ կենաց՝ նշխար սորին ոսկերաց ի ձեռն Լուսաւորչին Հայաստանեայց աշխարհի» (Շարական) բնաբանով:

Հունիսի 7-ին, ուրբաթ.—Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ ժամանում Չագորսկի հոգևոր ճեմարանի ասպիրանտ Գալին վարդապետ Գալը (Բուդարիա) և Յարոսլավ Չինչարը (Չեխոսլովակիա)՝ մոտիկից ծանոթանալու Հայ Առաքելական Եկեղեցուն:

Հունիսի 8-ին, շաբաթ.—Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի վիրապէն:

Այսօր Մայր տաճարի Իջման սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Ս. Գրիգոր ավագ քին. Տերտերյանը:

Հունիսի 9-ին, կիրակի.—Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր տաճարի Ավագ սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Ս. Արսեն եպս. Բերբերյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ սրբապանը քարոզ է խոսում՝ «Եկայք շինեսցուք սուրբ պիտրանն լուսոյ, քանպի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» (Շարական) բնաբանով:

Իր խոսքի մեջ սրբապանը ներկայացնելով Հայաստանում քրիստոնեության տարածման ու Ս. Էջմիածնի հաստատման պատմությունը նշում է նաև, որ «այսօր տոնելով Ս. Էջմիածնի տոնը՝ մեծարում ենք նաև այս քրիստոսահաստատ Աթոռի գահակալներին: Հայ ժողովուրդը, Վեհափառ Հայրապետի խոսքերով ասած՝ «վաստված փնտրելու ճանապարհին գտել է Ս. Էջմիածինը»: Այս եկեղեցին, կանգնած իր քրիստոնեական առաքելության բարձր մակարդակի վրա, դարձել է ողջ հայության հոգևոր մայրը»:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է «Մաղթանք Ս. Էջմիածնի»:

Հունիսի 10-ին, երկուշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 9.00-ին, Երևանի «Չվարթնոց» օդանավակայանից Մոսկվա, այնտեղից էլ՝ Նյու Յորք, մեկնեց Ս. Տիրան արքեպիսկոպոսը՝ ողբակցությամբ Հրաչ սրկ. Չիլինգարյանի:




ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Տ. Տ. Վապգեն Ա Վեհափառ Հայրապետի արտոնությամբ և օրհնությամբ Մայր Աթոռի միաբան Տ. Մասիս քին. Գալստյանը ձեռնհասությամբ եկրոպական նոտագրության վերածեց Գևորգ Դ կաթողիկոսի օրոք, 1875 թ., Մայր Աթոռ Ա. Էջմիածնում Նիկողայոս Թաշճյանցի կապմած «Չայնագրեալ շարական հոգևոր երգոց»-ը:

Վերջերս Մայր Աթոռում լույս ընծայվեց այդ աշխատության առաջին հատորը, որի մեջ պետեղված են Հարության բոլոր շարականները՝ Օրհնությունները և Հարցերը՝ իրենց «Մեծացուցե՛»-ներով, «Ողորմեա՛»-ներով, «Տէր յերկնից»-ներով, «Մանկունք»-ներով և «Համբարձի»-ներով՝ ըստ 1885 թվականի նույնպես Մայր Աթոռում հրատարակված Չայնքաղ Հարակնոցի հերթականության:

Սույն գործը հրատարակվում է այն առաջադրանքով, որ Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում ժամակարգությանց ընթացքում հոգևոր երգեցողությունները կատարվեն համաձայն սույն վերծանության:



ՔԱՐՈՋ

«Դասերը Երուսաղեմի մի լայք ի վերայ իմ, այլ լեցեք ի վերայ անձանց եւ ի վերայ որդւոց ձերոց» (Ղուկ. ԻԳ 28)

Սիրելի ժողովուրդ,

Այն տունը, որի հիշատակության է նվիրված այս Կիրակին, անտարակույս որ Հիսուս Նազովրեցու շատ կարճ կյանքի ամենախորհրդավոր և նշանակալից դեպքերից մեկն է: Խորհրդավոր և նշանակալից չէ, եթե այն դիտենք առանձին, անջատ և անկախ այն բոլոր դեպքերից և եղելություններից, որ տեղի ունեցան Հիսուսի կյանքում Ծաղկավարդի դեպքից առաջ և հետո: Ի՞նչ կարող էր լինել ավելի բնական, քան Հիսուսի այցելությունը Երուսաղեմ. այն քաղաքը, որի ժողովրդին նա այնքան սիրել էր, որին այնքան անձնուրացորեն ծառայել էր, որին նա այնքան կապված էր: Չարմանալի և անըստպասելի չէր նաև ժողովրդի սիրալիր դիմավորումը, իրենց սիրո և երախտագիտության զգացմունքների հայտնուն և անմիջական արտահայտությունները մեկի հանդեպ, որ ոչ միայն իրենց համաքաղաքացին էր, այլև մեկը, որին համարում էին իրենց Փրկիչը: Նա արժանի էր այդ հարգանքին և պատվին. «Օրհնութիւն որդւոյ Դաւթի, օրհնեալ որ գայ յանուն Տեառն» (Մատթ. ԻԱ 9):

Սակայն Ծաղկավարդի դեպքը խորհրդավոր և նշանակալից է դառնում, երբ այն ըմբռնում և արժեքավորում ենք հաջորդող դեպքերի յուսի տակ: Ինչպես գիտեք, Ծաղկավարդով քրիստոնյա եկեղեցին սկսում է Ավագ շաբաթի տոնակատարությունները, որոնք նվիրած են Հիսուսի կյանքի վերջին օրերին՝ վերջին ընթրիք, ոտնվա, մատնություն, խաչելություն, թաղում. սրանք ոչ թե հաղթանակի, այլ տխրության, վշտի, սուգի սլահեր են մարդ-անհատի կյանքում: Մինչ-

դեռ փողոցներում լավում էին մանուկների երգերի օվսաննաները, մի ուրիշ տեղ նույն ամբոխի ներկայացուցիչները որոշել էին «ի խաչ հան զդա» (Մրկ. ԺԵ 14): Դեռ Երուսաղեմ քաղաք չմտած, Հիսուս այցելություն տվեց մի քանի մտերիմներին, մասնավորաբար երկու հավատացյալ թուրքերին՝ Մարթային և Մարիամին, որոնց եղբայր Ղապարոսը մի քանի օր առաջ մահացել էր: Հիսուս հարություն տվեց իր սիրելի բարեկամին: Ժողովուրդը, որ ականատես եղավ այդ հրաշքին, տպավորվեց, զարմացավ, հավատաց, մինչդեռ մի հեռավոր անկյունում այդ ժողովրդի կառավարիչները հավաքվեցին և խորհրդակցեցին. «Կի՞նչ արագույն, կի՞ այլըն այն բազում նշանա առնէ. եթե թողունք զնա այնպէս, ամենեքին հաւատան ի նա. ապա յայնմ օրէ խորհուրդ արարին՝ զի սպանցեն զնա» (Հով. ԺԱ 47—48, 53): Հիսուս այդ գիտեր և իր մոտ կանչելով իր աշակերտներին բացատրում էր. «Պարտ է նա երթալ յԵրուսաղեմ, և բազում չարչարանս չարչարել...» (Մատթ. ԺԶ 21):

Սիրելի ժողովուրդ, կարո՞ղ ենք արդյոք կենդանի կերպով պատկերացնել այն պահը, երբ Հիսուս իր վերջին քարոյի մեջ այս ահավոր ապարարությունը կատարեց և «եւ լաց ի վերայ նորա»: Մի քանի օր հետո այդ նույն ճանապարհով տանելու էին խաչափայտը՝ ամենասարսափելի տանջանքի և անխուսափելի մահվան գործիքը, բայց Հիսուսի աստվածային հոգու մեջ տիրում էր կատարյալ խաղաղություն: Գեթսեմանիի տագնապը վաղուց անցել էր, մտում էր միայն գոհացում տալ մոլորված ամբոխի կատարյալ

կրքերին՝ կատարելագույն անօրենության դիմաց ամենակատարյալ արդարության պատկեր հանդես բերելով:

Եթե դարերի ընթացքում եղել է մի ժամանակ, որի մեջ ամենակենդանի կերպով արտափայլեր այդ ահեղ թուպեն, ներկա մեր ապրած ժամանակաշրջանն է: Գողգոթայի վրա բարձրացողը այսօր մարդկության Փրկիչը չէ, այլ խեղճ, անպաշտպան կանայք, մանուկներ, երիտասարդներ, որոնց խաղաղ, բարի կյանքի պայծառ հույսերը այսօրվա դահիճները քարջ են տալիս դեպի անարգել մահ—չքավորության, անգործության, նեղ և ապգայնամուլ պատերազմների և կոտորածների:

«Այլ որդի մարդոյ երթայ՝ որպէս և գրեալ է վասն նորա. բայց վայ իցէ մարդոյն այնմիկ, յոյր ձեռս որդին մարդոյ մատնեցի»: Վա՛յ, արդարև վա՛յ ասել պետք է մեզ այժմ, ոչ թե կենդանի թաղված երիտասարդների, մահու չափ անպատված կույսերի ու հարսների, որք ու անտեր ձանուկների, բանտերում ու պանդխտության մեջ սովից ու վերահաս վտանգից տագնապող հապարավոր ու բոլորավոր խեղճերի, այլ հեռվում ապահով նստած քրիստոնյա դատավորներին և նրանց լճիճն իրագործող հերոսներին. «Եթե ընդ փայտ դալար վայս առնեն, ընդ չորն լի՛նչ լինիցի»: Այսօր էլ բազմաթիվ Պիղատոսներ կան, որոնք իրենց դատաստանը վերջացնելուց հետո, ձեռները լվանում և մի կողմ են քաշվում. նրանք լավ գիտեն, որ անմեղի են դատապարտում, որ փշե պսակը գլխին, ձեռները կապված մի կալանավոր թագավորության ձգտել և հասնել չէր կարող, բայց արժե՝ հանգիստը վրդովել մի ողորմելի նահատակի համար: Ի՛նչ վնաս, թե անմեղ էր չարչարվողը ու խաչվողը, միայն երևակայված փորձանքը հեռանար իր գլուխից: Եվ ահա բարձրանում է նա, այդ անմեղ նահատակը, և հանդիսատես ամբոխի մեջ մի քանի լավկաններ են միայն նրան մխիթարում, անպոր օգնության ձեռք հասցնում: Իրավունք չունի՝ նա նույնպես կրկնե-

լու այդ մխիթարիչներին. «Մի լայք ի վերայ իմ, այլ լացէք ի վերայ անձանց և ի վերայ որդւոց ձերոց»:

Նայեցեք դեպի Գողգոթա, աչքի առաջ բերեք Ծաղկավարդի այդ խունդերամ ամբոխը և պատկերացրեք մեջտեղում հանդարտ քայլերով առաջ ընթացող Հիսուսին. մի՞թե մեզանից ամեն մեկը, որ գուրկ չէ բարոյական պագսմունքներից, հապար անգամ ավելի պիտի չգերադասեր Հիսուսի հետ մահվան դատապարտված լինել, տանջանք ու մահ ճաշակել, քան «ի խաչ հան» աղաղակողների հետ ապրել, պատվի ու փառքի տիրանալ: Այո, վարիտրելի է մեր շուրջ տիրող անարդարությունը, բայց ավելի վարիտրելի է մասնակցությունը այդ անարդարության: Մեկ ժողովրդի կրած աղետները դրսից անտարբեր աչքով դիտելը շատ ավելի անտանելի է: Իսկուր չէ Պողոս առաքյալ հանդիմանում նորահավատ Կորնթացիներին. «Ընդէ՛ր ոչ դուք գրկիք և ոչ դուք առաւել նեղիք, այլ դուք գրկէք և նեղէք, և այդ վեղբայրս ևս»: Ի՛նչ պիտի ասեր նույն առաքյալը այժմ տեսնելով հապար տարիներով քրիստոնեության մեջ կրթված, պորոյան ու ամեն իրավունքների տեր ազգերի վարմունքի մասին՝ հանդեպ իր եղբայրակիցները:


Սիրելի ժողովուրդ, մեզ համար այժմ, երբ վերհիշում ենք Մեծ եղեռնի 70-ամյակը, ամենածանր և նվաստացուցիչ հանգամանքը ոչ թե այն է, որ մեր եղբայրները, արյունակիցները բոլորովին անմեղ գոհեր դարձան, այլ այն, որ քրիստոնյա աշխարհը կարող էր մի ակնարկով այդ կոտորածներին վերջ տալ, փրկել և ապահովել մեր ժողովրդի կյանքը, սակայն չարեց և չի անում:

«Աստուած պորութեանց, դարձ հայեաց յերկնից և տես. այց արա այգույս այսմիկ և դարման տար սմա զոր տնկեաց աջ Քո...»: Ամեն:

Տ. ՆԵՐՍԵՍ ՔՇՆ. ՆԵՐՍԵՍՅԱՆ

Լոնդոն





Ք Ա Ր Ո Ջ

«Սիրեցից պքեզ, Տէր պօրութիւն իմ, Տէր հաստաւիչ իմ, ապաւէն իմ և Փրկիչ իմ: Աստուած օգնական իմ եւ ես յուսամ ի նա»:

(Սաղմոս ԺԷ 2—3)

Սիրելի հավատացյալներ,

Բարի լուսի հետ սկսվում է մարդկային կյանքի յուրաքանչյուր օրը և ամեն մի արեւածագ իր հետ բերում է առօրյա հոգսերի և անելիքների բազմաթիվ ծրագրեր: Դժգոհություններ են ծնվում այդ դժվարությունները հաղթահարելու ճանապարհին, և ակամայից մարդ արարածը օգնական ուժի, ապահով հենարանի կարիք է պզուտ: Սարսափելի է պահը, երբ մարդ չի գտնում ոչ մի օգնական ուժ, ոչ մի հուսադրող ելք և ոչ մի ապահով նեցուկ: Տառապում է մարդը մարմնապես, տանջվում է հոգեպես ու ընկնում է տատանումի սահմանեցուցիչ վիճակի մեջ: Այդ բարդությունները հարթելու, լուծելու համար մարդկային էությունը ընդունակ է հասնելու ծայրահեղության՝ ընկնելով ոչ մարդկային, իսկական կենդանական վիճակների մեջ՝ հասնելով իր նմանին ոչնչացնելու, շահագործելու, դժբախտացնելու մոլուցքի:

Բարի լուսի հետ, սիրելի հավատացյալներ, երբ հանդիպում ենք միմյանց, գեղեցիկ կլինի, եթե իրար դեմքի վրա չտեսնենք «ինչպե՞ս անեն, ի՞նչ անեն» հոգեմաշ հարցերի տառապալից հետքերը:

Վիճակը ավելի է ծանրանում, երբ մարդը անհավատ է և իր հոգու խորքում չունի Աստվածային ճշմարտության լույսը, Աստվածային կենսապարզ և ուժը: Մարդը սկսում է իր անվերջանալի որոնումները, քանզի չունի Սուրբ Հոգու ջնորհներին:

Մեզանից ո՞վ ունի իր մեջ անսայթաք, անսխալ գործելու հնարավորությունը: Գրեթե ոչ ոք: Ես ասում եմ հնարավորություն, որովհետև մարդ արարածը չունի և անգամ այդ ցանկալի կարողությունից:

Հավատացյալ, Աստվածատենչ հոգու համար այլ է իրավիճակը: Այն մարդը, ով հավատում է Աստծուն, նա կյանքում ոչ մի բանից վախենալու, դժգոհելու, անհանգստանալու և երկյուղելու առիթ չի ունենա: Որովհետև հավատացյալ մարդու առեւտանեղ պահին փրկարար, հուսադրող և մխիթարիչ միակ ուժը դառնում է իր Արարիչը՝ Ամենապոր Աստված: Եվ հենց այդ կապը հավատացյալի և Աստծու միջև կոչվում է հավատք, որն էլ իրագործվում է աղոթքի միջոցով: Աղոթքը ապատում է մարդուն իր երկրային հոգսերից:

Երևի հարցնեք ձեր հոգում, թե ո՞րն է այդ տարբերության՝ հավատացյալի և անհավա-

տի վիճակների խորհրդավոր գաղտնիքը:

Ոչ մի գաղտնիք էլ չկա: Հարցի տարբերությունը արդյունք է մարդու առ Աստված ունեցած կեցվածքի:

Սիրել Աստծուն: Ահա հարցերի բանալին: Սիրել: Ինչպե՞ս: «Սիրել վաստում է ի բոլոր սրտե՛ և ի բովանդակ մտաց»: Երբ մարդ սիրում է մեկին, և հավատում է, որ նա ամենապար, ամենակարող, ողորմած, մարդասեր և բարեգութ է, վախենալու ոչինչ չունի: Նա աղոթքի միջոցով ամեն ինչ բացատրում է այդ Էությունը, նրան է հանձնում իր հոգու տվայտանքներն ու փոթորկումները, և թեթևացած հոգով ապավինում նրա ողորմածությանը: Ասում ենք սիրել Աստծուն «ի բոլոր սրտե՛ և ի բովանդակ մտաց»: Քրիստոնեությունը արտաքնապես՝ այսինքն տեսականորեն շատ պարզ և հաճելի է, սակայն շատ բարդ, և երբեմն էլ, ոչ ցանկալի է գործնական առումով: Քրիստոս իր քարոչության անբողջ ընթացքում պատմիրում էր սիրել: Սիրել ընկերոջը անձի պես, սիրել դիմացինին, սիրել անգամ թշնամուն: Եվ սիրել ոչ թե լոկ պարտականության համար և ձևականորեն, այլ որպես հոգու և սրտի անկեղծ ցանկություն և անհրաժեշտություն: Ցավոք մարդկանց մեջ շատ քիչ են հոգով և սրտով ճշմարիտ քրիստոնյաները, իսկ անկեղծ սիրելը առաջին հիմնաքարն է երկրային երջանիկ կյանքի:

Մարդ արարածը, եթե կանոնավոր պահ-

պանի իր կապը Աստծու հետ, ապա նա դրժգոհելու և տրտնջալու առիթներ չի ունենա, քանզի Աստված մարդկանց հոգու անկեղծ բարության մեկ հյուլեի դիմաց բացում է իր Աստվածային շնորհների և օրհնությունների բյուրավոր դռները: Ինչ էլ անի մարդը՝ Աստված սիրում է նրան: Եվ եթե պատժում է մարդկությանը՝ մարդկանց անկարգությունների համար, ապա նա այդ անում է որպես սիրող հայր:

Այդ բանը շատ լավ է գիտակցել Սաղմոսերգուն, որը դիմելով Աստծուն ասում է. «Քեզ պիտի սիրեմ, Տեր, իմ պորություն, իմ հաստատիչ, ապավեն իմ և փրկիչ իմ: Աստված իմ օգնականն է և ես հույսս դրել եմ նրա վրա»: Ահա մի հավատացյալ հոգու կեցվածք, որ օրինակելի է յուրաքանչյուրիս համար: Երբ մարդ ապավինում է Աստծուն ամբողջապես, իրեն շատ ավելի ապատ, անկաշկանդ և ապահով է պզում:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, աղոթենք առ Հայրն երկնավոր, որ նա լսի մեր աղոթքի ձայնը և արժանի դարձնի իր ողորմությանը: Թող ձեզանից ամեն մեկը արևածագի մաքուր ու բարի լույսի հետ՝ փառաբանի արարիչ Աստծուն, փրկիչ Քրիստոսին և մխիթարիչ Սուրբ Հոգուն այժմ և հավիտյանս հավիտենից, ամեն:

ՄԻՍԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ
Հոգևոր ձեմարանի Ե լսարանի ուսանող



ՈՂՋՈՒՆԵԼԻ ՆԱԽԱԶՆԵՐՆՈՒԹՅՈՒՆ

Ուրախալի է արձանագրել, որ Ըվեյցարիայի Հայոց «Ս. Գրիգոր Լուսավորիչ» հիմնարկությունը, որի նախաձեռնությամբ և ջանքերով մեկուկես տասնամյակ առաջ կառուցվեց Ժնևի Հայոց Ս. Հակոբ փառավոր եկեղեցին, այժմ, Ըվեյցարիայի հայոց եկեղեցական խորհրդի հետ գործակցաբար, ձեռնամուխ է եղել նույն եկեղեցուն կից մշակութային մի կենտրոնի կառուցման, որը կոչվելու է «Հայ Կենդրոն» («Centre Arménien») :

Այդ կապակցությամբ վերջերս Մայր Աթոռ էր ժամանել շվեյցարահայ համայնքի եկեղեցական խորհրդի նախագահ պրն. Էոժեն Բաբայանը, որը Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ առանձին մի տեսակցության ընթացքում Նորին Սրբությանը հաղորդեց տեղեկություններ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» հիմնարկության վերոհիշյալ ծրագրի իրականացման հետ կապված որոշ հարցերի մասին :

«Ս. Գրիգոր Լուսավորիչ» հիմնարկության նպատակն է՝ սույն կենտրոնը դարձնել ապագա մշակութային լայն գործունեության համար կարևոր մի հաստատություն, որտեղ շվեյցարական համայնքի մտավորական ներկայացուցիչներ, մշակույթի և հասարակական գործիչներ հնարավորություն կունենան միմյանց հանդիպելու, աշխատելու, գիտական ու մշակութային լուրջ ձեռնարկումներ ծրագրելու և իրականացնելու :


Մշակութային նման մի կենտրոնի ստեղծումը միջազգային հեղինակություն ու համ-

բավ վայելող մի քաղաքում, ինչպիսին Ժնևն է, անսարակույս ունի բացառիկ նշանակություն հայության համար : Ինչպես Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն է առում այս առթիվ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» հիմնարկությանն ուղղված իր կոնդակում «Հայաստանայց Եկեղեցի ու հայ մշակույթ, բազմադարյան այն երկու մեծ արժեքներն են հայկական ոգեկանության, որոնք քաղաքակիրթ աշխարհի հորիզոնին վրա կհանդիսանան փառքն ու պատիվը մեր ազգին, երեկ, այսօր և հավիտյան» :


Նորին Սրբությունը, ողջունելով «Ս. Գրիգոր Լուսավորիչ» հիմնարկության այս գեղեցիկ մտահղացումը և սիրով ընդառաջելով իրեն ուղղված դիմումներին, 4 հունիս 1985 թվակիր սրբատառ իր կոնդակով (Հայոց Հայրապետի կոնդակը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3) կոչ է ուղղում համայն շվեյցարահայությանը՝ իր նյութական և բարոյական աջակցությամբ նպաստելու առաջադրված ծրագրի իրականացմանը՝ Մայր Աթոռի կողմից այդ նպատակի համար արված տասը հազար դոլլարի մի նվիրատվությամբ բացված հայտարարելով հանգանակությունը :

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, ջերմապես գնահատելով «Ս. Գրիգոր Լուսավորիչ» հիմնարկության այս գովելի ձեռնարկը, ցանկանում է նրան լիակատար հաջողություն՝ իր ազնիվ նպատակի իրագործման ճանապարհին :






Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՅՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԻՐ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՔԻՑ



exécution	CENTRE ARMENIEN	GENEVE - TROINEX	ACH 150	facade nord ouest	ADAM/DESSEMENT
-----------	-----------------	------------------	---------	-------------------	----------------



ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ 6-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ ԱՌԱՋ

Հունգարական Եկեղեցիների Էկումենիկ խորհրդի հրավերով, սույն թվականի մայիսի 13—17 օրերին տեղի է ունեցել խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի Աշխատանքային կոմիտեի նախապատրաստական ժողովը Բուդապեշտում, Հունգարական վերակազմյալ Եկեղեցու Սինոդի շենքում: Ժողովը բացվել է Հունգարիայի Եկեղեցիների Էկումենիկ խորհրդի նախագահ դոկտ. Տիբոր Բարտա եպիսկոպոսի կողմից կատարված պաշտամունքի կարճ արարողությամբ: Բացման արարողությանը ներկա են եղել ինչպես հիշյալ խորհրդի անդամ Եկեղեցիների, այնպես էլ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու և հրեական համայնքների ներկայացուցիչները: Ժողովին մասնակցել են 21 երկրներից ժամանած ավելի քան 40 պատգամավորներ:

Հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ժողովի աշխատանքներին իր մասնակցությունն է բերել նաև Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը:

Աշխատանքային կոմիտեի առաջնահերթ խնդիրն է եղել նախապատրաստությունը խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի առաջիկա 6-րդ համագումարի, որը տեղի է ունենալու 1985 թ. հուլիսի 2—9 օրերին Պրագայում՝ «Աստված կոչում է՝ ընտրիր կյանքը. ժամանակն ուշ է» բնաբանով:

Ժողովում ԽՔԿ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Լյուբոմիր Միրեծովսկին իր հաշվետու

վեկուցման մեջ ներկայացրել է 1984 թ. ապրիլին Հեռհուդում (ԳԴՀ) գումարված Աշխատանքային կոմիտեի հերթական ժողովից ի վեր խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի կատարած տարբեր բնույթի աշխատանքների (տեխնիկական, կազմակերպչական, ֆինանսական, հրատարակչական և այլն) համառոտ պատկերը: Գլխավոր քարտուղարն իր վեկուցման մեջ նշել է, որ աշխարհի բոլոր մայրցամաքների երկրների մեծ մասի ավելի քան 600 պատգամավորներ, որոնք մասնակցելու են ԽՔԿ-ի առաջիկա 6-րդ համագումարին, պատրաստակամություն են հայտնել իրենց կարողությունները ստեղծագործորեն և անմնացորդ կերպով տրամադրելու հոգուտ խաղաղության հաղթանակի, որը վերջ կտար աշխարհակործան միջուկային աղետին:

Սույն ժողովում նախագահական ուղերձով հանդես է եկել նաև խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի նախագահ դոկտ. Կարոլի Տոթ եպիսկոպոսը: Իր ուղերձում նա հայտարարել է, որ համագումարի գլխավոր պարտականությունն է լինելու աստվածաբանական և էկումենիկ տեսանկյունից գնահատել աշխարհի ժամանակակից իրական կացությունը՝ հանդես բերելով քաղաքական և էկումենիկ խորաթափանցություն, աղոթել և պայքարել է՛լ ավելի կայուն խաղաղության համար, որը միայն կարող է առաջնորդել ուժ հանդիսանալ մեր ապագա բոլոր գործունեությանը համար:

Չորսօրյա աշխատանքից հետո ժողովը հրապարակել է մի հաղորդագրություն և երկու այլ փաստաթղթեր՝ ա) «Սովը Աֆրիկայում» և բ) «Ֆաշիզմի լծից ապատագրվելու 40-ամյակը. ՄԱԿ-ի խաղաղասիրական գործունեության 40 տարին. քրիստոնյաների և եկեղեցիների համագործակցության 40 տարին՝ ի խնդիր ժողովուրդների փոխըմբռնման և համերաշխության»:

Աշխատանքային կոմիտեի հերթական սույն ժողովն ավարտվել է ԽՔԿ-ի նախագահ դոկտ. Կարոյի Տոթ եպիսկոպոսի աղոթքով:


Մայիսի 16-ին, Համբարձման օրը, Հունգարական վերակազմյալ Եկեղեցու Սինոդի

վարչական կենտրոնում տեղի է ունեցել կրոնական պաշտամունք, որին ներկա են եղել ժողովի մասնակիցները:

Նույն օրը ԽՔԿ-ի պատգամավորներին ընդունել է Հունգարիայի Ժողովրդական Հանրապետության նախագահության խորհրդի նախագահ Պալ Լոսոնչին:

Մայիսի 17-ի երեկոյան Հունգարական Եկեղեցիների Էկումենիկ Խորհուրդը Աշխատանքային կոմիտեի անդամների պատվին կապակերպել է պաշտոնական ընդունելություն, որին, բացի հյուրերից, ներկա են եղել երկրի ինչպես եկեղեցական, այնպես էլ աշխարհական կապակերպությունների ներկայացուցիչներ:





ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Բաղդադի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է 1954—1957 թվականներին և օծվել 1978 թվականին Նորին Սուրբ Օծություն Ս. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից՝ Իրաքի հայոց թեմին տված հայրապետական շնորհաբեր իր այցելության ժամանակ:

Վերջին տարիներս պգալիորեն աճել է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի հաճախող հավատացյալների թիվը: Այդ իսկ պատճառով խիստ կարիք էր պգացվում եկեղեցու հնարավորին չափ ընդարձակման, բարեկարգման և վերանորոգման:

1984 թվականի հունիս ամսից եկեղեցին վերանորոգման ընթացքի մեջ էր: Շուրջ մեկ տարվա ընթացքում սալարկվել է տանիքը, կից կառուցումով երկհարկանի մի շենքի՝ պգալիորեն ընդարձակվել են ավանդատները, եկեղեցու գավիթն ու դասը սալարկվել են խտալական մարմարով և կատարվել այլ բնույթի վերանորոգչական և բարեկարգման աշխատանքներ:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին նորից իր դռները լայն բաց արեց Իրաքի հայոց հավատացյալների առջև սույն թվականի հունվար ամսին, Ս. Ծննդյան տոնակատարություններով:

Հունվարի 4-ին, երեկոյան ժամերգությունից հետո, տեղի ունեցավ սրբանկարների օծման հոգեպարար արարողությունը՝ ըստ Մաշտոցի: Մասնավոր հանդիսությամբ և Սրբալույս Մեռնով օծվեց եկեղեցու Ս. Սեղանի Աստվածամայրը՝ Մանկան հետ, ինչպես նաև Ավետման և Համբարձման սրբանկարները, որոնք նվեր էին ստացվել Վեհափառ Հայրապետի կողմից, Ս. Էջմիածնից:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում տեղադրված են նաև երկու այլ սրբանկարներ (գործ՝ Զարեհ Սանոյանի):

Ժամերգությունից և օծման արարողությունից հետո, Իրաքի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Ս. Ավագ եպիսկոպոս Ասատուրյանը քարոզ խոսեց, որտեղ անդրադարձավ հայի շինարար ոգուն, ոգի, որի մեջ դրսևորվում է մեր ժողովրդի հարատևելու և հավերժելու խորհուրդը:

Սրբազան հայրը իր քարոզի վերջում անդրադարձավ եկեղեցու նվիրատուներին և նշված վերանորոգչական ու բարեկարգման աշխատանքներին մասնակցած անձանց, որոնք իրենց նյութական միջոցներն ու մտավոր շնորհաշատ կարողությունները ներդրեցին Հայ եկեղեցու պայծառացման աստվածափաճո ու ապգագուտ նվիրական գործին:

ԼՈՒՐԵՐ ՄԻԱՑՑԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻՑ

ՆՈՐ ԾՈՒԽԵՐ ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄՈՒՄ

Ուրախալի է նշել, որ վերջին տարիներին, շնորհիվ ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի բարեխնամ առաջնորդ Ս. Վաչե արքեպս. Հովսեփյանի հետևողական ջանքերի, հետպետե ընդարձակվում է Հայոց Եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի արևմտյան թեմի հոգևոր առաքելության դաշտը կապակերպումովը տարբեր նահանգներում գործող եկեղեցական նորանոր փոքրաթիվ համայնքների և ծուխերի, որոնց հոգևոր կարիքների մատակարարումը կատարվում է այցելու հոգևոր հովիվների միջոցով: Անցնող տասնամյակում թեմի հոգևորականաց դասը համալրվել է նոր եկեղեցականներով, օծվել են նոր եկեղեցիներ, հիմնվել և սկսել է կանոնավոր կերպով հրատարակվել «Մայր Եկեղեցի» անունով թեմի պաշտոնաթերթը, կատարվել են կրոնա-դաստիարակչական և մշակութային բազմաթիվ այլ ձեռնարկումներ, որոնք մեծապես նպաստել են թեմի հոգևոր գործունեության առաջընթացին:

Ներկայումս թեմն ունի իր հոգևոր իշխանության ենթակա հետևյալ նահանգները՝ Ալյասկա, Արիզոնա, Կալիֆոռնիա, Կոլորադո, Հավայի, Այդահո, Մոնթանա, Նևադա, Օրեգոն, Նյու Մեքսիկո, Յութա, Վաշինգտոն և Վայոմինգ:

Թեմի նորակալ ծուխերից է Ռինոյի (Նևադայի նահանգ) հայկական փոքրիկ համայնքը, որտեղ սույն թվականի հունվարի 12-ին, Ս. Ծննդյան տոնի առթիվ, Ս. Վաչե արքեպս. Հովսեփյանի կարգադրությամբ սուրբ պատարագ է մատուցել Ս. Արիս եպս. Շիրվանյանը: Ս. պատարագի արարողությունը տեղի է ունեցել Սեյնթ Էնթոնիի հույն օրթոդոքս եկեղեցում: Ս. պատարագի երգեցողությանը մասնակցել են Սան Ֆրանցիսկոյի հայոց Ս. Հովհաննես եկեղեցու դպրաց դասն ու սարկավագները: Այս առթիվ Սան Ֆրանցիսկոյից Ռինո են ժամանել նաև շուրջ 100 հայ հավատացյալներ՝ ներկա լինելու ս. պատարագին:

Հավարտ եկեղեցական արարողությանց Ռինոյի հայկական համայնքը կապակերպել է ճաշկերույթ, որի ընթացքում պատարագի սրբապանը իր պատգամն է տվել ներկաներին՝ կոչ անելով բոլորին համախմբվել և համերաշխ միասնությամբ գործել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հովանու ներքո՝ պահպանելու համար իրենց ազգային և կրոնական ինքնությունը:

Ս. Արիս եպիսկոպոսն ունեցել է մի առանձին հանդիպում Ռինոյի և շրջակայքի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի նորակալ ծուխերից է նաև Օրենջ Բաունթիում (Կալիֆոռնիայի նահանգ) կապված Նյուպորթ Բիչի ծուխը, որը առժամապես կոչվելու է «Նյուպորթ Բիչի Հայ Առաքելական Եկեղեցի»: Սա ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի 18-րդ ծուխն է:

Այս ծուխի հանդիսավոր առաջին սուրբ պատարագը մատուցել է թեմակալ առաջնորդ Ս. Վաչե արքեպս. Հովսեփյանը ապրիլի 14-ին, կիրակի օրը, տեղի Սեյնթ Ջեյմս Եպիսկոպոսական եկեղեցում: Կոմիտասյան քառաձայն պատարագի երգեցողությունը կատարել է Արամ Նաչատրյանի անվան երգչախումբը՝ ղեկավարությամբ Ստեփան սարկավագ Կեոպուկյանի:

ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀԻՇԱՏԱԿԻ
ՈԳԵԿՈՇՈՒՄ

Ընդառաջելով Ռինոյի և շրջակայքի հայ հավատացյալների ցանկությանը և թեմակալ սրբապանի հոր կարգադրությամբ, Ս. Հարության տոնի և Մեծ Եղեռնի 70-ամյակի ոգեկոչման առթիվ, Ս. Արիս եպս. Շիրվանյանը երկրորդ անգամ լինելով այցելել է Ռինո և ապրիլի 20-ին, շաբաթ օրը, հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցել նույն եկեղեցում: Սան Ֆրանցիսկոյի հայոց Ս. Հովհաննես եկեղեցու դպրաց դասն ու սարկավագները այս անգամ ևս մասնակցել են պատարագի սրբապան արարողությանը, որին ներկա են եղել նաև Սան Ֆրանցիսկոյից այդ առթիվ ժամանած բազմաթիվ հայ հավատացյալներ:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունեցել հոգեհանգստյան արարողություն՝ նվիրված հայկական ցեղասպանության զոհերի հիշատակին:

Ապրիլի 21-ին Մարիկոպա գավառի Սկագդել քաղաքի (Արիզոնայի նահանգ) հայոց եկեղեցում տեղի է ունեցել Ապրիլյան Եղեռնի 70-ամյակի ոգեկոչման ս. պատարագ, որ մատուցել է այդ առթիվ մերոհիշյալ ծուխին արցելած Ս. Սիփան քն. Մխայանը: Տեղի հայր իր քարոզի մեջ անդրադարձել է 1915 թվականին հայ ժողովրդի արևմտյան հատվածի դեմ կատարված ահավոր եղեռնագործությանը՝ նշելով, որ հայ ժողովրդին բնաջնջելու թշնամու հրեշավոր ծրագիրը ձախողության դատապարտվեց, որովհետև թե՛

մայր հայրենիքում և թե՛ սփյուռքում այսօր հայ ժողովուրդը կա, ապրում և ստեղծագործում է ավելի քան բարգավաճ ու կենսունակ: Այնուհետև տեղ հայրը եկեղեցում հավաքված հավատացյալներին կոչ է արել, որ իրենց շինարար գործերով և հանրօգուտ աշխատանքով ցույց տան հայի իսկական նկարագիրն ու դիմագիծը հաշս ամերիկացի ժողովրդի:

Ս. պատարագի ավարտին տեղի է ունեցել հոգեհանգստյան մասնավոր արարողություն հայ բյուրավոր նահատակների հոգիների խաղաղության համար: Ապա եկեղեցուն կից սրահում տրվել է հոգեճաշ, որը պատրաստված է եղել եկեղեցու Տիկնանց Միության անդամների կողմից:

Ապրիլի 28-ին տեղի եկեղեցական խորհուրդը և Հ. Բ. Ը. Միության մասնաճյուղը միասնական պաշտոնական մի հանդիսությամբ հարգել են Եղեռնի հայ նահատակների անմահ հիշատակը:

Եւթա նահանգի Հայ Միության հրավերին ընդառաջելով և թեմակալ առաջնորդ հոր բարեհաճ կարգադրությամբ, ապրիլի 24-ին հիշյալ նահանգի Սոլթ Լեյք Սիթի քաղաքն է մեկնել Ս. Սիփան քին. Միսյանը և հայ նահատակաց 70-ամյակի ոգեկոչման առթիվ երեկոյան ս. պատարագ է մատուցել տեղի Նյումն Սենթրոյի կաթոլիկ եկեղեցում: Նախքան պատարագի արարողությունը, տեղի է ունեցել Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի ոգեկոչման մի հանդիսություն, որի ընթացքում զեկուցումով հանդես է եկել Եւթայի պետական համալսարանի դասախոս պրոֆ. Լիոնարդո Ալիշան: Այս առթիվ հատուկ հարգանք է մատուցվել հանդիսությանը ներկա գտնվող ցեղասպանությունից ապաված ծերունի հայերին:

Ի ժամ պատարագի, արժանապատիվ տեղ հայրը իր քարոզի մեջ անդրադարձել է հայ նահատակաց թողած կտակին և կոչ ուղղել ներկա հայ հավատացյալներին ոչ մի ջանք չխնայել հանուն ազգային ինքնության պահպանման՝ մինչև վերջ հավատարիմ մնալով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և հայ ժողովրդի դարավոր ավանդություններին:

Ներկայումս Եւթայի նահանգի Հայ Միությունը հատուկ ջանք է գործադրում տեղի ազգային-եկեղեցական կյանքն առավել ամուր հիմքերի վրա դնելու և հաճախակի այցելու հոգևոր հովիվներ հրավիրելու արևմտյան թեմից:

Ապրիլյան Եղեռնի 70-ամյակի ոգեկոչման առթիվ, ապրիլի 28-ին, կիրակի օրը, Սիփան ծուխին այցելություն է տվել Ս. Կոմի-

տաս քին. Երինյանը: Տեղ հայրը հայ նահատակաց հիշատակին նվիրված հոգեհանգստյան մի արարողություն է կատարել Բելվյու քաղաքի Ս. Թովմաս եկեղեցում՝ այդ առթիվ տալով նաև իր քաջալերական պատգամը ներկա հայ հավատացյալներին:

Օրվա գլխավոր բանախոսն է եղել հանրածանոթ երգեհոնահար Պերճ Ժամկոչյանը, որը հուպիչ խոսքերով կանգ է առել հայ նահատակների անմահ ոգու և հայ ժողովրդի ստեղծագործ և շինարար նկարագրի վրա: Հանդիսությանը մաս է կապմել Եղեռնի 70-ամյակը խորհրդանշող 70 մոմերի մոմավառությունը:

Այս առթիվ Վաշինգտոն նահանգի կառավարիչը հատուկ մի հայտարարություն է արել հայ նահատակաց հիշատակին:

Հայ նահատակաց հիշատակի ոգեկոչումը տեղի է ունեցել նաև Վանկուվերի հայոց Ս. Վարդան եկեղեցում ապրիլի 28-ին, կիրակի օրը: Այդ առթիվ մատուցված սուրբ պատարագի ընթացքում օրվա խորհրդին նվիրված պատշաճ մի քարոզ է արտասանել Ս. Սիփան քահանա Միսյանը, որը 1982 թվականից պարբերաբար այցելում է Ս. Վարդան եկեղեցու ծուխը:

Հոգեհանգստյան արարողությունից հետո եկեղեցու «Արարատ» սրահում, ի հիշատակ հայ նահատակների, տրվել է հոգեճաշ, որը պատրաստված է եղել տեղի Տիկնանց Միության անդամների կողմից:

Օրվա բանախոսն է եղել Մոնրեալից հատկապես հրավիրված հայտնի դերասան Պերճ Ֆալլանը:

Եկեղեցու ծխական խորհուրդը և Տիկնանց Միությունը այս առթիվ հատուկ հարգանք են մատուցել սուրբ պատարագին և հանդիսությանը ներկա գտնվող Եղեռնից ապաված հայերին:

Հաջորդ կիրակի, մայիսի 5-ին, Վերացման Ս. Խաչի տոնի առթիվ, Փալմ Սփրինգսի շրջանում գտնվող «Անապատի Հայոց Եկեղեցու» ծուխն է այցելել Ս. Սիփան քահանա Միսյանը՝ կատարելու հայ նահատակաց 70-ամյակի ոգեկոչումը: Տեղ հայրը սուրբ պատարագ է մատուցել և քարոզել Փալմ Դեպերտի Ս. Մարգրիտ Եպիսկոպոսական եկեղեցում: Իր քարոզի մեջ համառոտակի նկարագրելով 1915 թվականին հայ ժողովրդի դեմ գործադրված ցեղասպանության պատմությունը՝ նա շեշտը դրել է հարություն առած հայ ժողովրդի և Հայաստանյայց Եկեղեցու, ինչպես նաև օրավոր ծաղկող ու բարգավաճող մայր հայրենիքի ձեռք բերած նվաճումների և առաջադիմության վրա:

ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 40-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ՀԱՐԳԱՆՔԻ ԵՎ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԲԱՔՎԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ

Սույն թվականի մայիսի 8-ին, Հայրենական մեծ պատերազմում Սովետական Միության տարած հաղթանակի 40-ամյակի նախօրեին, Ադրբեջանում գործող հայ և ռուս եկեղեցիների ներկայացուցիչները հարգանքի և խոնարհման այցելություն տվեցին Բաքվի Եղբայրական գերեզմանին:

Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Ս. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանը գլխավորում էր Հայ Եկեղեցու պատվիրակությանը, իսկ Բաքվի ռուս եպիսկոպոսի տեղապահ Ս. Պավլին վարդապետը՝ Ռուս Եկեղեցու պատվիրակությանը:

Հայ Եկեղեցու պատվիրակությանը մաս էին կազմում Բաքվի հայոց եկեղեցու հոգևոր հովիվ Ս. Վարդան արքեպիսկոպոսը, Աշոտ արքեպիսկոպոսը, Գևորգ Գևորգյանը, Աշոտ արքեպիսկոպոսը, Բաքվի հայոց եկեղեցու գործադիր տնօրենի նախագահ տիկին Ամալյա Բեգարյանը, նույն մարմնի աշխատակից տիար Վոլոդյա Հարությունյանը և հավատացյալների մի խումբ:

Ռուս Եկեղեցու պատվիրակությանը մաս էին կազմում Բաքվի երկու ռուս եկեղեցիների յոթ հոգևոր հայրեր:

Կեսօրվա ժամը 12-ին երկու քույր եկեղեցիների ներկայացուցիչներից և հավատաց-

յալների խմբից կազմված թափուրը մուտք է գործում Եղբայրական գերեզման, որտեղ կողք-կողքի թաղված են տասնյակ հազարավոր սովետական պիլոտներ՝ տարբեր ապօրյությունների (ռուս, հայ, ադրբեջանցի, ուկրաինացի և այլն):

Հանդիսավոր թափուրի առջևից տարվում էր երկու ծաղկեպսակ: Ծաղկեպսակները եկերող ծաղկալեններից մեկի վրա գրված էր՝ «Ընկած պիլոտներին»՝ Հայ Եկեղեցու կողմից, իսկ մյուսի վրա՝ «Ընկած պիլոտներին»՝ Ռուս Եկեղեցու կողմից:

Եղբայրական գերեզմանին ծաղկեպսակների պետեղումից հետո, հայ և ռուս եկեղեցական համայնքների կողմից կատարվում է հոգեհանգստյան կարգ՝ հույումով և երկյուղածորեն:

Այնուհետև հայտարարվում է մեկ լուպե լույսով՝ ի հարգանս կոնվածների հիշատակի:

Հարգանքի և խոնարհման սույն արարողությանը ներկա էին նաև Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի անդամները:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ երկից»:

ՀԱՎԱՏԱՎՈՐ-ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ԿԻՆԸ ԵՎ ՆՎԻՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻՆ

1985 թվականին լրացավ Հայ Եկեղեցու համեստ և նվիրյալ ծառայողներից մեկի՝ Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մոմավաճառուի Հայկանուշ Արշակի Գրիգորյանի ծննդյան ութսուն և ծառայության քառասուն տարին:

Հայկանուշ մայրիկը, ինչպես կոչում են նրան, իր ողջ կյանքը համեստորեն նվիրաբերել է Հայ Եկեղեցու ծաղկման և բարգավաճման գործին:

Հայկանուշ Գրիգորյանը ծնվել է 1905 թվականին Չանգեպուրում: Փոքր հասակից ծնողների հետ տեղափոխվել է Բաքու: Հայրը՝ Արշակ Գրիգորյանը, ծառայության է անցել տեղի հայոց Մայր տաճարում որպես դպիր և մոմավաճառ:

Դեռևս տասը տարին չբոլորած, փոքրիկ Հայկանուշը ամեն օր հոր հետ հաճախում էր տեղի հայոց եկեղեցի և երգում եկեղեցու երգչախմբում: Այս գործնական մասնակցությունը երգչախմբին փոքրիկ Հայկանուշի մեջ արտակարգ սեր առաջացրեց դեպի հայ եկեղեցական երաժշտությունը:


Մինչև 1945 թվականը Հայկանուշ Գրիգորյանը երգում էր նաև Բաքվի Անտոն Մալիյանի նորակազմ երգչախմբում:

Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բացման օրից, 1945 թ., Հայկանուշ Գրիգորյանը ծառայության անցավ այնտեղ՝ նախ որպես տնտեսվար և երգչախմբի անդամ, իսկ հետագայում՝ որպես մոմավաճառ:

Ժամանակակիցների մեջ վառ է այն հիշողությունը, որ Ս. Ծննդյան տոներին Հայկանուշ Գրիգորյանը, դպիրի շապիկը հագին, կարդում էր Դանիելի մարգարեությունը՝ իր գեղեցիկ և վրեզուն ձայնով:

Այսօր ևս, ինչպես միշտ, Հայկանուշ մայրիկը ամեն օր, առավոտ և երեկո, հաճախում է իր հարապատ հոգևոր տուն՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի՝ իր համեստ ծառայությունը մատուցելու հայ հավատացյալ ժողովրդին:

Սույն թվականի մարտի 16-ին, Ադրբեջանի հայոց թեմի թեմական խորհրդի որոշմամբ, տեղի ունեցավ Հայկանուշ Գրիգորյանի ծննդյան ութսուն և եկեղեցանվեր ծա-



ԾԱՆԿԱԿԱՆ ՔԱՆԿԱՆՈՒՄԻ ԵՐԱՐԱՅՈՒՄՆԵՐԻ ԳԵՐԵՉՄԱՆԻՆԻՆ

ռայության քառասունամյակին նվիրած հանդիսություն՝ նախագահությամբ Ադրբեջանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ Ս. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի:

Միջոցառմանը մասնակցում էին թեմական խորհրդի և եկեղեցական գործադիր մարմնի անդամները, եկեղեցու ծառայողները, ինչպես նաև հոբելյարի հարապատները:

Հանդիսության սկզբին սրբազան հայրը ջերմորեն և հարգալից սիրով խոսեց Հայկանուջ մայրիկի անձի և եկեղեցանվեր ծառայության մասին:

Այնուհետև ելույթ ունեցան Բաքվի հայոց եկեղեցու գործադիր մարմնի անդամ Վոլոդյա Հարությունյանը, Բաքվի հայոց հոգևոր հովիվ Ս. Վարդան արեղա Դիլանյանը և շատ ուրիշներ, որոնք իրենց խոսքի մեջ վեր հանեցին տիպար հայ հավատավոր կնոջ օրինակելի կերպարը:

Հանդիսության ավարտին առաջնորդ սրբազան հայրը Հայկանուջ մայրիկին հանձնեց հոբելյանական մի հուշանվեր:

«Հարկս հարկաւորաց, պատիւս՝ պատուաւորաց»:

ԹՂԹԱԿԻՑ



ՉԱՎԵՆ ՔԱՀԱՆԱ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

(Փիլիսոփայության դոկտոր)

ՈՒՒՏԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՍՏԻՈ ԵՎ ԻՐ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԸ

Ժ դարու հայտնի հայ մատենագիրներեն է Սեբաստիո Ուխտանես եպիսկոպոսը, որուն անունով մեզի հասած է իր միակ երկը՝ հետևյալ խորագրով.

«Չպատմութիւն յերիս հատուածս զոր ասացեալ է Տեառն Ուխտանիսի Սե[բաստացւոց] եպիսկոպոսի, ի խնդրոյ հարն Անանիայի Նարեկավանաց Առաջնորդի և նախաջար վարդապետի: Հատուածն առաջին՝ յաղագս Թագաւորաց և Հայրապետաց մեղոց, և երկրորդն՝ վասն բաժանման վրաց, և երրորդն՝ յաղագս Սկրտութեան ազգին այնմիկ Շաղն կոչեցեալ»:

Բնագրին միակ ձեռագիր օրինակին այս երկար խորագրեն կհասկցվի, թե իրոք Ուխտանես գրեր է երեք մասերն բաղկացած Հայոց պատմություն մը, որուն ինքն իսկ կականարկե իր Նախերգանքին մեջ, որմե սակայն երրորդ հատվածը միանգամ ընդ միշտ կորած է, իսկ երկրորդն ալ փոքր ինչ մասամբ թերի հասած: Ուխտանեսի Պատմության առաջին հատվածը ամբողջական է և սակայն չի ներկայացներ այն առավելությունն ու կարևորությունը, որ կընծայե երկրորդ հատվածը՝ «Պատմութիւն Բաժանման Վրաց ի Հայոց»:

Ուխտանես եպիսկոպոսի երկը մեկ անգամ միայն հրատարակված է, 1871-ին ի Վաղարշապատ, որմե տարի մը առաջ ալ, 1870-ին, ամբողջական բնագիրը Ֆրանսերենի թարգմանած է M. Brosset, Musée asiatique de l'Academie-ի մեջ պահված օրինակի վրայեն, որ իր կարգին ընդօրինակված

էր սկզբնագիր միակ ձեռագրեն: Սկզբնագիր ձեռագիրը այն ատեն ցուցակագրված էր 1675 համարի ներքև և հրատարակված Հակոբ Կարենյանցի Յուցակ-ին մեջ (Թիֆլիս 1865): Վաղարշապատի 1871-ի հրատարակությունը դժբախտաբար սխալաշատ է և գիտական արժեքե վտրկ, ըլլալով հապճեպ հրատարակություն մը՝ հիմնված միակ ձեռագիր օրինակի մը վրա, զի «մի միայն օրինակ գոյր ի Մատենադարանի Մայր Աթոռոյս՝ բոլորգրով օրինակեալ իբր ԺԱ կամ ի ԺԲ դարու», ինչպես հրատարակիչք կենթադրեն Հռաջաբանին մեջ (էջ Ա): Անոնք կհայտնեն նաև, թե «հաճարք գլխոց նորա էին խառն և գրչութիւնն բազմաշփոթ», պարագա մը, որ կպահանջեր առավել ուշադրություն և գրաբարի նկատմամբ ավելի հիմնական հմտություն, քան թե գործը հրատարակված տեսնելու աճապարանք, ինչպես խոստովանած են իրենք. «Փութացաք ընծայել ի լոյս՝ զոր ի ձեռին էր՝ ի վայելս մեղոց և օտարաց» (էջ Բ):

Կուլենք այստեղ միանգամ ընդ միշտ ըսել, թե երախտապարտ ըլլալով հանդերձ առաջին և միակ հրատարակիչներուն իրենց նախաձեռնության համար, չենք կրնար ծածկել այն իրողությունը, թե 1871-ի հրատարակությունը բեռնավորված է լեզվական աններելի սխալներով, հատուկ անուններու խայտաբղետ տառադարձություններով և մանավանդ կետադրության և նախադասությանց ու պարբերությանց շարահարման անտրամաբանական կառուցվածքով: Մեկ

խոսքով տարրական սխալներն իսկ վրիպած են անոնց ուշադրութենեն, և չէ մտածված գոնե հարևանցի բաղդատություն մը ընել Ուխտանեսի օգտագործած աղբյուրներուն հետ և ըստ այնմ ճշտել առ նվազին հայ և օտար իստուկ անունները և անոնց ինքնությունը:

Մենք պարտք հաւարեցինք Ուխտանեսի Պատմության բնագիրը լրիվ խմբագրել, և հաջողեցանք մեր գործին մեջ մասամբ: Կըրցանք առ այժմ սրբագրել քերականական, հատուկ անուններու և կետադրության մարկերուն մեջ առաջին հատվածը միայն՝ «Պատմություն Հայրապետաց և Թագաւորաց Հայոց»-ը, և վայն մեքենագրչալ փիճակի մեջ ընդօրինակած ենք և պատրաստ ունինք ի ձեռին, ապագային հրատարակելու մտոք: Յուրաքանչյուր էջի հատակը նշեցինք սխալները ըստ հրատարակչալ բնագրին և ուղղումը կատարեցինք բուն բնագրի էջերուն մեջ: Նշեցինք էջերուն հատակը նույնպես հայտնի բոլոր սկզբնաղբյուրները, զորս Ուխտանես օգտագործած է, արձանագրելով անոնցմէ կատարված մեջբերումներուն համապատասխանող Ուխտանեսի նախադասություններն կամ պարբերությունները: Առաջին հատվածին համար միայն 150 նոթեր արձանագրած ենք որպէս սրբագրություն և որպէս աղբյուրներու ակնարկություն:

Ժամանակ և մանավանդ մանրամասն աշխատանք պետք է, օգտվելով մասամբ նաև M. Brosset-ի անկախաբար 1871-ի հրատարակութենէն կատարած իր թարգմանութենէն, որպէսզի սրբագրենք նաև Ուխտանեսի երկին երկրորդ և ավելի կարևոր հատվածը՝ «Պատմություն Բաժանման Վրացի Հայոց»-ը, որ շատ ավելի բարդ է և քրիստոսաբանական կետերով խճողված: Առ այժմ սակայն գոհունակ ենք հայտնելու, որ ի մոտո պատրաստ պիտի ըլլա երկին Ա և Բ հատվածներու ամբողջական թարգմանությունը անգլերէն լեզվով, հանդերձ ներածականով և ծանոթագրություններով, և ի լոյս պիտի ընծայվի շուտով:

2. Եռագիրը

1871-ի հրատարակիչները ի ձեռին ունեցած են «մի միայն օրինակ բոլորգրով՝ օրինակեալ իբր ԺԱ կամ ի ԺԲ դարու»: Անկէ տարի մը առաջ M. Brosset ևս շեշտած է, թէ իր ֆրանսերէն թարգմանությունը կատարած է օրինակի մը վրայէն, որ ընդօրինակված էր „d'original unique, partaut le № 1675 du Catalogue d'Etchmiadzine, par M. Hacop Careniantz, Tiflis, 1865“: Անցնող հարյուր տարիներու ընթացքին

Ուխտանեսի երկին ձեռագիր օրինակներու մասին ոչ մէկ նորություն չէ արձանագրված: Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի երկհատոր «Յուցակ»-ին մեջ կան միայն երկու ձեռագիրներ ցուցակագրված, երկուքն ալ Ա հատորին մեջ: Անոնք են.

ա) **Ժողովածու, ԺԷ դար: Թերթ՝ 246:** Թուղթ: 20.2×14.6: Միապյուն: Բոլորգիր, նտորգիր: **Տող՝ 25—28: Մանրանկար՝ 4և:** **Կապմ՝** կաշեպատ տախտակ: **Աստառ՝** դրոշմապարդ կտավ: **Բովանդակություն՝** Գրիգոր Տաթևացոյ Լուծմունք Յոբայ: Ուխտանեսի Պատմություն:

բ) Ուխտանես, Պատմություն. 1852 թ. Երևան: **Գրիչ՝** Ոսկան Յովհաննիսեանց Երեւանցի: **Թերթ՝ 112:** Թուղթ: 36.5×21.5: Միապյուն: Եղագիր: **Տող՝ 38—39: Կապմ՝** ստվարաթուղթ: **Հիշատակարան գրիչ՝ 84բ.** հետագայի՝ պահպանակ Ա (ԺԹ դ.): **Բովանդակություն՝** նաև Դպրություն պատմութեանց եկեղեցոյ:

Կասկած չկա, որ 1871-ի հրատարակիչներուն օգտագործած սկզբնագիր գրչագիրը վերոհիշյալ առաջին Ժողովածուն է, գրված ԺԷ դարուն, որուն սխալմամբ անոնք վերագրեր են «Իբր ԺԱ կամ ի ԺԲ դարու»: Զեռագիրը այն առնէ ի պահ դրված էր «ի Մատենադարանի Մայր Աթոռոյս»: Նույն գրչագիր օրինակին կակնարկէ նաև M. Brosset, երբ կըսէ, թէ Academie-ի գրչագիր օրինակը ընդօրինակված էր հնագույն գրչագրէ մը, որ ցուցակագրված էր Էջմիածնի հատուկ ցուցակին մեջ: Հայերէն բնագրի (1871) և ֆրանսերէն թարգմանության (1871) նմանությունը և կամ երկուքին միևնույն սկզբնաղբյուր գրչագրէն բխած ըլլալը հայտնի կըլլա ուխտանեսի երկին գլխակարգութենէն և գլոխներու հար և նման թվագրումն: Նույնը կհաստատեն նաև երկու հրատարակությանց ենթախորագիրը՝ «ընկալմունքս յերիս հատուածս...», զոր բանացի թարգմանած է Brosset, վերցնելով մեջէն «Սե[բաստացոց]» կարևոր անունը, որովհետև իր թարգմանության գլխավոր խորագիրն եղած է «Oukhtanès d'Ourha» (Ուխտանես Ուռհայեցի): Brosset այս շեղումը կատարած է հետևելով Կարենյանցի ցուցակագրության, ուր Ուխտանես «Ուռհայի եպիսկոպոս» անվանված է: Կիրակոս Գանձակեցի առաջինն եղած է և ժամանակով ավելի մոտիկը Ուխտանեսի, զոր նույնպէս կոչած է նախ «Ուխտանես եպիսկոպոս Ուռհայի» և ապա պարզապէս «Ուխտանես եպիսկոպոս»: Մեր կարծիքն այն է, որ Ուխտանես ծննդաբար հավանաբար եղած է ուռհայեցի և ապա թեմակալ եպիսկոպոս կարգված է Սեբաստիոն նահանգին, ուր և գրած է իր Պատմությունը: Գանձակեցի երբ կխո-

սի իր ժամանակակից հայտնի վարդապետներու մասին, առ հասարակ զիրենք կներկայացնէ իրենց ծննդավայրի անունով, ինչպէս օրինակ՝ Մխիթար Գոշ ծնած էր, կըսէ, Գանձակ քաղաքին մեջ. և կամ Հովհաննէս Սարկավազ Վարդապետն ու Դավիթ Ալավկա որդին՝ ծնած էին Գանձակ գավառին մեջ, ինչպէս նաև նոյն ինքն Կիրակոս: Պարագան տարբեր չէր կրնար ըլլալ Ուխտանեսի համար: Ներքին ապացոյցներ ևս կուգան հաստատելու, որ հեղինակը Սեբաստիա ապրած է և հոն գրած իր երկը: Այս մասին պիտի անդրադառնանք ստորև:

Հեղինակը

Թէ Ուխտանէս իրոք հեղինակն է այս երկին՝ կատուզի նախ իր իսկ բերնէն, երբ ինք իր անունը կուտա՝ «տրուպ աշակերտս և համարձակելի անուանեալս Ուխտանէս», որպէս Անանիա Նարեկա վանքի մեծ վարդապետին աշակերտ, որուն հանձնարարության վրա կգրէ իր **Պատմութիւնը** (էջ 10): Ուխտանէսի հաջորդող հայ պատմագիրներ ևս կակնարկեն իր անունին և գործին, բոլորն ալ ԺԳ դարու հեղինակներ: Կիրակոս Գանձակեցի իր ներածական տողերուն մեջ հիշատակելով իր նախորդները, Հովհաննէս Դրասխանակերտցիէ և Մովսէս Կաղանկատվացիէ ետք կտեղավորէ «Ուխտանէս եպիսկոպոս Ուռնայի որ գրեաց զԲաժանումն Վրաց ի Հայոց ի ձեռն Կիրիոնի», և ապա կհիշէ Ստեփաննոս Ասողկն ու Արիստակէս Լաստիվերտցին: Ան կմանրամասնէ Ուխտանէսի գրածին մասին, ըսելով. «Եւ յայնչմեռէ բարձաւ ձեռնադրութիւնն Վրաց որ ի Հայոց, զի սկսան նոքա զՅունօք թևակոխի: Չայս ամենայն ստուգութեամբ ուսուցանէ քեզ Ուխտանէս եպիսկոպոս, զի նա պամենայն լիով գրեաց, զթողթսն և զպատասխանին, և զքաջախօսութիւնն Պետրոսի եպիսկոպոսի»: Ստեփաննոս Օրբելյան ևս ծանոթ է Ուխտանէսի, զոր ժամանակագրականորեն կդասէ Ը դարու հայ պատմիչ Ղեվոնդ Երեցն անմիջապէս ետք: Ավելին՝ Օրբելյան կձանչեա Ուխտանէսը որպէս «եպիսկոպոս Սեբաստացոց»: Մխիթար Այրիվանեցի և Վարդան Արևելցի պատմիչներն ևս կհիշատակեն Ուխտանէս եպիսկոպոսը որպէս հեղինակ և կձշտեն իր ժամանակը որպէս Ժ դար և ոչ ավելի ուշ: 1273 թվականի **Ժողովածու** մը, որ կըովանդակէ **Հարցմանց գիրքը**, վերագրված Վանական Վարդապետին, թուոյ՝ 108-ի վրա կվկայէ Ուխտանէսի Սեբաստիո եպիսկոպոս ըլլալը: Ուխտանէսի ինքնության մասին ոչինչ գիտենք, բացի իր «Նախերգանք»-ին մեջ կատարած իր ակնարկէն: «Նախերգանք»-ը,

զոր 1871-ի հրատարակիչներ զլուխ Ա-ի ներքև զետեղած են, ընդարձակ գրություն մըն է հորդորական և քարուղական բնույթով, ծանրաբեռնված ավետարանական մեջբերումներով, և գլխավորաբար սիրո մասին ճառ մըն է՝ նման Հովհաննէս Երզնկացի «Դուպ վարդապետի ճառին»: «Նախերգանք» կոչումը մենք տված ենք գրության՝ նկատի ունենալով իր պատմական արժեքն ու անմիջական նպատակը: Հոս է, որ կհայտնվի Անանիա Նարեկացիի հանձնարարությունը և Ուխտանէսի հանձնառությունը, երբ երկուքը իրար հանդիպեցան «Եկր գետոյն որ կոչի Ախուրեան», և Անանիա Նարեկացի, որ նոյն ատեն եկած էր «առ աստուածապատիւ և սուրբ Հայրապետն մեր Խաչիկ», կաթողիկոսին ընծայելու համար իր գրած **Հաւատարմատը**, խոսած է Ուխտանէսի հետ «բերան ի բերան յաղագս պատմութեանս», ինչպէս հստակորեն կվկայէ Ուխտանէս (էջ 11—12): Ոչ միայն պատմական անձինք են, որ կվկայեն Ուխտանէսի ժամանակին և գործին մասին, ինչպէս Անանիա Նարեկացի և Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոս (973—992), այլ նաև ճշտված է Անանիայի և Ուխտանէսի հանդիպման թվականը, «յաւորս ամարայնոյ, յամսեանն Տրէ, որ օր տասն և մին էր ամսոյն, յաւոր կիրակեի, յիններորդ ժամուն» (էջ 12): Թեև տարեթիվը չէ հիշված, սակայն Brosset հաշված է, որ Տրէ ամսու 11-ը կիրակի հանդիպելու համար Յուլիս 6-ը միայն կհարմարէր 973 տարվոյն մեջ: Ըստ այսմ կասկած չի մնար այլևս, որ Ուխտանէս Ժ դարու հայ պատմիչ է, որուն գործն իսկ կվկայէ անոր ժամանակի մասին:

Թէ որքան հավաստի է Ուխտանէսի **Սեբաստացի** կոչումը, այդ ևս դժվար չէ ապացուցանել: Ինչպէս նկատեցինք, բացի Կ. Գանձակեցիէ, իրեն ժամանակակից աղբյուրներ վինք կձանչնան որպէս եպիսկոպոս Սեբաստացի: ԺԷ դարու ձեռագիրը, որմէ հրատարակված է 1871-ի բնագիրը, խորագրին մեջ ներմուծած է «Սե» սկզբնատառերը Ուխտանէսի անունէն անմիջապէս ետք, որոնք կրնային միայն «Սեբաստացոց» վերծանվի, ինչպէս ընդունել են հրատարակիչները: Ուխտանէս մասնավոր ծանոթություն կցուցաբերէ Սեբաստիո նկատմամբ գոնէ երկու առիթներով: Երբ կգրէ Քառասուն Մանկանց նահատակության մասին, կմանրամասնէ ըսելով. «Եւ եկեալ հային ի սահմանս Սեբաստիոյ. դիմեն ընդ իւրաքանչիւր յաջորդութեան՝ ոմանք ի Մելեփոն որ է ամրոց և լեռնակողմ, իսկ այլք ի Տախալասուն՝ որ և այն լեռն, և թափի ի կողմն Տրկնոց, և են զերծ տեղիք և հեռագոյն և ամրոց»: Ասկէ հայտնի կըլլա, թէ հեղինակը ինչ ապրել է և ծանոթ է ամրոց-

ներուն և լեռներուն: Ապա կշարունակե ըսելով, թե նահատակներուն վայրերուն վրա վկայարաններ ջինվեցան, «որ այժմ կոչի եկեղեցեացաձոր»: Նույնպես կհիշե Ալիս գետը, որուն եկերքը կար ամրոց մը, ուր փախստական քրիստոնյայք կպատրաստվեին, որ այն ատեն ամայի էր, «իսկ այժմ շէն, որ կոչի քաջ Վահանայ, որ տակալին դեռնա կայ տեղիք կատարանաց սրբոցն և գիր իրաքանչիւր անուանցն գրեալ ի տախտակա քարանցն... որ այժմ ևս պատուին տեղիք բնակութեանն նոցա»: Այս բոլորը ականատեսի և գործի վրա եղող եպիսկոպոսի վկայություններ են և հստակորեն կարդարացնեն Ուխտանեսի Սեբաստիո եպիսկոպոս եղած ըլլալը: Նույնիսկ Ուխտանես որպէս թեմակալ ինքն իսկ տնօրինած է Սեբաստիո մեջ «տօնել ամ յամէ անխափան ի փառս Աստուծոյ» Քառասուն Մանկանց հիշատակը, զոր «կարգեցաք մեք զօրն զայն տօն Քառասնից»:

Երկը

Ուխտանեսի երկին 1871-ի հրատարակությունը մեկ ընդհանուր խորագիր մը չի տար գործին համար, այլ երկու խորագրեր՝ յուրաքանչյուր հատվածը բացահայտող. ա) Պատմություն Հայրապետաց և թագաւորաց Հայոց, բ) Պատմություն Բաժանման Վրացի Հայոց: Մինչդեռ անկէ տարի մը առաջ Brosset գիրքը կոչած էր *Oukhtanes d'Ourha*, չ՝S. *Histoire en Trois Parties*:

Մենք նպատակահարմար կգտնենք զայն կոչել ընդհանրապէս **Պատմություն Հայոց**, անոր կցելով վերոհիշյալ երկու ենթախորագրերը: Արդարև գործը հընդհանուրն Հայոց պատմություն է՝ երկու տարբեր նյութերով:

Ա. **Նախերգանք**. Ուխտանես իր «Հայրապետաց և Թագաւորաց Հայոց» պատմութենէն առաջ ունի ընդարձակ նախերգանք մը, զոր Վաղարշապատի հրատարակիչները կոչած են Գլուխ Ա, և չենք գիտեր՝ ինչ պատճառով չեն գտած անոր իսկական վերնագիրը, զոր թարգմանաբար կուտա M. Brosset. «Réponse à la lettre d'Anania et promesse d'accomplir ses demandes»:

Սույն նախերգանքը, ինչպէս ակնարկեցինք վերև, պատմական բովանդակությամբ ժլատ է և քարուղական բովանդակությամբ ճոռով և երկարաձիգ, որուն համար ալ Brosset վանց ըրած է անոր թարգմանությունը: Նախերգանքին մեջ նախ հիշված են Փիլիպպոս և Սիմեոն քահանաները, առաջինը Անանիա Նարեկացիի կողմէ զրկված Ուխտանեսի, որպեսզի ներկայացնէ մեծ վարդապետին խնդրանքը անոր. իսկ երկրորդը՝ Ուխ-

տանեսն զրկված Անանիայի, որուն միջոցաւ Ուխտանես գրավոր կերպով կբացատրէ Նարեկացիին իր գործին ծրագիրը: Պատմական կարևոր դեմքերն են անշուշտ Ժ դարու Հայոց պատմության համար թե՛ Անանիա Նարեկացի և թե՛ Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոս, որոնց հիշատակությունները առավել հավաստիք կընծայեն Ուխտանեսի գործին:

Բ. **Պատմություն Հայրապետաց և Թագաւորաց Հայոց**. Ուխտանեսի երկին առաջին հատվածը ամփոփ պատմությունն է հայ ժողովուրդին՝ Ադամեն սկսյալ մինչև Տրդատ Գ Արշակունի թագավորին շրջանը (298—330), և կբաղկանա 75 գլուխներէ, առանց հաշվելու առաջինը, զոր մենք «Նախերգանք» կոչեցինք: Գործին այս առաջին մասը նվազ կարևորությամբ կներկայանա մեզի, քանի որ Ուխտանես պարզապէս կրկնած է՝ ամփոփելով ինչ որ գտած է Մովսես Խորենացիի **Հայոց պատմութեան** և Ագաթանգեղոսի **Պատմութեան** մեջ: Ան օգտագործած է նաև Չենոբ Գլակի **Պատմություն Տարօնոյն**-ն և Եվսեբիոս Կեսարացիի **Եկեղեցական պատմություն**-ը և **Ժամանակագրություն**-ը: Պատմագետի մը գործը չէ կատարած Ուխտանես, այլ ամփոփած է անհաջող կերպով, ինչ որ հիշյալ հայ և հույն պատմիչները գրած են, և ինք իր ուզած ձևով և իր նախասիրած դեպքերն ու դեմքերը արտագրած է անոնցմէ, ոչ իսկ ըստ բովանդակության, այլ ըստ կամս հապճեպ կերպով, տող մը կամ երկուս վերցնելով Մ. Խորենացիի **Հայոց պատմութեան** տվյալ գլուխի սկիզբէն, տող մըն ալ մեջտեղէն և եզրակացությունն ալ նույն գլուխի վերջավորութենէն: Նույն ձևով վարված է Ագաթանգեղոսի հետ: Իսկ Հռոմայեցի կայսրերու և եկեղեցական հայրերու ու հերետիկոս-աղանդավորներուն անունները քաղած է, երբեմն անուշադիր կերպով, Եվսեբիոսի հիշյալ գիրքերէն: Հանվանէ կհիշե Մովսես Խորենացին բազմիցս, որպէս իր հիմնական աղբյուրը, և կակնարկէ Ագաթանգեղոսին «որպէս ասէ պատմագիրն» բացատրությամբ: Անգամ մըն ալ հանվանէ կհիշատակէ Չենոբ Գլակը:

Սա անշուշտ ըսել չէ, թե Ուխտանեսի գործին առաջին մասը արժեքն բոլորովին փութի է: Անոր արժեքը թերևս հոն պետք է փնտրել. ուր կարելի կլլա բաղդատություններ ընել, տահմանափակ տարողությամբ, Խորենացիի և Ուխտանեսի բնագիրներուն միջև, և տեսնել, թե մեզի հասած Խորենացիի բնագիրը որքան հարապատ է, քանի որ Ուխտանեսի կարդացած և օգտագործած Խորենացին շատ ավելի հին է և վավերական, քան մեր ձեռքը հասած Խորենացիի հնագույն բնագիրը: Ուխտանեսի մեկ առավելությունն ալ այն է, որ յուրաքանչյուր հայ

թագավորի և անոր գործերու մասին խոսած ատեն պուգահեռաբար տված է նաև ցանկը հռոմայեցի կայսրերու, հույն հայրապետներու, ինչպես նաև պատճառն է եկեղեցական պատմության հետ առնչություն ունեցող դեպքերը համառոտ կերպով: Հընդհանուր Ա մասը կնամանի առձեռն դասագրքի մը, որ կրնար օգտագործվի իր ատենին հոգևորականներու և ուսանողներու կողմէ:

Պատմագիտական արժեքավոր նյութ մըն է **Գահնամակ**-ի ակնարկությունը, զոր կընեն Ուխտանես իր Ա հատվածին մեջ: Ուխտանեսի ծանոթ եղած է Գահնամակը, որ պետականորեն վավերացված ցուցակն էր հայ նախարարներուն: Հոն կկարդանք. «Քանզի խորհուրդ արարեալ Վաղարշակայ մեծի արքային Հայոց, առաքէ հրովարտակ առ Արշակ մեծ եղբայր իր ի ձեռն Մարեբայ Կատինեայ, որունել պիտանն արքունի և տալ Վահնամակ նախարարացն Հայոց»: Ըստ խորենացիի Վաղարշակ հայոց թագավորն էր և եղբայրը պարսից արքայի՝ Արշակի: Վաղարշակ, ըստ Ուխտանեսի, կխնդրէ իր եղբորմեն, որ պարսից արքայական դիվանին մեջ փնտրել տա և գտնէ հայ նախարարներու Գահնամակը: Արշակ պարսից արքան կթույլատրէ, որ պարսից դիվանը բացվի Մարաբա Կատինայի առջև, ուր այս վերջինը կգտնէ հայոց Գահնամակը և իսկույն կբերէ ու կհանձնէ հայոց Վաղարշակ թագավորին: «Իսկ նա առեալ պօրինակն՝ նախարարութիւնս կարգէ իւրաքանչիւր ունեք բարձ և պատիւ տալով նախարարացն»: Թագավորը նախ կհաստատէ իր թագավորությունը. «Նախ և առաջին օրինադրէ պինջըն և փտուն իւր, սկիպըն առնելով ի գլխու իրմէ և ի թագէ», և ապա Բագարատ իշխանին կհանձնէ «Թագակապ ասպետությունը», ըստ որում Բագարատունիք Արշակունի հայ թագավորներու թագը կապելու պաշտոնը պիտի ստանձնեն և կոչվեն «Թագադիր» և «Ասպետ», տալով Բագարատի նաև «պտա-նուտերական պատիւն»: Հետևելով Գահնամակին, Վաղարշակ կհաստատէ նաև այլ նախարարական տոներ և կանվանէ զանոնք, դարձյալ ըստ Ուխտանեսի, այսպես. «Առաջին՝ Սիւնեաց Տէր, երկրորդն՝ Ասպետ Բագարատունի, երրորդն՝ Արծրունի, չորրորդն՝ Մախապունի, հինգերորդն՝ Մամիկոնեան»: Ասոնցմէ վատ կհաստատէ նաև այլ նախարարություններ, յուրաքանչյուրը իր հատուկ իշխանությամբ: Այս բոլորեն հայտնի կդառնա, որ Ուխտանես ծանոթ եղած է այս կարևոր քաղաքական վավերագրին՝ **Գահնամակ**-ին, և զայն օգտագործած է Ժ դարուն:

Սակայն հոս հարց կծագէ, թե իրապես ո՞վ է Վաղարշակ հայոց թագավորը, որ իր

ձեռքին տակ ունեցած է Գահնամակը հայ նախարարներու: Ինչպես հաճախ ըսինք, Ուխտանես խորենացիին է, որ կքաղէ իր տեղեկությունները, որմէ նաև՝ Վաղարշակ հայ Արշակունի թագավորի մասին, որ, ինչպես Հ. Մանանդյան ցույց տված է, իրականին մեջ հայոց Վաղարշ Բ թագավորն է (186—198 հ. Ք.): Ուրեմն, եթե Գահնամակը առաջին անգամ օգտագործող թագավոր մը կար, այն ալ պիտի ըլլար Վաղարշ Բ-ը: Ուխտանեսի տված արժեքավոր նորությունը Գահնամակի վերոհիշյալ ակնարկությունն է, զոր **խորենացիին չէ քաղած**, որովհետև խորենացի հանվանէ չէ հիշած Գահնամակը, թե իսկ օգտագործած ըլլա վայն: Ուխտանես ուրեմն միակ հայ պատմիչն է, որ այս հայ նախարարական կազմի ցուցակը և անոր գոյությունը կապած է հնագույն թագավորի մը հետ, այսինքն Բ դարու վերջին տասնամյակին հետ: Անոր փնտրտուքն ու գործածությունը կվերագրէ պատմական ավելի հին անձի մը՝ Վաղարշ Բ Արշակունի հայոց թագավորին, մինչդեռ մեզի հասած Գահնամակի ներածական բացատրագիրը Սահակ Պարթև Հայրապետի (338—439) կվերագրէ անոր ծագումը, Արտաշես Արշակունի (422—428) հայոց թագավորի օրով և պարսից Վռաժ Ե Կրման (418—438) արքայի հրամանով:

Այս ապացույց մըն է, որ Գահնամակը, որուն ստեղծումն ու գործածությունը ավելի հաստատ կերպով կվերագրվի հայոց Խոսրով Դ թագավորին (385—388), իր նախնական ձևին մեջ գոյություն ուներ անկէ զոնէ երկու հարյուր տարի առաջ: Մեր կարծիքով մեզի հասած Գահնամակը «նոր» խմբագրությունն է սկզբնագիր օրինակին, ինչպես Ս. Երեմյան սկսած է խորհիլ և սակայն չէ կրցած իր թեզը եզրակացնել, չգիտնալով կամ չդիմելով Ուխտանեսի ակնարկության: Անշուշտ չենք գիտեր, թե Ուխտանես ի՞նչ աղբյուր օգտագործած է Գահնամակի գոյությունը և օգտագործումը տանելու մինչև Բ դարու վերջը: Կրնա ըլլալ, որ ան, խորենացիի վերագրածը «Վաղարշակ»-ի՝ որպես նախարարական տոներու կազմակերպիչ ա՛յնքան կարևոր նկատած է, որ անհրաժեշտ տեսած է Գահնամակի գոյությունն ու գործածությունը կապել նույն թագավորին հետ (Մ. խորենացի, **Պատմություն**. Բ, Է): Շատ հավանաբար այս վարկածը նկատի ունենալով, բանասերներ արժեքէ պտրկ համարած են Ուխտանեսի տեղեկությունը: Ն. Ադոնց միակն է եղած, որ կարևորություն ընծայած է Ուխտանեսի, գնահատած է զայն՝ ըսելով, թե նախ Ուխտանես Ժ դարուն տեսած է Գահնամակի մը բնագիրը և՛ գործածած. երկրորդ՝ թե Ուխտանեսի շատ հա-

կիրճ ակնարկությունը կարգադրե և կամ կվերահաստատե Մաղխապունի նախարարության տեղը որպես «չորրորդն», բան մը, որ բոլորովին կպակսի մեզի հասած Գահնամակի ցանկեն և միայն վերնագրին մեջ է, որ կհիշվի. և վերջապես՝ թե Գահնամակը իր ավդեցությունն ու գործածելիությունը պահած է մինչև Ժ դար, և թե նույն դարուն անոր հնությունը փոխադրված է մինչև Բ—Գ դարերը:

Գահնամակը հայոց նախարարական տուներու և անոնց համապատասխան պատիվներու պաշտոնական փաստաթուղթն է, քաղաքական և ռազմական բնույթով, ուր կերևի հայ նախարարներու ցանկը ըստ կարգի և աստիճանի: Ան իր ներկա ձևին մեջ ստեղծված է Ե դարուն, և սակայն Ն. Ադոնցի կարծիքով կվերաբերի մարպպանական Հայաստանին, ու Մովսես Խորենացի պայն

գործածած է: Մեզի հասած Գահնամակը պաշտոնական ծագում չունի, կըսե Ադոնց, և ստեղծված է հավանաբար Է դարուն: Իսկ Ս. Երեմյան կխորհե, թե «Նոր Գահնամակը» և անոր վրա հիմնված Ջորանամակը Սահակ Պարթև Հայրապետի ջանքերով 432 թվականին ծագում առած են և Տիվերոսի մեջ պարսից արքունիքին մեջ հաստատված՝ Վռամ Ե արքայի կողմէ: Երեմյան կավելցնե, թե «նոր» Գահնամակը մարպպանական շրջանի վավերաթուղթ է՝ ստեղծված «հին»-ի վրա: Բ. Հ. Հարությունյան եղած է վերջին բանասերը, որ լուրջ ուսումնասիրություն մը հատկացուցած է Գահնամակի թվագրման մասին՝ եզրակացնելով, թե անոր ծագումը իր ներկա վիճակին մեջ կպատկանի հայոց Խոսրով Դ թագավորին, 388 թվականին:

(Շարունակելի—Ա)

ՀԱՅՈՐԲ ԾԱՅՐ. ՎՐԴ. ԳԸԼԸՆՃՅԱՆ.

ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐ ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՑ,
ՔԱՂՎԱԾ ՆՐԱ ՄԱՍԻՆ ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ
ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐՔԻՑ
(Մահվան յոթանասունամյակի առթիվ)

«Էջմիածին» ամսագրի 1984 թ. Բ համարում խոստացել էինք Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի մասին գերմաներեն լեզվով հրատարակված գրքից թարգմանաբար որոշ մասեր ներկայացնել:

Ահա Կարապետ եպիսկոպոսի պրոֆ. Լոռֆսին գրած նորահայտ նամակների մի մասի թարգմանությունը: Այդ նամակները առավել ևս բացահայտում են սրբապանի գիտական պաշարը, նրա ազգային և եկեղեցական գիտակցությունը: Կարող ենք անվարան ասել, թե այն մտավորական սերունդը, որ անցյալ դարու վերջավորության ուսում առավ Գերմանիայում և կարևոր նըպաստ բերեց հայ ժողովրդին պանապան բնագավառների մեջ՝ շատ բան պարտական է Կարապետ եպիսկոպոսին: Սրբապանը անձամբ միջնորդել է գերմանացիների մոտ, որ իր հայրենակիցները ընդունվեն համալսարաններում և նյութապես էլ ապահով լինեն, որովհետև տառապանքի մեջ էր հայ ժողովուրդը և ուսումնաստենչ իր պավակներին պետք եղած չափով չէր կարող գոհացում տալ: Ընտրիվ սրբապանի օտար շրջանակներում ունեցած այն մեծ հմայքին՝ կարելի է դառնում, որ բավարթիվ հայ երիտասարդներ Գերմանիայում գիտելիքներ ամբարեն: Գերմանացիների օգնությունը, ըստ սրբապանի, նրանց կողմից պետք չէ մի ողորմություն համարվի, այլ այդ օգնությամբ մտավորապես պիտի պատրաստվեն այն «հոյակապ տղաները», որ «պատիվ կարող են բերել որևէ մեկ ժողովրդի համար»: Ուրեմն հայ ժողովուրդը իր թշվառության մեջ ան-

գամ պահում է իր վեհությունն ու արժանապատվությունը:

Այս անտիպ նամակներում Կարապետ եպիսկոպոսը քննարկում է մի քանի հարցեր, որոնք էապես կապ ունեն մեր եկեղեցու դավանաբանական հարցերի և պատմության հետ: Նա նույնիսկ մատնանշում է, թե ինչպես օտար հեղինակներ սխալ տեղեկություններ են տալիս Հայ եկեղեցու մասին: Ինքնին այս հարցերի քննարկումը պրոֆ. Լոռֆսի հետ փաստն է այն բանի, որ սըրբապանը կարողացել է մեծ հետաքրքրություն առաջացնել օտարների մոտ՝ հանդեպ հայ ազգին: Մեզ մնում է միայն հիանալ այս բացառիկ, տաղանդաշատ հայ եկեղեցականի անձնավորությամբ և մաղթել, որ մեր եկեղեցին, մոտիկ ապագայում, նրա կյանքն ու գործունեությունը պատշաճ հրատարակությամբ պանծացնի:

Կարապետ եպիսկոպոսի ցարդ չհրատարակված նամակները՝ ուղղված պրոֆ. Ֆ. Լոռֆսին.¹

Մեծահարգ տիար պրոֆեսոր,

Չգիտեմ, թե Դուք ինձանից մի լուր սպասեցի՞ք արդյոք: Այսուհանդերձ ինձ համար ցավալի է, որ այսքան երկար ժամանակ առիթը չօգտագործեցի նամակագրությամբ իմ անկեղծ և երախտապարտ նվիրվածությունը հայտնելու իմ սիրելի և հույժ գնահատելի ու-

¹ Sabine Stefan, Karapet Episkopos Ter-Mkrtschian, Halle 1983, էջ 68—76:

սուցչին: Բայց ես հուսով եմ, որ դուք միշտ սիրով եք հիշում հեռավոր արևելքում ապրող Ձեր ուսանողին, ինչ որ ի միջի այլոց ապացուցվում է «Աբեհինյան Եկեղեցու» մասին գրած Ձեր հոդվածում, որը, ի դեպ, մենք մեր «Արարատ» ամսագրի համար թարգմանեցինք: Իմ ճակատագրի և իմ գործունեության մասին հավանաբար ընկեր <Ուսեփյանից>² որոշ բաներ լսեցիք, դրա համար էլ չեմ ցանկանում ամեն ինչ ծայրից սկսել: Ինչ վերաբերում է իմ թըշվառ հայրենակիցների ճակատագրին՝ շատ բան կա այդ մասին ասելու և դա անշուշտ Ձեզ համար էլ հետաքրքրական պիտի լիներ, բայց ես մտածում եմ, որ Դուք առանց այդ էլ բավականաչափ տեղեկություն եք ստանում այդ տիտոր իրավիճակի մասին: Մյուս կողմից էլ ներկայի դժբախտ կացությունների առաջ, երբ ամբողջ աշխարհը օգնություն և գթություն է աղաղակում, իսկ նրանք, ովքեր կարող են օգնել՝ ոչինչ չեն փիջում իրենց առաջնակարգ դրությունից, ուրեմն, մեր նման մեկը սիրտ չունի այլևս փութ տեղը մատը խոր վերքի վրա դնելու³:

Պատճառը, որ ինձ այսօր հատկապես մղում է սույն գրության շնորհիվ Ձեզ ձանձրոյթ տալու՝ իմ երկու ընկերների հարցն է, որոնք վերջերս ուսանելու համար այդտեղ են ժամանել: Երկուսն էլ վանականներ են, վարդապետներ և սաներ մեր ճեմարանի, որոնք ուղարկվեցին Գերմանիա՝ ճեմարանի համար որպես դասախոս պատրաստվելու: Նրանցից մին, Հուսիկ վարդապետը⁴, պետք է որ արդեն Հալլեում լինի և հավանաբար արդեն իսկ ներկայացել է Ձեզ. դպրոցական տարեշրջանը հենց որ բացվի՝ նա պետք է սկսի այդտեղ իր ուսման հետևել, նա փափագում է իրեն Նոր Կտակարանային մասնագիտությանը նվիրել: Մյուսը, Եվնիկ վարդապետը⁵, դեռ շարունակում է իր կեցությունը մի պոմերական գյուղում⁶, մի պաս-

տորի մոտ և նոր միայն նոյեմբերի կեսին կարող է մի համալսարան հաճախել, բայց թե որ համալսարանը և կամ թե որ ճյուղերին հետևելու համար, ավելի բանասիրական, թե՞ աստվածաբանական՝ դեռևս նա չի որոշել: Այս հարցում սակայն ամենից անհաճոն այն է, որ շուտով երկուսն էլ առանց օժանդակության են մնալու և կարող են ետ՝ հայրենիք դառնալու պահանջն զգալ: Արդարև նրանք ի հաշիվ մի կտակի ուղարկվեցին, որը այս նպատակի համար ամբողջ առաջ մի հարուստ հայ վաճառական խոստացել էր. հետո սակայն նա որոշյալ գումարները մի բարեօրինակ ընկերության հանձնեց. վերջինս չի ուզում դրանց տոկոսները հիշյալ նպատակի համար վճարել, որովհետև այս նպատակը իր օրենքների տրամադրությունից դուրս է նկատում: Ներկայումս սակայն մեր վանքը գրեթե անկարող է հիշյալ վարդապետներին նյութապես նեցուկ կանգնել, որովհետև այն օրական ավելի քան հազար մարդու սնունդն է հոգում, որոնք մեծաթանաթյամբ թրջական տարածքից եկած, միջոցներից և բնակարանից փութ գաղթականներ են. իսկ ճեմարանը, որ վանքի հաշվին է պահվում, այս տարի ստիպված է եղել ավելի քան 200 գիշերօթիկ սաների ընդունել (որովհետև դրսում ծխական դպրոցները դեռևս շարունակում են փակ մնալ և թրջական տարածքից բազմաթիվ երիտասարդներ են գալիս ու ցանկանում սովորել), մինչդեռ նախորդ տարում միայն 130 սան ուներ: Այսպիսով ես գալիս եմ խնդրելու, թե արդյոք հնարավոր չէ՞ հրականացնել հենց Ձեր իսկ կողմից արտահայտված ցանկությունը՝ գերմանական համալսարաններում մի քանի ձրի տեղ ապահովելու հայ ուսանողներին: Եթե Դուք, օրինակ, բարեհաճեիք Հուսիկ վարդապետի համար մի ձրի հանրակացարան Հալլեում ձարել՝ այն ժամանակ մենք հավելյալ ծախսերի համար անշուշտ մի քանի հարյուր ռուբլի մեջտեղ կբերենք: Նույն վերաբերում է նաև Եվնիկ վարդապետին, այդտեղ Հալլեում կամ էլ մի ուրիշ համալսարանական քաղաքում օժանդակություն ստանալու համար: Ես երկուսին էլ կարող եմ Ձեզ լավագույնս հանձնարարել. նրանք հոյակապ տղաներ են, որոնք կարծում եմ, որ Ձեր համակրանքին էլ պիտի արժանանան և որոնց Դուք կարող եք վստահությամբ յուրաքանչյուրին ընտանեկան հարկից ներս առաջնորդել: Գերմանացի մեծ վաճառականների համար հայ ժողովուրդը կարող է «անարժեք» նկատվել, բայց փառք Աստուծո, նա դեռևս ունի զավակներ, նույնիսկ իր թշվառ վիճակում, որ պատիվ կարող են բերել որևէ

² Խոսքը Գաբրիել Հուսեփյանցի մասին է, հետագայում Կիլիկիո կաթողիկոս: Նա ճեմարանն ավարտելուց հետո՝ ուսանել է Գերմանիայում և իր «Entstehung der Monotheismus» գրքով, հրատարակված Լայպցիգում, 1897 թ., միջազգային մակարդակով մուտք է գործել գիտական ասպարեզ:

³ Աս ակնարկով Տեր-Մկրտչյանը նկատի ունի 1895/96 թթ. հայկական կոտորածները Օսմանյան կայսրությունում:

⁴ Հուսիկ Չոհրապյան, հետագայում արքեպիսկոպոս: Ճեմարանավարտ և շրջանավարտ Հալլեի համալսարանից: 1912 թվականից մինչև 1942 թ. Ռուսիայի հայոց առաջնորդ:

⁵ Նույնպես ուսանել է Գերմանիայում:

⁶ Նախկին հյուսիսային Գերմանիայի շրջաններից, Արևելյան ծովի ափին:

ժողովրդի համար, և իմ ընկերներն էլ այդպիսիների թվումն են:

Բայց ես այժմ պետք է որ դասավանդության շտապեմ. ներեցեք ինձ խնդրեմ այսօրվա համար: Եթե Ձեզ հետաքրքրում է՝ ընկերս կարող է Ձեզ պատմել իմ, ինչպես և մեր դրությանց մասին: Թույլ տվեք ես մի անգամ Ձեր սիրալիր աջակցությունը նրա համար խնդրել, միաժամանակ սրտագինս և խորին հարգանքով ողջունել Ձեզ, ինչպես նաև Ձեր տիկնոջն ու իմ մեծահարգ պրոֆեսորներին:

Մնամ Ձերդ անկեղծորեն՝

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ

5 (18) հոկտեմբերի 1896

Էջմիածին

Մեծահարգ տիար Պրոֆեսոր,

Ներեցեք ինձ, խնդրեմ, որ իր ժամանակին չպատասխանեցի Ձեր բացիկին, հակառակ որ Դուք բարեհաճությունն էիք ունեցել ինձ Ձեր Symbolik-ը⁷ խոստանալու: Երկար տարիներ լարվածությամբ սպասեցի ինձ անբա՛ն հետաքրքրող այդ գրքի հրատարակմանը և այժմ իրապես տարօրինակ եմ գտնում, որ չեմ շտապել շնորհավորելու, ինչպես նաև իմ շնորհակալությունը հայտնելու Ձեզ այդ գրքի հրատարակման առիթով (հրատարակչատան մի հայտարարությունից իմացա, թե արդեն իսկ գրքի հրատարակումը ավարտվել է), ոչ էլ Ձեզ լուր տալու, թե որ ճանապարհով ես այն կարող կլինեմ ապահով ստանալու: Ես կարծում եմ, որ այն ուղիղ ճանապարհով էլ, առանց գրաքննության առարկության, կհասնի, որովհետև մեր մոտ մի աստվածաբանական գրքի վրա այնքան էլ ուշադրություն չի դարձվում: Բայց առավել ապահով լինելու համար՝ այն կարող եք Օդեսա, Գրիգոր ավագ քահանա Խորասանձյանին կամ Թբիլիսի, Գյուտ ավագ քահանա Աղայանցին հասցեագրել. նրանք ավելի դյուրությամբ կարող են գիրքը գերությունից ազատել: Եթե այն ինձ այս ձևով չհասնի՝ այն ժամանակ մի ուրիշ ճանապարհով ես այն կպատվիրեմ: Շատ հետաքրքիր եմ տեսնելու այդ գիրքը: Իսկ եթե Դուք արտոնեք՝ իմ նկատողությունները մեր և մեր հարևան եկեղեցիների մասին հետո Ձեզ կհաղորդեմ:

⁷ Խոսքը վերաբերում է պրոֆ. Ֆ. Լոնգսի հետևյալ գրքին՝ Symbolik oder christliche Konfessionskunde, 1. Bd. Tübingen und Leipzig 1902.

Ժամանակին ես Ձեզ խոստացա Կուպի⁸ հրատարակությունը, սակայն դրանից հետո մի ավալիսի կացության մասնակցի, որ երկար ժամանակվա համար ստիպվեցի աշխատանքը դադարեցնել⁹: Ինձ մնում է հրաժարվել տեսչի պաշտոնից, որպեսզի նորից կարողանամ նման աշխատանքներով պրազվել. այս բանը հավանաբար ներկա ուսումնական տարեշրջանի ավարտին արդեն իսկ կատարված կլինի: Ի միջի այլոց, տարիներից ի վեր մտադրված եմ թարգմանելու Ավետարաններն ու ընդհանրապես Ս. Գիրքը աշխարհաբար հայերենի: Մատթեոսի Ավետարանը արդեն իսկ ներկայացրել եմ Նորին Սրբություն Վեհափառ Հայրապետին՝ իր ծննդյան 82-րդ տարեդարձի առթիվ. հուսով եմ, որ շուտով այն լույս կընծայեմ և կարող կլինեմ մնացյալ թարգմանությունը ջարտանակելու¹⁰:

Ինձ հիշելու բարեհաճությունն ունենալու համար կրկին անգամ շնորհակալությունս հայտնելով Ձեզ, միաժամանակ լի հարգանքով ողջունելով Ձեր թանկագին հարապատենին՝

Մնամ Ձերդ

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ

20 ապրիլի (3 մայիսի) 1902

Էջմիածին

Մեծահարգ տիար Պրոֆեսոր,

Ինչքան հանցավոր եմ զգում ինձ Ձեր առաջ: Ավելի քան ամբողջ մի տարի է անցել այն օրվանից, երբ ես բարեկամաբար ինձ ուղարկած Ձեր Symbolik-ը ստացա և չեմ կարողանում լավ հիշել, թե արդյոք նվազագույնը Ձեզ մի շնորհավորական խոսք գրեցի կամ ոչ: Հայոց Եկեղեցու վերաբերյալ հատվածի թարգմանությունը արդեն իսկ հրատարակել տվեցի մեր «Արարատ» ամսագրի 1902 թ. հուլիս/օգոստոս համարում, իսկ սեպտեմբեր/հոկտեմբեր համարում նրա մեջ քննարկված մի քանի կարևոր հարցերի մասին էլ մի մանրամասն վերլուծություն և մեկնաբանություն գրեցի: Ապա անցնող ուսումնական տարեշրջանում Symbolik-ը ճեմարանում դասախոսեցի և Ձեր արժեքավոր

⁸ Հեղինակը նկատի ունի «Տիմոթեոս եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ հակաճառությունն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի», Էջմիածին, 1908:

⁹ Կարապետ եպիսկոպոսը 1899 թվականից ի վեր եղել է Գևորգյան ճեմարանի տեսուչ և իսկապես էլ 1903 թ. հրաժարվել է այդ պաշտոնից:

¹⁰ Սրբազանի այս ցանկությունը չի իրականացել:

գիրքը որպես ձեռնարկ իմ դասավանդություններին օգտագործեցի: Միշտ մտադրություն ունեցա Հայոց Եկեղեցու մասին Ձեր գրած ուսումնասիրության վերաբերյալ իմ կարծիքը մի գրախոսականի ձևով կամ պարզապես նամակով Ձեզ ուղարկել: փորձեցի մի քանի պատժամ գտնել՝ մանրամասն և առարկայորեն գրել կարողանալու համար, սակայն նպատակս չկարողացա իրագործել: Այժմ մենք ամառով արձակուրդների կեսին լինելով և ճամբորդելու մտադրություն ունենալով՝ գտնում եմ, որ եթե ես հիմա մի կերպ իմ պարտականությունը չկատարեմ՝ այդ դեպքում ընդմիջտ այս թերացման պատասխանատուն պիտի լինեմ: Բայց ես ստիպողական պարտականությունների մեջ եմ և խնդրում եմ ներել ինձ հաճառատակի արտահայտվելու համար: Ձեր գրքից քաղած այն լավագույն գիտելիքների համար՝ ընդունեցեք իմ հապաղած, բայց և սրտագին շնորհակալությունը և ավանաբար ներեցեք իմ անփութությանը: «Արարատ» ամսագրի վերոհիշյալ համարները Ձեզ համար ուղարկել պիտի տամ. հավանաբար Ձեզ պիտի շահագրգռի որոշ բաներ իմ ուսումնասիրությունից Թոփչյանի¹¹ կամ մի ուրիշ հայի միջոցով թարգմանել տալը և նրա բովանդակության մասին գաղափար կազմելը:

Ամենից առաջ ես պաշտպանել եմ հայոց քրիստոնեության վաղժամանակյան լինելը, այն հիման վրա, որ Հայաստանը առաջին դարում շատ սերտ հարաբերության մեջ է եղել Պաղեստինի հետ և այսպիսով անխուսափելի էր, որ հենց առաջին տասնամյակներում քրիստոնյա քարոզիչներ այնտեղ եկած չլինեին: Մեհրուժանի¹² հիշատակումը ոչ միայն ապացուցում է, որ երրորդ դարում քրիստոնյաներ կային Հայաստանում, այլև՝ թե արդեն իսկ երկար ժամանակից ի վեր մի կազմակերպված քրիստոնեություն գոյացել էր այնտեղ: Պողոսը Քրիստոսի միակ առաքյալը չէ. արդարև եղել են նաև այնպիսիք, ովքեր գնացել են դեպի Արևելք, սակայն նրանց մասին գրավոր հիշատակներ չեն մնացել: Այնուհետև, Գեղեցի¹³ հակառակ, ես հաստատում եմ, թե Վաղարշապատը կաթողիկոսական առաջին նստավայրն

է եղել, թե մարդ չի կարող Կեսարիայում ձեռնադրություն ստանալու¹⁴ անորոշ պատմության վրա որևէ մի ենթակայության տեսություն հիմնել, և այլն: Ոչ թե հայրենասիրական զգացումից ելնելով գրեցի այս բոլորը, այլ՝ պատմություն հասկանալու կարողության չափանիշով՝ այս է իմ կատարյալ համոզումը: Գեղեցիք իր փաստարկումների մեջ ավելի հավատք է ընծայել Փավստոսի հռետորական և սեղմ հայրենասիրական ավելորդաբանություններին, որով և աննկատ է թողել բացահայտ իրականությունները: Բայց ես այժմ չեմ կարող մի քանի բառով իմ մտքերը պարզաբանել. այնտեղ, իմ վերլուծականում, այդ ամենը բավական մանրամասն կատարված է: Բայց այն, ինչ որ Ձեզ հավանաբար ավելի պիտի հետաքրքրի՝ մի քանի նոր աղբյուրների և հետապատությունների շնորհիվ ի նպաստ Հայ Եկեղեցու պատմության ձեռք բերված արդյունքներն են, որոնք ուշացած են տեղ գրավելու իմ հոգվածում: Այժմ, որոշ է, թե Բաբկենի ղեկավարած ժողովը տեղի չի ունեցել 491 թվականին Վաղարշապատում, այլ՝ 506 թ. Դվինում, որը ուղղված էր նեստորականների դեմ: Ոչ թե այս նշվածը, այլ Դվինի 2-րդ ժողովը, 554 թ., Ներսես Բ կաթողիկոսի նախագահությամբ, վճռական նշանակություն ունեցավ մի նոր ջրջան բանալու Հայ Եկեղեցու և նրա վարդապետության պատմության մեջ: Առաջին անգամ այդտեղ է, որ հանդիսավոր կերպով դատապարտվեց Քաղկեդոնի ժողովը, և այդտեղ է, որ հարաբերությունների մի անմիջական խզում գոյացավ կայսերական եկեղեցու հետ: Բաբկենի, ինչպես նաև Ներսես Բ-ի վարդապետական նամակները, այժմ մի շատ արժեքավոր ժողովածուի մեջ են հրատարակված¹⁵: Դրանք տարիներ առաջ արդեն իմ կողմից քննարկված և ստուգաբանված են եղել: Ներսեսի գրած մի շրջաբերականում է, որ առաջին անգամ լինելով՝ հանդես են գալիս պավղիկյանները, — և դա արդեն իսկ 6-րդ դարի կեսին, — ինչպես նաև շատ կարևոր տեղեկություններ են տրվում նրանց կրոնական սովորությունների և նեստորականների հետ ունեցած հարաբերությանց մասին: Դեռևս տարիներ առաջ ցանկացել էի դրա մասին մի հոդված գրել և նամակի թարգմանությունն էլ Ձեզ ուղարկել, սակայն ինձ չվիճակվեց այդ բանն անել: Բացի սրա-

¹¹ Հակոբ Թոփչյան. առաջին կիլիկեցի ձեռնարանավարտը, 1893—1903 թթ. ուսանել է Հայկում: Հետագայում ուսուցիչ Արմաշում և Կ. Պոլսում:

¹² Երրորդ դարի կեսին Հայաստանում պաշտոնավարած մի եպիսկոպոս, որի մասին հիշատակություն կա Եվսեբիոսի եկեղեցական պատմությունում:

¹³ Հենրիխ Գեղեցի (1847—1906), բանասեր և պատմաբան: Պրոֆեսոր Ցենայում, որի աշակերտել են բազմաթիվ հայեր, որոնց թվում Մանուկ Աբեղյանը:

¹⁴ Այստեղ Տեր-Մկրտչյանը դեմ է դուրս գալիս այն տարածված ենթադրությանը, որ Գրիգոր Լուսավորչի Կեսարիայում ձեռնադրվելը նկատում է որպես Հայ Եկեղեցու ենթակայություն Կեսարիայի եպիսկոպոսին:

¹⁵ Ակնարկը «Գիրք Թղթոց»-ի մասին է:

նից, սովորաբար մարդու պատկերացրածից բոլորովին տարբեր է եղել պատմության ընթացքը: 7-րդ դարի վերջում գրական մի ուժեղ ազդեցության շրջան տեղի է ունեցել մեկանում, որը հաջորդ դարում էլ շարունակվել և հունարենից կատարված բազմաթիվ թարգմանություններ մեջտեղ բերել: 9—10-րդ դարերում աչքի են ընկել վանքերը՝ վանական հարուստ գրականությամբ, որ դարեր շարունակ չի դադարել արգասավոր լինելուց: Կիլիկիայում հայերը լատինների և փրանկների հետ են շփվել, այնուհետև ներանք յուրացրել են միջնադարյան սխոլաստիկան և իրենց սեփական հայրենիքում, 14—15-րդ դարերում, փայլուն հաջողությամբ պայքարել են կաթոլիկ քարոսիչների դեմ: 17-րդ դարում հենց Էջմիածնում մի հիմնական փոփոխություն կատարվեց. մի շարք նշանավոր կաթողիկոսներ հույժ կարևոր ծառայություններ մատուցեցին ժողովրդի մեջ եկեղեցական մշակույթի մակարդակի բարձրացմանը... Պետք է այս էլ ավելացնեն, որ Տիեզերական երեք ժողովները, դեռևս 6-րդ դարում, որպես այդպիսիք ընդունված են եղել, սակայն դժվար թե այդ բանը նախքան Բաբելոնը եղած լինի:

...Գալով ինձ՝ դժբախտաբար ակնկալվածից շատ քիչ եմ կարողանում գիտական աշխատանքներով պրաղվել: Հանձնարարու-

թյուն ունեմ Ս. Գրքի մի նոր հրատարակություն պատրաստելու՝ համեմատելով բնագիրը ձեռագրի հետ¹⁶, փորձ եմ անում խմբագրելու Հայաստանյայց եկեղեցու պատմությունը՝ համաձայն աղբյուրային տվյալների¹⁷, ցանկանում եմ նորից ձեռք առնել Տիմոթեոս Կուպի գործը¹⁸, բայց այնքան շատ արգելք հանդիսացող պարագաներ գոյություն ունեն, որ ոչինչ չի իրագործվում ծրագրվածի համաձայն: Դեռևս որոշված չէ, թե հաջորդ ուսումնական տարում այստեղ եմ մղնալու կամ թե նոր պաշտոնի եմ կոչվելու¹⁹: Արդ ներեցեք ինձ աճապարանքիս համար: Բարևներով և հարգանք՝

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ

5 (18) հուլիսի 1903


Էջմիածին

¹⁶ Սույն աշխատանքին կից որոշված էր նաև Հուսիկ, Գարեգին և Երվանդ վարդապետների հետ Ավետարանը աշխարհաբար թարգմանել:

¹⁷ Այս ծրագրի առաջին ժամը իրականացել է հետևյալ հրատարակությամբ. «Հայոց եկեղեցական պատմություն», Էջմիածին, 1908:

¹⁸ Տես ծանոթ. 11:

¹⁹ Կարապետ եպիսկոպոսը 1903 թ. նշանակվել է առաջնորդական փոխանորդ Երևանի թեմի:



ՌՈՒՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԱԳՈՒՄԸ*

ՌՈՒՍՈՒ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

11-րդ դարի ռուս հեղինակները Ռուսիայի ընդհանուր մկրտությունը կապում են Կորսունի կամ Խերսոնեսի նվաճման հետ: Նույն Իակով վանականը (Վլադիմիրի գովքում) հայտնում է. «Քանպի Վոլոդիմեր իշխանը շարունակում էր բարի գործեր կատարել, Աստուծո բարետրությունը լուսավորում էր նրա սիրտը և Տիրոջ ձեռքը օգնում էր նրան, և հաղթում էր իր բոլոր թշնամիներին, և բոլորը նրանից վախենում էին (այնուհետև թվարկվում են Վլադիմիրի նվաճած ցեղերը՝ ռադիմիչները, վյատիչները, յատվյագները, արծաթե բուլղարները, խապարները)... Մտալըրվեց և հունական Կորսուն քաղաքի վրա գնալ: Եվ աղոթում է Վոլոդիմեր իշխանը Աստծուն. Տեր Աստված, Տեր ամենայնի, քեզանից այս եմ խնդրում, թե տաս ինձ այդ քաղաքը, կվերցնեմ և կբերեմ քրիստոնյա մարդկանց և քահանաներին իմ երկիրը, որ մարդկանց քրիստոնեական օրենքը սովորեցնեն: Եվ լսեց Աստված նրա աղոթքները, և նա առավ Կորսուն քաղաքը: Եվ վերցրեց եկեղեցական անոթներն ու սրբապատկերները, սուրբ նահատակ Կլիմենտի և այլ սրբերի մասունքները»:

Իակով վանականը, ինչպես և 11-րդ դարի մյուս ռուս հեղինակները, չի բացատրում, ինչու է իշխանը որոշում նվաճել հունական քաղաք Կորսունը՝ մինչ այդ հույների դաշնակիցը լինելով: Այդ մասին չեն խոսում և հունական աղբյուրները: Բայց 11-րդ դարի Նախաբանում վարքագրական մի ասք նշում է Վլադիմիրի արջավանքի պատճառները: Վլադիմիրը Կորսուն էր ուղևորվել իր հարսնացուին՝ արքայադուստր Աննային նվաճելու համար: Նախաբանում ասվում է.

«Վլադիմիրը գնաց առավ Կորսուն քաղաքը, իշխանին և իշխանուհուն սպանեց: Իսկ նրանց աղջիկը Ժդեբեռնի կինն էր: Չորքերը չարձակելով՝ իր պորավար Օլեգին Ժդեբեռնի հետ Ցարգրադ ուղարկեց նրանց (Բյուզանդիայի կայսրեր Վասիլի և Կոստանդինի) քրոջը իր համար կին ուզելու»:

Արաբական աղբյուրներից, որոնց մասին կխոսվի ստորև, հայտնի է, որ Կորսունի արջավանքից առաջ Վլադիմիր իշխանը Վասիլ կայսեր հետ դաշնագիր էր կնքել բյուզանդական խռովարար Վարդա Ֆոկայի դեմ կռվելու համար ռուսներից ռազմական օգնություն ստանալու մասին: Վասիլ կայսրը դրա դիմաց խոստացել էր իր քույր Աննային կնության տալ Վլադիմիրին, պայմանով, որ նա քրիստոնեական կրոն կընդունի և իր ժողովուրդը կմկրտի: Վլադիմիրը խոստումը կատարել էր, Վասիլ կայսերը օգնական պորք էր ուղարկել, մկրտություն էր ընդունել, որոշել էր մկրտել և իր ժողովուրդը, իսկ հույները դաշնագրի պայմանը խախտել էին և Աննային կնության չէին տվել Վլադիմիրին: Այն ժամանակ նա որոշեց ուժով ստիպել Վասիլ կայսերը՝ կատարելու իր խոստումը, և արջավանքի ելավ Կորսունի վրա:

Վլադիմիրին անհրաժեշտ էր ապգակցական կապի մեջ մտնել Բյուզանդիայի հետ: Նա ձգտում էր ամուսնական կապի միջոցով իր երկիրը բարձրացնել Բյուզանդիայի մակարդակին: Դա նրա առաջ ճանապարհ էր բացում դեպի այն ժամանակ գերիշխող բյուզանդական մշակույթը և ռուս ժողովրդին մտցնում էր քրիստոնյա ժողովուրդների ընտանիքը:

Կորսունի գրավումով և միպիացիների բուլղարների հետ դաշնակցած բուն Ցարգրադի դեմ ուղղված սպառնալիքով Վլադիմիրը հասավ իր նպատակին: Արքայադուստր Աննան ուղարկվեց Կորսուն: Պսակադրությունը կատարվեց քրիստոնեական ծե-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1985 թ. № Ե-ից:

սով նույն այդ Կորսունում: Վլադիմիր իշխանը մկրտվելու կարիք չուներ (ինչպես այդ պահանջում էր դաշնագիրը): Քանի որ նա մինչ այդ արդեն մկրտված էր: Բայց Տարեգրությունն այդ մասին գրում է այսպես. «Եվ մկրտվեց սուրբ Վասիլի եկեղեցում: Եվ այդ եկեղեցին կանգնած է Կորսուն քաղաքում, քաղաքի մեջ այն տեղում, որտեղ Կորսունցիներն առևտուր են անում: Իսկ Վուդդիմերի պալատը եկեղեցու կողքին է մինչև օրս, իսկ թագուհու պալատը բեմի ետևում է»:

Տարեգրական պատմության անճշտությունը բացատրվում է նրանով, որ մինչև Կորսունի արքայազնը Վլադիմիրի մկրտված լինելը թաքուն էր մնում ժողովրդից, իսկ եկեղեցական պատկերացումները Կորսունում ժողովրդի գիտակցության մեջ արտացոլվել է որպես նրա մկրտությունը: Բայց Վլադիմիր իշխանի դրոմիկան և նրան շրջապատող անձինք մկրտվել են հենց այնտեղ՝ Կորսունում, որպեսզի Կիև վերադառնալն արդեն որպես քրիստոնյաներ և ամբողջ ժողովրդին մկրտության օրինակ տան:

Վլադիմիր իշխանը իր կինը դարձած՝ հունաց արքայադուստր Աննայի և քրիստոնյա դրոմիկայի հետ հոգևորականության ուղեկցությամբ, սրբապատկերներով ու խաչվառներով վերադարձավ Կիև, ձեռնարկեց ողջ ժողովրդի մկրտությունը:

Տարեգրությունն այդ մասին վկայում է այսպես. «Իսկ Վուդդիմերը դրանից հետո, վերցնելով թագուհուն և Նաստասին (սկատի ունի Անաստաս երեցին, որ աջակցել էր Վլադիմիրին Կորսունը գրավելու) և Կորսունի քահանաներին, սուրբ Կիմենտի և Թեբի՝ նրա աջակցողի մասունքներով, վերցնելով եկեղեցական անոթներն ու սրբապատկերները՝ իրենց որպես օրինություն: Իսկ Կորսունը որպես փրկանք թագուհու համար նորից հույներին տվեց և ինքը եկավ Կիև»:

Այսպիսով իր հաղթանակը Կորսունում մի քանի հուշարձանային կառուցումներով ամրապնդելուց հետո Վլադիմիրը քաղաքը վերադարձրեց հույներին, ըստ ժողովրդական մեկնաբանության, որպես «փրկագին» հարսնացու արքայադուստր համար: Կիև վերադառնալիս նա իր հետ վերցրել էր նորերս սուրբ լուսավորիչ Կիրիլի հայտնագործած՝ սուրբ Կիմենտի և Թեբի նշխարները, ինչպես նաև որպես ռազմական ավար ու իր քաղաքի համար պարգարանք՝ բրոնզե չորս ձիերի քանդակ և երկու կանացի արձան:

Վլադիմիրի Կիև վերադառնալուց հետո հատարարվեց Դնեպրում կիևցիների ընդհանուր մկրտությունը: Տարեգրությունը և «Երանելի Վլադիմիրի վարքը» այդ իրադարձության մասին գրում էին այսպես. «Մար-

դիկ ուրախությամբ գնում էին, ուրախանալով և ասելով, եթե սա բարի չլիներ, իշխանը և բոլարները սա չէին ընդունի»: Իսկ միտրոպոլիտ Իլարիոնը ճշգրտում է. «Իսկ եթե մեկն էլ ոչ թե սիրով, այլ հրամայողի երկյուղից էր մկրտվում, ապա նրա բարեհավատությունը կապվում էր իշխանության հետ»: Տարեգրությունը նշում է նաև, որ երբ Պերունին կործանեցին և քարջ էին տալիս Դնեպրում ընկղմելու, «անհավատ մարդիկ լալիս էին նրա համար»: Պերունին պետք է Դնեպրի հոսանքով ժողովրդի աչքի առաջ միևնույն սահանքներն ուղարկեին: Տարեգրությունը հիշատակում է Վլադիմիրի հրամանը. «Եվ Վլադիմիրը նրա հետ մարդկանց դրեց, ասելով. «Եթե որևէ տեղ ափին մոտենա, ետ հրեցեք նրան ափից, իսկ երբ սահանքներն անցնի, այն ժամանակ միայն թողեք նրան»: Նրանք էլ կատարեցին, ինչ հրամայված էր: Եվ երբ թողին նրան, և անցավ սահանքների միջով, քամին նրան դուրս նետեց ծանծաղուտ, և դրանից էլ այդ տեղը կոչվեց Պերունի ծանծաղուտ, ինչպես և կոչվում է մինչև օրս»:

Նախկին մոլեռանդ հեթանոսը, որ դեռ վերջերս ավելացնում էր հեթանոսական պաշտամունքի տեղերը, Վլադիմիրը այժմ ավելի մեծ եռանդով ձգտում է քավել իր հեթանոսական հասկացողությունները ամենուրեք կռատները քրիստոնեական տաճարներով փոխարինելով: Այդ մասին Տարեգրությունն ասում է. «Հրամայեց եկեղեցիներ սարքել և տեղադրել դրանք այնտեղ, ուր առաջ կուռքերն էին: Եվ կանգնեցրեց սուրբ Վասիլիի (Վլադիմիրի քրիստոնեական անունը) եկեղեցին բլրի վրա, ուր առաջ կանգնած էր Պերունի կուռքը և մյուսներինը, և ուր առաջ զոհաբերություններ էին կատարում իշխանն ու մարդիկ, և սկսեց քաղաքներում եկեղեցիներ կանգնեցնել և քահանաներին ու մարդկանց մկրտության բերել բոլոր քաղաքներին ու գյուղերին»:

11-րդ դարի բոլոր գրական հուշարձաններում խոսվում է Վլադիմիր իշխանի հրամանով Կիևյան Ռուսիայի համընդհանուր քրիստոնեացման մասին: Իսկով վանականը «Գովքի» մեջ բազմիցս ասում է այն մասին, որ Վլադիմիր իշխանը «մկրտեց ողջ ռուսական երկիրը ծայրեհծայր... և խորտակեց կուռքերն ու ողջ անհավատ պղծությունը»: Մի այլ տեղ նա կրկնում է նույնը. «Եվ ամբողջ ռուսական երկիրը մկրտեց ծայրից ծայր: Կուռքերի տաճարներն ու սրբատեղիները ամեն տեղ քանդեց ու կործանեց և կուռքերը խորտակեց ... և եկեղեցու արդար սրբապատկերներով պարգարեց»: Ընդհանուր քրիստոնեացման մասին խոսում է և միտրոպոլիտ Իլարիոնը. «Առաքելական փո-

ըը և ավետարանական ձայնը հնչեցին բոլոր քաղաքներում, և մեր ամբողջ երկիրը միաժամանակ սկսեց փառավորել Քրիստոսին»:

Դեռևս Վլադիմիր իշխանի օրոք ռուսական թեմեր կազմավորվեցին Կիևից բացի նաև Վոլինյան Վլադիմիրում, Չեռնիգովում, Տուրովում, Պոլոցկում, Բելգորոդում, Նովգորոդում և Ռոստովում: Նովգորոդյան տարեգրությունը հիշատակում է, որ Վլադիմիր իշխանը 991 թվին Նովգորոդ է ուղարկել առաջին եպիսկոպոս Իոհակիմին «Նովգորոդ եկավ Իոհակիմ եպիսկոպոսը և սրբատեղիները քանդեց ու Պերունին խորտակեց»: Այնուհետև Տարեգրությունը ասքի ոճով պատմում է, որ Իոհակիմ եպիսկոպոսը հրամայել է Պերունին տեղից հանել և գցել Վոլխով գետը, ինչպես արել էին Կիևի Պերունին: Կոտլը ժողովրդի աչքում պսակակերծ անելու համար նրան անարգում էին, պարաններով կապկապած քարոջ էին տալիս «կեղտի վրայով» ծեծում էին մահակներով: Կոտլերի անարգումը անհետևանք չէր անցնում. դեռևս հեթանոս մնացածների մեջ դա արժարժում էր խռովություններ, որոնք ճնշվում էին սրով, իսկ տեղ-տեղ նաև հրով:

ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Իր իշխանության տարիներին Վլադիմիր իշխանը ոչ միայն քրիստոնեացրեց Ռուսական երկիրը, այլև փորձեց ավետարանական ուսմունքը կենսագործել հասարակության կյանքում: Ռուս ժողովուրդը Վլադիմիրին «Կարմիր արև» անունը տվեց: Վլադիմիրը սիրում էր աղքատներին և սիրված էր նրանցից: Նա ոչ միայն խնջույքներ էր սարքում իր դրոժինայի համար, որ անում էին և նրա նախորդները, այլև քրիստոնեության ընդունման հետևանքով սկսել էր հոգ տանել նաև մայրաքաղաքի և պետության չքավոր բնակչության համար տրվող տոնական ճաշկերույթների մասին: Տարեգրությունը այսպիսի խոսքերով է պատմում ամեն կիրակի Վլադիմիր իշխանի տված ճաշերի մասին. «Ամեն կիրակի պալատի ժողովրդական սրահում սահմանեց ճաշ սարքել և հրավիրել բոլարներին ու դրոժինիկներին և հարյուրապետներին ու տասնապետներին և հատուկ մարդկանց՝ իշխանի հետ և առանց նրա: Շատ միս, անասուններ և երեներ էին լինում և ամեն ինչ շատ առատ էր»: Նույն Տարեգրությունը 996 թվականի տակ վկայում է, որ դրանք ոչ թե սովորական իշխանական խնջույքներ էին, այլ քրիստոնեական հավատի ապօրոշմության հետևանք. «Քանի որ սիրում էր գրոց խոսքը: Քանզի լսել էր Ավետարանը, որ կարդում էին. «Երանի

ողորմածաց; Վի նոքա ողորմութիւն գտցեն» և այլն... Այս լսելով, հրամայեց ամեն աղքատի ու խեղճի գալ իշխանի ընտանիք և վերցնել իրենց պետքերը՝ ըմպելիք և ուտելիք և փող՝ գանձատնից: Կարգադրեց և այսպես ասաց, թե «տկարներն ու հիվանդները չեն կարող հասնել իմ դուռը, և հրամայեց սայլեր սարքել և հաց, միս, ձուկ, պանպան բանջարեղեն, տակառներով մեղր և ուրիշ տակառներով կվաս բարձել և տանել քաղաքով՝ հարցնելով՝ «ուր կա հիվանդ ու աղքատ, որ չի կարող քայլել» և նրանց բաժանել կարիքները հոգալու համար»:

Նույն բանը Վլադիմիր իշխանի մասին ասում է և միտրոպոլիտ Իլարիոնը. «Ո՛վ կարող է թվել քո գիշերային ողորմածությունն ու ցերեկային առատաբաշխությունը, որ գործում են աղքատներին, պարտապաններին ու այրիներին և բոլոր ողորմության կարիք ունեցողներին: Քանզի լսել էիր Աստծո ձայնը... Լալով խնդրողներին, հագցնելով մերկերին, հագեցնելով ծարավներին ու քաղցածներին, հիվանդներին ամենայն մխրթարություն ուղարկելով, ստրուկներին ապաւնելով: Քանզի քո առատաբաշխությունն ու ողորմածությունը այժմ էլ մարդկանց մեջ հիշվում են»:

Այնուհետև միտրոպոլիտ Իլարիոնը բացականչում է. «Յնժա, մեր ուսուցիչ և բարեհավատության խրատատու: Դու հազած էիր ճշմարտություն, գոտևորված ամրությամբ, իմաստով պսակված և ողորմածությամբ՝ որպես ոսկե մանյակով ու սպասքով, զարդարված: Քանզի դու, ապկավարմ գլխավոր, հագուստով աղքատ էիր, դու քաղցածներին սնողն էիր, այրիների օգնականն էիր, օտարականների հանգստարարն էիր, դու օթևան էիր անօթևաններին, դու պաշտպանն էիր վրկյալների, հարստացնողն աղքատների»:

Միտրոպոլիտ Իլարիոնի վկայությունը Վլադիմիր իշխանի հասարակական գործունեության մասին կրկնում է և Իակով վանականը: Նա գրում է այսպես. «Ամենից ավելի ասում են ողորմություն գործեց Վոլոդիմեր իշխանը: Քանզի եթե տկարներն ու ծերերը չէին կարողանում հասնել իշխանի դուռը և օգնություն ստանալ, ապա ինքն էր նրանց տուն ուղարկում: Տկարներին ու թույլերին ամենայն օգնություն էր տալիս Երանելի իշխան Վոլոդիմերը: Եվ չեմ կարող պատմել նրա բազում ողորմածությունները: Ոչ միայն իր տանն էր նա ողորմություն անում, այլև ամբողջ քաղաքում, ոչ միայն Կիևում, այլև ամբողջ ռուսական երկրում՝ գյուղերում ու քաղաքներում, ամենուր ողորմություն էր գործում, մերկերին հագցնելով, քաղցածներին կերակրելով, ծարավներին խմեցնելով, պանդուխտներին հանգստաց-

նելով, աղքատներին ու որբերին, և այրիներին, և կույրերին, և կաղերին, և չարչարյալներին, բոլորին ողորմելով, հազցնելով, կերակրելով ու խմեցնելով»:

Միտրոպոլիտ Իլարիոնի խոսքերով Վլադիմիր իշխանը «վառվեց հոգով և ցանկացավ սրտով քրիստոնյա դառնալ և ամբողջ երկիրը քրիստոնյա դարձնել»: Վլադիմիր իշխանի անսովոր եռանդը բացատրվում է սուրբ հայր Նեստոր Տարեգրի այն վկայությամբ, որ Վլադիմիր իշխանի դարձը քրիստոնեության Սուրբ Հոգու գործողության շնորհիվ էր, որը հրաշապատում ձևով իշխանին մկրտության սուրբ ավապանի մոտ բերեց, որտեղ նա «թոթափեց հոգեկան և մարմնավոր կուրությունը»:

Հին ռուս հեղինակները միաձայն հաստատում են, որ Վլադիմիր իշխանի բարեգործությունը ոչ միայն իշխանի անձնական ողորմածությունն էր, այլ պետական ընդգրկումով սոցիալական գործունեության արդյունք: Նրանք վկայում են նաև, որ սոցիալական հարցերի լուծման շարժառիթը Վլադիմիր իշխանի համար Ավետարանն էր: Միտրոպոլիտ Իլարիոնն ասում է, որ Վլադիմիր իշխանը չէր ուզում ավետարանական խոսքը թողնել միայն ականջ ջոյելու համար, այլ որոշել էր այն իրականացնել գործի մեջ:

Վլադիմիր իշխանի հասարակական գործունեությունը իրագործվում էր և այլ բնագավառում: Միտրոպոլիտ Իլարիոնն ասում է, որ Վլադիմիրը «բարի մտքով և սրամտությամբ հասկանալով, ուղեցավ կյանքում գործադրել վերերկրային ավետարանական գաղափարը հռոմեական պետական իրավունքի փոխարեն»: Վլադիմիրը, «հաճախ հավաքվելով նոր հայրերի՝ մեր եպիսկոպոսների հետ, մեծ հեղուկությամբ խորհրդակցում էր նրանց հետ ինչպես սույն (ավետարանական) օրենքը հաստատեն մարդկանց մեջ, որ նոր են ճանաչել Աստծուն»: Ցանկանալով մինչև վերջ հետևողական լինել, նա ուզում էր հռոմեական իրավունքից անցնել ավետարանական ամենաթողության: Տարեգիրը 996 թվականի տակ հաղորդում է. «Եվ ապրում էր Վոլոդիմերը Աստծո երկյուղով, և բազմացան ավապակությունները. և ասում են եպիսկոպոսները Վոլոդիմիրին, ահա բազմացան ավապակները, ինչո՞ւ նրանց չես պատժում: Իսկ սա նրանց ասում է. վախենում եմ մեղք գործել: Իսկ սրանք ասում են նրան. դու Աստծո կողմից չարերին պատժելու և բարիներին ողորմելու համար ես դրված: Դու պետք է պատժես ավապակներին, բայց փորձելով: Եվ Վոլոդիմերը վերացրեց [դրամական] տուգանքները և սկսեց պատժել ավապակներին»:

Տոգորվելով ավետարանական ոգով, Վլադիմիրն անձնապես պոմ էր պետական իրավունքի և անհատական ամենաթողության հակադրությունը: Նրա համար ծանր էր սրով պատժողի պարտականությունը: Այդ պատճառով էլ եպիսկոպոսները ստիպված էին հանգստացնել նրա խիղճը: Ռուսական քրիստոնեության սկզբնական շրջանում ավետարանական իդեալի կատարման բացառիկ մղումի մի պահ եղավ, որ նման էր առաջին քրիստոնյաների Երուսաղեմի համայնքի մղումին: Հին եկեղեցին արտակարգ հոգեկան տաղանդների ժամանակաշրջան է ապրել և ռուս քրիստոնեության սկզբնական պատմությունը լուսավորված է Քրիստոսի Արքայության բարեշնորհ լույսով:

Սոցիալական անարդարությունը «ունեցվածքի ընդհանրացումով» լուծելու՝ Վլադիմիր իշխանի ցանկությունը հիշեցնում է քրիստոնեական առաքելական համայնքի սկզբնական շրջանին բնորոշ միտումը: Պատմական փորձը ցույց տվեց, որ այդպիսի գործողությունները, ինչպես և այլ իդեալական ձեռնարկումներ, կարող են գոյություն ունենալ միայն կարճ ժամանակով: Իսկ այնուհետև նրանք ենթարկվում են մարդկային հասարակության պարզացման ընդհանուր օրենքներին, արտացոլելով նոր գաղափարների ապդեցությունը: Այդպես եղավ և Ռուսիայում քրիստոնեության ընդունման ժամանակ: Քրիստոնեությունը բախվեց կատարյալ անկատարության պայմաններում կենսագործելու, սրբությանը մեղաավորությունը հաղթահարելու, հոգու և մարմնի, նյութականի և հոգեկանի ներդաշնակությանը համեմատելու հավիտենական խնդրին: Ռուսական պետությունը քրիստոնեացավ ներքուստ:

ԱՐԱԲ ԵՎ ՀՈՒՅՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԻՈՒ
ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԼԱԴԻՄԻՐ ԻՇԽԱՆԻ
ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ,

Ռուսիայի մկրտության մասին բացի ռուս հեղինակների վկայություններից կան արաբ և հույն հեղինակների ուղղակի և անուղղակի վկայություններ: Ամենից առաջ դրանք թվին է պատկանում արաբ տարեգիր Յահյա Անտիոքացու (11-րդ դարի սկիզբ) պատմությունը, որը գրում է. «Եվ բացահայտ ապստամբեց Վարդա Ֆոկան և իրեն թագավոր հռչակեց չորեքշաբթի, Խաչի տոնի օրը՝ 987 թվականի սեպտեմբերի 14-ին, և տիրեց հույների երկրին մինչև Դորիլեյա և մինչև ծովափ: Եվ նրա զորքերը հասան մինչև Քրիստոսը: Եվ նրա գործը վտանգավոր դարձավ: Եվ դրանից մտահոգված էր Վասիլ թագավորը նրա (այսինքն՝ ապստամբ Վար-

դա Ֆոկայի) Վորքի ուժի պատճառով: Եվ սպառնացին նրա (Վասիլ թագավորի) հարձակումները, և կարիքը նրան ստիպեց ռուսների թագավորի մոտ ուղարկել (իսկ նրանք իր թշնամիներն էին), որպեսզի նրանց (ռուսներին) խնդրի իրեն օգնելու իր ներկա վիճակում: Եվ սա համաձայնեց դրան: Եվ նրանք իրար մեջ պայման կապեցին խնամիրության մասին, և ռուսների թագավորը ամուսնացավ Վասիլ թագավորի քրոջ հետ, այն բանից հետո, երբ սա նրան պայման դրեց, որ նա ինքը և նրա երկրի ամբողջ ժողովուրդը մկրտվի: Իսկ նրանք մեծ ժողովուրդ էն: Եվ այն ժամանակ ռուսները իրենց ոչ մի օրենքի մեջ չէին դասում և ոչ մի հավատ չէին ընդունում: Եվ հետագայում Վասիլ թագավորը նրա (Վլադիմիրի) մոտ միտրոպոլիտներ ու եպիսկոպոսներ ուղարկեց: Եվ նրանք մկրտեցին թագավորին և այն բոլորին, ով մտնում էր նրա երկրի մեջ: Եվ նրա (Վլադիմիրի) մոտ ուղարկեց իր քրոջը: Եվ նա ռուսների երկրում շատ եկեղեցիներ կառուցեց: Եվ երբ նրանց միջև վճռվեց ամուսնության գործը, ժամանեցին ռուսների վորքերը: Նրանք միացան հույների վորքին, որ ուներ Վասիլ թագավորը, և բոլորը միասին ծովով ու ցամաքով ուղևորվեցին Քրիստոսի Վարդա Ֆոկայի դեմ կռվելու: Եվ նրանք հաղթեցին Վարդա Ֆոկային և նա սպանվեց 989 թ. ապրիլի 13-ի շաբաթ օրը:

Յախյա Անտիոքացու պատմածից պարզ երևում է, որ Վլադիմիր իշխանի ամուսնության պայմանը հունաց արքայադուստր Աննայի հետ իշխանի և իր ժողովրդի քրիստոնեությունն ընդունելն էր: Տարեգիրը կարող էր չիմանալ, որ մինչև պայմանագիր կնքելը Վլադիմիրն արդեն մկրտված էր: Մեզ համար կարևորը այն փաստն է, որ Կիևյան Ռուսիան քրիստոնեական հավատն ընդունել է հույներից:

Բյուզանդիայի կայսր Վասիլի՝ Վլադիմիր իշխանից ռազմական օգնություն խնդրելու և ռուս հեթանոս իշխանին (ինչպես կարծում էր Վասիլ կայսրը) արքայադուստր Աննային կնության տալու պատճառի մասին միանգամայն նույնանման տեղեկություններ կան 12-րդ դարի արաբ պատմագիր Իբն ալ-Մակինի մոտ: Իր պատմության մեջ նա հաղորդում է. «Վասիլ կայսրը սկսել էր սաստիկ վախճանալ Վարդա Ֆոկայից, բացի այդ, նա նաև փողի կարիք ուներ: Ուստի ստիպված էր մարդ ուղարկել ռուսների թագավորի մոտ, որոնք իր թշնամիներն էին, և նրանից օգնություն խնդրել: Սա խոստացավ այդ օգնությունը, նրանից խնդրելով ազգակցական կապի մեջ մտնել: Եվ թագավորը (Վլադիմիրը) կնության առավ Հռոմի կայսր Վասիլի

լի քրոջը, այն բանից հետո, երբ սա թագավորին համոզեց, որ նա ընդունի քրիստոնեական հավատը»:

Նոյնախի տեղեկություններ կան նաև հույն հեղինակների մոտ: Գեորգի Կեդրինը իր Ժամանակագրության մեջ 987 թվի օգոստոսի 15-ի և 989 թվի ապրիլի միջև գրում է. «Վասիլ կայսրը շատ էր համոզում պատրիկ Դեֆինային՝ Վարդա Ֆոկայի ապստամբության մասնակցին, նահանջել Քրիստոսից, բայց չկարողացավ համոզել: Գիշերը նավերը պատրաստելով և նրանց վրա ռուսներին նստեցնելով, քանի որ հասցրել էր նրանց օգնության կանչել և նրանց իշխան Վլադիմիրին իր ազգականը (փեսան) դարձնել՝ նրան ամուսնացնելով իր քույր Աննայի հետ, նրանց հետ անսպասելի անցնում է ծովը և հարձակվելով թշնամիների վրա, հեշտությամբ տիրում է նրանց»:

Նույն բանն է ասում և Իոհան Զոնարան. «Երբ Դեֆինան ճամբար դրեց Քրիստոսի մոտ, կայսրը անակնկալ հարձակվեց նրա վրա ռուս ժողովրդի հետ միասին, քանի որ ազգակցական կապերի մեջ էր մտել ռուս իշխան Վլադիմիրի հետ, նրան կնության տալով իր քույր Աննային, և հեշտությամբ հաղթում է հակառակորդներին»: Նույնախի վկայություն կա նաև Միխայիլ Պսելլի մոտ:

Մերվբուրգի եպիսկոպոս Տիմոնը ասում է, թե Վլադիմիրը իր համար կին է բերել Հունաստանից, Ելենա անունով, որ նշանված էր Գերմանիայի կայսր Օտտոն III-ի հետ, բայց խարդախ ձևով նրանից հափշտակվել էր: Տիմոնը Եպիսկոպոսը դժգոհ է Վլադիմիր իշխանից, նրան մեղավոր համարելով այն բանում, որ Աննան (Ելենան, ինչպես նրան սխալ ձևով անվանում է ժամանակագիրը) չամուսնացավ Օտտոն III-ի հետ: Հիլդեսմայսյան տարեգրությունը հաղորդում է Կոստանդնուպոլիս ուղարկված՝ գերմանացիների անհաջող խնամախոսական դեսպանության մասին:

Վերը նշված արաբ և հույն հեղինակները, որոնց վկայությունները հաստատվում են և արևմուտքի տարեգրի կողմից, Ռուսիայի քրիստոնեացումը կապում են Բյուզանդիայի և բյուզանդական արքայադուստրը Վլադիմիրին կնության տալու հետ: Ինչն էր արտաքին առիթ հանդիսացել դեպքերի ճիշտ այդպիսի վարձագման համար:

987—989 թվականներին հանկարծ երեւացել էր բյուզանդական գահը: Մակեդոնական հարստությունը՝ Վասիլ և Կոստանդին եղբայրներին, որոշել էր գահընկեց անել փոքրասիական վորքերի գլխավոր հրամանատար զորավար Վարդա Սկլիրը: Իրեն թիկունքից դաշնակիցներով ապստովելու համար նա բանակցություններ էր սկսել ա-

րաբական խալիֆաթների՝ Աբասիդների ու Օմայյադների, հայերի ու խալարների հետ: Երբ Սկլիռի դեմ կռվելու համար Բյուզանդիայի կայսրերը Փոքր Ասիա ուղարկեցին Վարդա Ֆոկային, վերջինս, դավաճանելով կայսրերին, համաձայնության եկավ Վարդա Սկլիռի հետ և շարունակեց նրա ապստամբական գործը: Վայսրերի դրությունը հուսահատ էր դառնում: Նրանք դաշնակիցներ չունեին: Սկլիռի և Ֆոկայի արևելյան դաշինքին պետք էր հակադրել հյուսիսային և հարավային դաշնակիցների խմբակցությունը: Բայց բյուզանդացիները նրանց հետ պատերազմի մեջ էին: Բուլղարները 986 թվին ջախջախեցին բյուզանդացիներին Բալկանների Ռոդոպյան լեռնանցքներում: Իսկ բուլղարների դաշնակիցը այդ ժամանակ Կինի իշխան Վլադիմիրի պորքերն էին: Չորս չէ, որ Յահյա Անտիոքացին այդ պահին ռուսների վերաբերմունքի մասին դեպի կայսրը ասում է. «Իսկ նրանք իր թշնամիներն էին»: Բայց պահը ճակատագրական էր Վասիլ և Կոստանդին կայսրերի համար: Եվ պետք էր թշնամիների ոտքը գնալ: Այդ ժամանակ հարկ էր որևէ հրապուրիչ առաջարկով ռուսներին շեղել աճող խմբակցությունից, այլապես Կոստանդնուպոլիսը աքցանի մեջ կառնվեր, այսինքն՝ կշրջապատվեր և՛ արևմուտքից, և՛ հյուսիսից: Այդ իսկ ժամանակ բուլղարներին են վիշվում նրանց նվաճումները, իսկ կիկյան ռուսներից ռազմական ուղղակի օգնություն է խնդրվում: Ի՞նչ պայմաններով: Վլադիմիրն արդեն հրավերներ էր ստանում բյուզանդացի ապստամբների կողմից (Կովկասի և Խաչարիայի վրայով): Բայց Ցարադղի անսպասելի խնդրանքը շուրջ ու պատվաբեր էր Վլադիմիրի համար, և որ գլխավորն է, տալիս էր նրան այն, ինչ չէր կարող տալ բյուզանդական ապստամբների հետ ունեցած կապը: Նկատի ունենք ամուսնական կապը այն ժամանակվա հասկացողությամբ աշխարհի միակ իսկական թագավորական «հռոմեական» հարստության հետ: Այդ երազանքի իրականացման համար ամենից առաջ Վլադիմիր իշխանը պետք է քրիստոնյա դառնար, քանի որ եկեղեցական օրենքներով քրիստոնյա արքայադուստրը չէր կարող ամուսնանալ հեթանոսի հետ:

Եվ այստեղ հարց է ծագում: Վլադիմիր իշխանը այդ ժամանակ էր մկրտվել արդյոք (986—987 թթ.) դինաստիական ամուսնության համար դրված պայմանը կատարելու նպատակով, թե՛ նա արդեն մկրտված էր: Մկրտության գործողությանը արդյոք բռնության տարր չէ՞ր նախորդել, թե՛ այդ երկու փաստերը (մկրտությունն ու ամուսնությունը) միայն ժամանակագրորեն իրար մոտիկ,

բայց իրարից անկախ էին: Այս կամ այն պնդման համար որևէ փաստական տվյալ չկա: Պրոֆեսոր Վ. Վ. Կարտաշովը այդ առթիվ ասում է. «Մենք գերադասում ենք պնդել, ի փառս մեր Մկրտչի, մի ավելի լավ բան: Այն է, որ ներքին մղումը... նրան արդեն բերել էր անձնական Մկրտության, ընդ որում բյուզանդական առաջարկությունը ընկավ արդեն բարենպաստ հողի վրա, և Վլադիմիրը դրա հետ այնքան լուսավոր հույսեր ու ծրագրեր կապեց... և Վլադիմիրը լավագույն հույսերով իր ռազմաքաղաքական պորաբանակն ուղարկեց Ցարգրադ և անձամբ ուղեկցեց նրան մինչև սահանքները»:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՌՈՒՄԻՈՒՄԿՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կաթոլիկական եկեղեցական հեղինակները, իսկ նրանց հետևողությամբ նաև ուկրաինական ուսիթոռական պատմիչները պնդում են, որ իբր ռուսներին քրիստոնեության են բերել լատինական քարոզիչները, և որ իբր սկսվեապես Ռուսական եկեղեցին դավանաբանական կախման մեջ էր Հռոմից, իսկ հետագայում դավաճանել է պապին և անցել Կոստանդնուպոլսի Պատրիարքի իրավասությանը:

Ընդ սմին նրանք վկայակոչում են կարդինալ Պետրոս Դամիանիի և ֆրանցիսկյան վանական Ադեմարի (+1030) ժամանակագրության խմբագրի վկայությունը: Պետրոս Դամիանիին (+1072) Հռոմի եկեղեցու սրբերից է, Ֆոնտիս Ավելլանի վանքի վանահայրը (միջին Իտալիայում Գուբբիո քաղաքի մոտ), Օստիենի եպիսկոպոս, իր ճգնաժամությամբ հայտնի կարդինալ, եկեղեցափաստական գործիչ, գրող: Նա կապմել է սուրբ Ռոմուալդի՝ բենեդիկտինցիների Օրդենում կամավորների միաբանության հիմնադրի Վարքը: Այդ Վարքում հիշատակվում է ուն Բրունո կամ Բրունոնե, վանական ձեռնադրվելուց հետո Բոնիֆացիոս, սուրբ Ռոմուալդի աջակերտը: Այստեղ պատմություն կա Բրունո-Բոնիֆացիոսի ռուսական առաքելության մասին: Նահատակության ծախսով վառված Բոնիֆացիոսը գալիս է սլավոնական երկրները, մասնավորապես, Ռուսիա (ad regem Russorum), և Քրիստոսի քարոզչությունն անելով առաջարկում է փորձվել հրաշքով՝ անցնել երկու հսկայական բոցավառ խարույկների միջով: Երբ Բոնիֆացիոսն անցնում է կրակի միջով և ապշեցնում բոլոր հավաքվածներին, ժողովուրդը նետվում է դեպի նա և համաձայնում մկրտություն ընդունել: Տեղի է ունենում ռուսների թագավորի և ժողովրդի դարձը: Մկրտությունը անդի է ունենում լծում: Թագա-

վորը իշխանությունը թողնում է որդուն, իսկ ինքը որոշում է ընդմիջտ մնալ Բոնիֆացիոսի հետ: Թագավորի անհավատ եղբայրը սպանում է Բոնիֆացիոսին, իսկ ռուս ժողովորդը փառաբանում է նրան որպես սրբի: Պետրոս Դամիանին, հաստատելով բացահայտ անձնությունը, այնուհետև գրում է. «Այժմ Ռուս Եկեղեցին հպարտանում է, որ նա իր երանելիների մեջ է»:

Հաջորդ վկայությունը, որ իբր հաստատում է Բրունո-Բոնիֆացիոսի ռուսական առաքելությունը, Կաթոլիկ պատմագիրները տեսնում են Ադեմար վանականի Ժամանակագրության ընդմիջարկողի մեջ: Ժամանակագրության հեղինակն ասում է, որ Օտտոն կայսրը մեծապես հոգ էր տանում շրջակա ժողովուրդների մեջ քրիստոնեության քարոզչության մասին: Նա երկու հարգարժան եպիսկոպոս (քարոզիչ) ուներ, այն է՝ սուրբ Ադալբերտը Բոհեմիա պրովինցիայում Պրագա քաղաքի արքեպիսկոպոսը և սուրբ Բրունոն (Brunus): Ժամանակագրությունը վկայում է, որ Բրունոն, հետևելով Ադալբերտի օրինակին, քարոզում էր Հունգարիայում, իսկ հետո «ուղևորվեց մի այլ պրովինցիա, որը կոչվում էր Ռուսիա (Russia)»... Երբ նա հասավ պեչենեգներին և սկսեց նրանց քրիստոնեություն քարոզել, ապա նահատակվեց նրանց ձեռքից, ինչպես և նահատակվել էր սուրբ Ադալբերտը: Ռուս ժողովուրդը թանկ գնով փրկագնեց նրա մարմինը, և Ռուսաստանում նրա անվան վանք կառուցեցին, և նա սկսեց մեծ հրաշքներով պայծառանալ: Մի քանի օր հետո Ռուսաստան եկավ մի հույն եպիսկոպոս և դարձի բերեց այդ պրովինցիայի ժողովրդի ցածր դասը, որը դեռևս նվիրված էր կուռքերին, և ստիպեց նրանց ընդունել հույների սովորությունը մորուք պահելու և այլ բաների վերաբերյալ:

Բրունո-Բոնիֆացիոսի առաքելությունը իբր թե դեպի Ռուսիա հերքում է լատին ժամանակագիր Տիտմարը, Մերսենբուրգի եպիսկոպոսը: Տիտմարը ճանաչում էր Բրունոյին, քանի որ սա նրա դպրոցական ընկերն էր: Իր ժամանակագրության մեջ նա խոսում է Ռուսիայի մկրտության և Բրունոյի քարոզչական գործունեության մասին: Պատմելով ռուսների մկրտության մասին, նա ոչ մի խոսքով չի հիշատակում, որ այն Բրունոյի քարոզչական գործունեության հետևանքն էր: Տիտմարը ուղղակի կերպով հաստատում է, որ սուրբ իշխան Վլադիմիրը հավատն ընդունել է հույներից, և որ Բրունոն քարոզչական գործունեություն է սկսել իր եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո, իսկ եպիսկոպոսությունը նա ստացել է Օտտոն III (+1002) կայսեր մահվանից հետո, նրա հա-

ջորդ Հենրիխ III-ի օրոք, այսինքն այն ժամանակ, երբ Ռուսիան արդեն մկրտվել էր Վլադիմիր իշխանի կողմից՝ 988 թվին: Պետրոս Դամիանին ասում է, որ Բրունոն քարոզչական գործունեության ասպարեզ դուրս եկավ Պրագայի արքեպիսկոպոս Ադալբերտի մահվանից հետո, հետևաբար 997 թվից հետո: Եվ դարձյալ Բրունո-Բոնիֆացիոսի քարոզչության սկիզբն ընկնում է Ռուսիայի մկրտության ժամանակից հետո:

Բրունո-Բոնիֆացիոսի ռուսական առաքելությունը հերքող մի այլ փաստաթուղթ է ընձեռում ինքը՝ Բրունոն: Պաշտպանվել է նրա նամակը Հենրիխ III կայսերը (մոտավորապես 1007 թ.): Նամակից երևում է, որ Բրունոն իսկապես եղել է Ռուսաստանում, բայց ոչ քարոզչության նպատակով, որի մասին ոչինչ չի ասում, որովհետև այդ ժամանակ ռուսներն արդեն մկրտված էին, և Բրունոն այդ հստակորեն հասկացնում է: Նամակում Բրունոն գրում է իր քարոզչության մասին Պոմերանիայում, Պրուսիայում, Հունգարիայում և պեչենեգների մոտ: Պեչենեգների մեջ քարոզելուց առաջ նա եղել է արդեն քրիստոնյա դարձած Վլադիմիր իշխանի մոտ և նրանից աջակցություն խնդրել: Վլադիմիր իշխանը նրան բարեկամաբար է ընդունել, ինքը ուղեկցել է մինչև իր պետության և պեչենեգների սահմանը, և խորհուրդ է տվել Բրունոյին իր կյանքը չվտանգել: Պեչենեգներին լուսավորելու որոշ փորձից հետո Բրունոն վերադառնում է Կին, մեկ ամիս հյուրընկալվում Վլադիմիրի մոտ: 1009 թվին նա սպանվում է Լիտվայում, Պրուսիայի ճանապարհին:

Այսպիսով, Բրունո-Բոնիֆացիոսի ռուսական առաքելությունը հերքվում է հենց իրենց՝ արևմտյան աղբյուրների կողմից: Մեզ պարզ չէ միայն մի բան. արդյոք Պետրոս Դամիանի կարդինալի և Ադեմարի ժամանակագրության վկայությունը պատմական իրականության դիտավորյալ, թե՞ թյուրիմացական աղավաղումն է: Հիմքեր կան կարծելու, որ դա դիտավորյալ աղավաղում չէ, քանի որ Բրունոյի քարոզչական գործունեությունը ժամանակով գրեթե համընկնում է Ռուսիայի մկրտությանը: Բացի այդ, Բրունոն Ավետարանը քարոզել է Ռուսիայի հարևան երկրներում և նույնիսկ եղել է այնտեղ: Բայց չի բացառվում և մի այլ մեկնաբանություն: Պետք չէ մոռանալ, որ դա մի ժամանակ էր, երբ Հռոմի պապերը արդեն պայքար էին մղում իրենց իշխանությունը Արևելքում, մասնավորապես, նաև Ռուսիայում տարածելու համար: Եվ այնպիսի վկայությունները, ինչպիսին կարդինալ Պետրոս Դամիանիի վկայությունն է, օգտագործվում էին ապացուցելու համար, որ ռուսները

քրիստոնեության են դարձել չափնական քարույիչների ձեռքով և իբր այդ պատճառով պետք է դավանաբանական կախման մեջ լինեն ոչ թե Կոստանդնուպոլսից, այլ Հռոմից:

Սակայն չի կարելի նաև ժխտել, որ արևմտյան քարույիչների կողմից Ռուսիան քրիստոնեական դարձի բերելու փորձեր չեն եղել. բայց դրանք հաջողությամբ չեն պսակվել: Այսպես, օրինակ, Ռուսաստանյան մեծ իշխանուհի Օլգայի շրջապատում քրիստոնյա վարյազներ կային, որոնց ազգականները Արևմտյան Եվրոպայում էին և քրիստոնեություն էին ընդունել Հռոմից: Նրանք երապում էին, որ Կիևյան Ռուսիան մկրտություն ստանա արևմտյան քարույիչներից: Իսկ Օլգա իշխանուհին ձգտում էր խնամիանալ բյուզանդական արքունիքի հետ և հավատն ստանալ Կոստանդնուպոլսից: Նրա ոչ բոլոր մարդիկ էին դրան համաձայն: Ազգակցական կապերով կապված լինելով Արևմուտքի հետ, նրանք ձգտում էին Կիև գրավել արևմտյան քարույիչներին ու եպիսկոպոսներին, այն ժամանակ Օլգա իշխանուհին ստիպված կլինի հաջտվել կատարված փաստի հետ: Օգտվելով Արևմտյան Եվրոպայի հետ ունեցած առևտրական կապերից, վարյազների ստեղծեցին լատին քարույիչների հրավերի ծրագիրը, իբր Օլգա իշխանուհու, ուղղակի հանձնարարությամբ: Ռուս տարեգիրները այդ մասին լռում են, իսկ արևմտյան տարեգիրները համառոտ են այդ են կրկնում:

«Ռեգինոնի շարունակությունը» (10-րդ դարի կես) 959 թվականի տակ հաղորդում է. «Թագավորի (Օտտոն I Մեծի) մոտ եկան, ինչպես հետագայում պարզվեց, կեղծ դեսպաններ Ելենայի՝ ռուսների թագուհու կողմից, որը Կոստանդնուպոլսի Ռոման կայսեր օրոք մկրտվել էր Կոստանդնուպոլսում և խնդրում էր իր ժողովրդի համար ձեռնադրել եպիսկոպոս և քահանաներ»: Ինչպես տեսնում ենք, «Ռեգինոնի» հեղինակը ուղղակի վկայում է, որ Ելենան, այսինքն՝ իշխանուհի Օլգան, Օտտոն կայսերը դեսպաններ չի ուղարկել, և որ դրանք կայսեր մոտ են եկել «կեղծությամբ»:

960 թվականի տակ պատմվում է, որ «թագավորը տոնում էր Քրիստոսի Շննդյան տոնը Ֆրանկֆուրտում, որտեղ սուրբ Ալբանի վանքի (Մայնցում) միաբանությունից Լիբուցիոսը հարգարժան եպիսկոպոս Ադալբերտի կողմից ձեռնադրվել է ռուսների», այսինքն՝ ռուսների եպիսկոպոս:

961 թվականի տակ նույն հեղինակը շարունակում է, որ «Լիբուցիոսը, որին անցյալ տարի որոշ գործեր ետ պահեցին ճանապարհորդությունից, մեռավ այս տարվա մարտի 15-ին: Նրա հաջորդ ձեռնադրվեց

Ադալբերտը՝ Տրիրի սուրբ Մաքսիմիանոսի վանքի միաբանությունից: Նրան (Ադալբերտին) բարեպաշտ թագավորը իր սովորական գթասրտությամբ առատ պարգևատրելով, պատվով ուղարկեց ռուսների մոտ»:

Իսկ 962 թվականի տակ հաղորդվում է, որ «այս տարի ետ վերադարձավ Ադալբերտը, որը եպիսկոպոս էր ձեռնադրվել ռուսների համար, քանի որ հաջողության չհասավ ոչ մի բանում, ինչի համար ուղարկվել էր, և իր բոլոր ջանքերն իյուր տեսավ: Վերադարձի ճանապարհին նրա ուղեկիցներից մի քանիսը սպանվեցին: Իսկ ինքը մեծ դժվարությամբ հապիվ ապավեց»:

Այսպիսով, արևմտյան աղբյուրները հաստատում են, որ լատին քարույիչները գալիս էին Ռուսիա, սակայն նրանց գործունեությունը անհաջող դուրս եկավ, քանի որ պարզվեց, որ նրանք խաբված են եղել: Օլգա իշխանուհին նրանց չէր հրավիրել:

Հռոմում մի քանի անգամ փորձ են ձեռնարկել ռուսներին քրիստոնյա դարձնել: Իսկ երբ Ռուսիան մկրտություն ընդունեց հույներից, Հռոմի պապերը ձգտում էին նրան պոկել Կոստանդնուպոլսի պատրիարքից նրա դավանաբանական կախվածությունից և իրենց իշխանությանը ենթարկել: Այդ փորձերի մասին տեղեկություններ պահպանվել են Սկզբնական տարեգրության նորագույն խմբագրություններից միայն մեկում, այն է՝ Նիկոնյան տարեգրության մեջ: Ոչ մի հիմք չկա կասկածելու, որ այդ վկայությունը հետագայի հավելված է, քանի որ չի կարելի գտնել այն դրդապատճառը, որը ստիպած լինեք ընդօրինակողին այդ անելու: Ընդհակառակն, պետք է ենթադրել, որ Տարեգրության ավելի հին խմբագրություններում տեղեկությունները պապի հետ ունեցած հարաբերությունների մասին դուրս են թողնված, որպեսզի դրանք ջնջվեն հիշողությունից:

Հին ռուսական հուշարձանների վկայությունները Ռուսիայում քրիստոնեությունը հույներից ընդունելու վերաբերյալ հաստատում է 16-րդ դարի լեհ կաթոլիկ պատմագիր Մատվեյ (Մացեյ) Ստրիկովսկի կանոնիկոսը: Նա ծնվել է 1547 թվին Ռաֆայում (Վարջավյան երկիր), ապրել Ժեմայտայում (Ժմուդի) Մելիսիոր Գեդրոյցի իշխանի մոտ, 1574—1575 թթ. գնացել է Ֆարգրադ, գրել է «Լեհական, լիտվական, ժեմայտական և համայն Ռուսիայի տարեգրություն» երկը (1582): Վկայակոչելով արևմտյան և ռուսական աղբյուրները՝ Մատվեյ Ստրիկովսկին իր «Տարեգրության» մեջ գրում է, որ «այդ ժամանակից (այսինքն Ռուսիայի մկրտությունից հետո) Սախտակ և Սև, Արևելյան և Հյուսիսային և հարավում ընկած Ռուսիայի բոլոր նուս ժողովուրդները մշտապես և


հաստատուն կերպով մնում են քրիստոնեական հավատին հունական ծեսերով ու արարողություններով, Կոստանդնուպոլսի պատրիարքի գլխավորությամբ: «Ժամանակագրության» հեղինակին հայտնի է այն կարծիքը, իբր Բուսիան մկրտվել է արևմտյան քարուպիչների կողմից, բայց նա այդ կարծիքը սխալ է համարում: «Ավելի ճիշտ է այն, — գրում է նա, — ինչ վկայում են Իոհան Չոնարան և մյուս հույն պատմագիրները և բոլոր ռուսական տարեգրությունները, որ սկզբում Օլգա իշխանուհին, իսկ հետո էլ նրա թոռ Վլադիմիր իշխանը մկրտվելով և ընդունելով քրիստոնեական հավատը ըստ հունական ծեսի Ցարգրադում, հիմնավորապես բո-

լոր ռուսական երկրները բերին ճշմարիտ Աստծո և Քրիստոսի՝ Նրա Միածին Որդու ճանաչմանը, Սուրբ Մկրտությամբ նորոգվելով»: Սա գրում է կաթոլիկ եկեղեցական պատմագիրը՝ Ուղղափառության և պատմական ճշմարտության նկատմամբ լիակատար հարգանքով՝ Բրեստյան ունիայի նախօրյակին: Մեզ համար կարևոր է, որ Մատվեյ Ստրիկովսկին իր «Ժամանակագրության» մեջ պահպանել է ռուսական եկեղեցական պատմության այն ըմբռնումը, որ սովորական էր ռուսների, լեհերի և լիտվացիների համար:

ՖԻԼԱՐԵՏ

ԿԻԵՎԻ ԵՎ ԳԱԼԻՑԻԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ





«ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉԻ» (Գրախոսական)

Անցյալում Հայ Եկեղեցու սպասավորներից բազմաթիվ դեմքեր հրատարակել են հոգեվոր և կրոնական բնույթի գրքեր: Ներկայումս գործող հայ հոգևորականության մեջ քչերն են, որ պաշտում են կրոնագիտական աշխատասիրություններ կատարելու: Նրանց մեջ աչքի է ընկնում այժմ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ՝ Գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, որ վերջին քառասնամյակում հրատարակել է տասնհինգ գրքեր, որոնք լույս են տեսել ԱՄՆ-ում, Արգենտինայում և Լիբանանում: Դրանք ունեն կրոնական, եկեղեցական և հայրենասիրական բնույթ. նվիրված են Քրիստոնեական վարդապետության, Հայ Եկեղեցուն ու նրա վարդապետության, Վարդանանց խորհրդին, Հայ Երուսաղեմին, Խրիմյան Հայրիկին և այլն:

Սրբազան Հայրը վերջերս՝ իր ծննդյան 80-ամյակի նախօրեին լույս ընծայեց իր 16-րդ գիրքը¹, որ կրոնական մի դասագիրք է, նվիրված Աստվածաշնչի ուսումնասիրման: Այս հատորն օգտաշատ մի ձեռնարկ կարող է լինել ամեն մի ձեռնարանցու և ժառանգավորի համար, մինևույն ժամանակ սեղանի ուղեցույցը՝ Ս. Գիրքն ուսումնասիրող յուրաքանչյուր անհատի: Այս բնույթի մի գրքի պահանջը խիստ էր պզգակում:

Սույն հատորի մտահղացումը կատարված է ավելի քան կես դար առաջ: Այն գրված է Երուսաղեմում 1931 թ. և գործածված իբրև

դասագիրք Ս. Հակոբա վանքի ժառանգավորաց վարժարանում: Ապա տարիներ հետո աշխատությունը վերամշակված ու սրբագրված է Ամերիկայում: 1955-ին գործի «մի մասը» հրատարակված է Բուենոս Այրեսի Հայոց Եկեղեցու պաշտոնաթերթ ՎՅՅ ԿԵԴՐՈՆ ամսագրում: Իսկ 1956-ից սկսած ձեռագիրն իբրև դասագիրք գործածվել է նաև Ս. Էջմիածնի Հոգևոր ձեռնարանում:

«Այժմ զայն կիրառարակենք հավելումներով,—գրում է Սիոն Սրբազանը նոր հրատարակված գրքի առաջաբանում,—և կխորհինք, որ անիկա ոչ միայն մեր Հոգևոր Դպրոցներուն մեջ կրնա գործածվիլ իբրև դասագիրք, այլ նաև մեր ժողովուրդին ծանոթացնել Աստվածաշունչ Մատյանը, անոր կրոնական դաստիարակության ուղեցույց ըլլալ, անկե ներշնչվելու և հոգևոր մխիթարություն գտնելու Կենսաց Մատյանին մեջ»:

«Ներածություն Աստվածաշունչի» հատորը բաղկացած է երկու մասից, որոնցից առաջինը նվիրված է Հին Կտակարանին, իսկ երկրորդը՝ Նոր Կտակարանին:

Առաջին «մասում» (էջ 5—114) հեղինակը կարևոր տեղեկություններ և վկայություններ է տալիս Աստվածաշնչի մասին: Գրում է Հին Կտակարանի բնագրի, բովանդակության, թարգմանությունների, բաժանումների, կանոնի, լեզվի և այլ հարցերի մասին: Այստեղ գտնում ենք անհրաժեշտ նյութեր Հնգամատյանի, ինչպես նաև պատմական, բանաստեղծական ու մարգարեական գրքերի մեծ ու փոքր մարգարեների մասին: Օգտագործելով Հին Կտակարանի մասին հրատարակված նորագույն ուսումնասիրությունները, Սրբազանը նյութի մատուցումը դարձրել

¹ Սիոն արքեպ. Մանուկյան, Ներածություն Աստվածաշունչի, Բեյրութ, 1984 թ., 179 էջ (Տոնիկյան տպարան):

է այժմեական և հայ բանասիրությունը հարստացրել նորագույն տեղեկություններով:


Երկրորդ մասում (էջ 115—175) Սրբապանն ամփոփ կերպով կանգ է առնում չորս Ավետարանների, Գործք Առաքելոցի, Պողոս առաքյալի և Հովհաննու հայտնության վրա:


Գրքի գրեթե յուրաքանչյուր գլխի ու ենթաբաժնի վերջում հեղինակը «**Ոսկեղեն համար**» վերնագրի տակ տալիս է գեղեցիկ և կարճ մեջբերումներ Ս. Գրքից, որոնք բարոյա-դաստիարակչական մեծ արժեք ունեն հոգևոր ասպարեզի պատրաստվող ուսանողության համար:

Գերաշնորհ Տ. Միոն արքեպիսկոպոս Մանուկյանի սույն աշխատությունն արժանի է ամենայն գնահատանքի ու քաջալերության:

Խիստ ուսանելի է Սրբապան Հոր եռանդն ու ջանասիրությունը՝ որպես օրինակ երիտասարդ հոգևորականներին: Ջերմ հավատքը, որով գրված է ամեն տող, և ճշմարտությունը որոնելու ճիգը վկայում են այն ձևերին, որ Սրբապան Հայրը կարող է նորանոր ուսումնասիրություններով հարստացնել մեր կրոնական բանասիրությունը: Հոգևոր ասպարեզի պատրաստվող ուսանողությունը պետք է կարողանա լիրավ կերպով օգտվել սույն ձեռնարկի բովանդակությունից և կրոնական ոգուց: Ահա այս դեպքում հեղինակը հասած կլինի իր բարի ու օգտակար նըպատակին:

Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ





ՀԱՆԳԻՍ
Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՀԱՆԱ ԵՍԱՅԱՆԻ
(1912—1985 թթ.)

1985 թվականի մայիսի 6-ին, կյանքի 73-րդ տարում, Աշտարակ քաղաքում վախճանվեց Տ. Հարություն քահանա Եսայանը։ Հանգուցյալը ծնվել է Պարսկաստանի Փերիա գավառի Խունգ գյուղում։

Նախնական կրթությունը ստացել է նախ տեղի, ապա Նոր Ջուղայի դպրոցներում։

1942—1945 թվականներին սովորել է Նոր Ջուղայի հոգևոր դպրոցում։

Նույն թվականին, հոգևոր դպրոցն ավարտելուց հետո, հոկտեմբերի 16-ին, ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի։

Քահանայագործելու իսկ օրից մինչև 1968 թվականը տեղի հայրը ծառայել է Պարսկաստանի տարբեր եկեղեցիներում։


1968 թվականին տեղափոխվել է Թեհրան և ծառայել տեղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում։

1971 թվականին Տ. Հարություն քահանայի ընտանիքը տեղափոխվել է մալի հայրենիք և բնակություն հաստատել Աշտարակ քաղաքում։

Իր կյանքի վերջին տարիներին հանգուցյալ տեղի հայրը, որպես հոգևոր հովիվ, ծառայում էր Ապարանի շրջանում։

1984 թվականին, իր անբասիր ծառայության համար, Տ. Հարություն քահանան Տ. Տ. Վալդեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի կողմից արժանացել է քահանայական լանջախաչ կրելու իրավունքի։


Մայիսի 8-ին, չորեքշաբթի օրը, Աշտարակի Ս. Մարիանե եկեղեցում կատարվում է հանգուցյալի վերջին օծման կարգը՝ ձեռամբ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպիս-



կոպոս Ներսիսյանի։ Վերջին օծման կարգը կատարելուց հետո, սրբազան հայրը դամբանական է խոսում վեր հանելով հանգուցյալ տեղի հոր արժանիքները որպես համեստ, հավատավոր և նվիրված հոգևորականի։


Հանգուցյալի մարմինը ամփոփվում է Աշտարակի քաղաքային գերեզմանատանը։

Թող Աստված հոգին լուսավորի հանգուցյալ Տ. Հարություն քահանայի։



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ИЮНЬ 1985 г.)

1. Энциклика Католикоса всех армян Вазгена I армянскому учреждению «св. Григорий Просветитель» в Швейцарии об основании «Армянский Центр» при местной церкви св. Акопа, 4 июня 1985 г. № 1357 (стр. 3—4).
2. Постановление Католикоса всех армян Вазгена I о порядке сдачи экзаменов кандидатами в небрачное духовенство, 19 мая 1985 г. (стр. 5).
3. Диакон Акоп Мартиросян — Торжество, посвященные 40-летию Великой Победы, в первопрестольном Эчмиадзине, 5 мая 1985 г. (стр. 6—8).
4. Пленум комитета по культурным связям с зарубежными армянами, посвященный 40-летию Великой Победы, 11 мая 1985 г. (стр. 9—11).
5. Диакон Акоп Мартиросян — Торжество в Духовной Академии по случаю окончания учебного года, 7 июня 1985 г. (стр. 12—17).
6. Посещение первопрестольного Эчмиадзина представителями Вселенского Патриарха Греческой Церкви митрополита греческой общины г. Женевы Дамаскиноса и проф. Петроса Пертикиса, 13 июня 1985 г. (стр. 18).
7. Диакон Степан Карапетян — Посещение первопрестольного Эчмиадзина паломниками церкви св. Албанза в Англии во главе епископа Гердфорда Ричарда Руда, 27 мая 1985 г. (стр. 19—20).
8. Церковная хроника первопрестольного Эчмиадзина за май—июнь месяцы (стр. 21—24).
9. Новое издание в первопрестольном Эчмиадзине (стр. 25).
10. Священник Нерсес Нерсесян — Проповедь (стр. 26—27).
11. Диакон Мисак Сарибекян — Проповедничество (стр. 28—29).
12. Об основании «Армянский Центр» при армянской церкви св. Акопа г. Женевы (стр. 30).
13. Подготовительное собрание в г. Будапеште перед VI съездом Христианской Мирной Конференции, 13—17 мая 1985 г. (стр. 31—32).
14. Епархиальная жизнь
 - а) Вести из армянской епархии Ирака (стр. 33).
 - б) Вести из армянской западной епархии США (стр. 34—35).
 - в) Визит нежливости и покорности братской могиле в г. Баку по случаю Великой Победы (стр. 36).
 - г) Религиозная жена и преданная труженица (стр. 36—37).
15. Священник Завен Арзуманян — Епископ Ухтанес Себастикийский и его произведение «Негоря армянская» (исследование) — (стр. 38—43).
16. Верховный архимандрит Акоп Глинджян — Рукописные письма от епископа Карапета Тер-Мкртчяна, цитированные о нем из книги, изданной на немецком языке (исследование) — (стр. 44—48).
17. Статья митрополита Киевского и Галицкого Фларета под заглавием «Происхождение Русской Церкви» (перепечатанная из 10—11 номеров II часть, журнала «Журнал Московской Патриархии» за 1984 год) — (стр. 49—57).
18. Н. Тер-Микаэлян — «Введение Библии» (рецензия) — (стр. 58—59).
19. Кончина священника Арутюна Есаяна (1912—1985 гг.) (стр. 60).



"ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(JUNE 1985)

1. The encyclical of His Holiness addressed to the St Gregory Illuminator Foundation of Armenians in Switzerland on the occasion of the construction of an Armenian Centre edifice at the St James Church, 4th June 1985, № 1357 (p. p. 3—4).

2. The decision of His Holiness, on the 19th of May 1985, concerning to the order of candidates' examinations for celibate clergyman (p. 5).

3. Deacon Hakob Martirosian—Ceremonies at the Holy See dedicated to the 40th anniversary of the end of the Second World War, 5th May 1985 (p. p. 6—8).

4. The session of the Committee for Cultural Relations with Armenians Abroad dedicated to the 40th anniversary of Great Victory, 11th May 1985 (p. p. 9—11).

Deacon Hakob Martirosian—A reunion in the Spiritual Seminary of the Holy See of Etchmiadzin, on the occasion of the closure of scholar year 1984—1985, 7th June 1985 (p. p. 12—17).

6. The visit of Damaskinos, Metropolitan of the Greek community of Geneva and Professor Petros Pertikis, representatives of the Ecumenical Patriarch of Greeks of Constantinople, 13th June 1985 (p. 18).

7. Deacon Stepan Karapetian—The visit of St Albans pilgrims from England to the Holy See of St Etchmiadzin, headed by the Bishop Richard Rood of Hereford, 27th May 1985 (p. p. 19—20).

8. A brief information about celebrated holy messes, delivered sermons and descriptions of the festivities held in the Cathedral of St Etchmiadzin during May and June months in 1985 (p. p. 21—24).

9. New publication at the Holy See (p. 25).

10. Father Nerses Nersessian—Sermon (p. p. 26—27).

11. Deacon Missak Saribekian—Essay of sermon (p. p. 28—29).

12. About the construction of Armenian Centre at the St James Armenian Church in Geneva (p. 30).

13. Preparatory meeting in Budapest from 13—17th May 1985 before the 6th Congress of the Christian Peace Conference (p. p. 31—32).

Diocesan Life:

a. News from the Armenian Diocese of Iraq (p. 33).

b. News from the Armenian Western Diocese of U. S. A. (p. 34).

c. A visit of respect and humility to the fraternal grave of Bakou on the occasion of the 40th anniversary of Great Victory (p. 36).

d. The pious church lover and devoted workwoman (p. p. 36—37).


15. Reverend Doctor Zaven Arzumanian—The Bishop Oukhtanes of Sebaste and his work the History of Armenia (essay) (p. p. 38—43).

16. Reverend Doctor Hakob Kelendjian—Inedited letters of Bishop Karapet Ter-Mekertchian, extracted from a German published book, consecrated to his life and works (essay) (p. p. 44—48).

17. Metropolitan Filaret—The origine of the Russian Church (reprinted from the „Moscowskoy Patriarkhy" official journal, 1984 Nos. 10—11) (p. p. 49—57).

18. N. Ter-Mikaelian—Introduction of Bible (a review) (p. p. 58—59).

19. The necrology of Father Harutjun Yessayan (1912—1985) (p. 60).



„ETCHMIADZINE“
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(JUIN 1985)

1. Encyclique № 1357 du 4 juin 1985 de Sa Sainteté Vasken Ier adressée à la „Fondation St. Grégoire l'Illuminateur“ à l'occasion de la construction de l'édifice du „Centre arménien“ contigu à l'église arménienne St. Jacques de Genève (pages 3—4).

2. Décision de Sa Sainteté concernant le règlement des examens de passage pour les candidats au célibat ecclésiastique (page 5).

3. **Diacre Hakob Martirosian**—Festivités au Saint-Siège d'Etchmiadzine consacrées au 40e anniversaire de la fin de la 2e guerre mondiale (5 mai 1985)—(pages 6—8).

4. Plenum du Comité des Relations Culturelles avec les Arméniens de la Diaspora tenu le 14 mai 1985 à l'occasion du 4^e anniversaire de la victoire sur le fascisme (pages 9—11).

5. **Diacre Hakob Martirosian**—Réunion au séminaire théologique du Saint-Siège d'Etchmiadzine à l'occasion de la clôture de l'année scolaire 1984—1985 (pages 12—17).

6. Visite au Saint-Siège d'Etchmiadzine de Mgr. Damaskinos, métropolite de la communauté grecque de Genève, et du prof. Pétros Pertikis, représentants du Patriarche Oecuménique de Constantinople (13 juin 1985)—(page 18).

7. **Diacre Stépan Karapétian**—Visite au Saint-Siège d'Etchmiadzine d'un groupe de pèlerins de l'église St. Albans d'Angleterre conduit par Mgr. Richard Rood, évêque d'Hereford (27 mai 1985)—(pages 19—20).

8. Brèves Informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours des mois mai-juin 1985 (pages 21—24).

9. Nouvelle publication au Saint-Siège (page 25).

10. Père Nersès Nersessian—Sermon (pages 26—27).

11. **Diacre Missak Saribékian**—Essai de sermon (pages 28—29).

12. Information sur la construction de l'édifice du „Centre arménien“ contigu à l'église arménienne St. Jacques de Genève (page 30).

13. Réunion préparatoire de la Conférence Chrétienne pour la Paix tenue à Budapest du 13 au 17 mai 1985 (pages 31—32).

14. Vie diocésaine:

a) Nouvelles du diocèse des Arméniens d'Iraq (page 33).

b) Nouvelles du diocèse des Arméniens des Etats-Unis (région occidentale) — (page 34).

c) Visite de respect et d'humilité au cimetière fraternel de Bakou à l'occasion du 40e anniversaire de la grande victoire (page 36).

d) La femme pieuse et l'ouvrière dévouée (pages 36—37).


15. Père Zaven Arzoumanian—L'évêque Oukhtanès de Sébaste et son livre intitulé „Histoire d'Arménie (étude)—(pages 38—43).

16. Père Hakob Kelendjian—Lettres inédites de l'évêque Karapet Ter-Mekertchian tirées d'un ouvrage en allemand consacré à sa vie et à son oeuvre (étude)—(pages 44—48).

17. Métropolite Filaret—„L'Origine de l'église russe“ (traduction de la deuxième partie de l'article paru dans la revue „Journal Moskovskoi Patriarkhit, 1984, № 10—11)—(pages 49—57).

18. N. Ter-Mikaélilian—„Introduction à la Bible“ (compte rendu)—(pages 58—59).

19. Nécrologie du Père Haroutioun Yessayan (1912—1985)—(page 60).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Շվեյցարիայի հայոց «Ա. Գրիգոր Լուսավորիչ» հիմնարկությանը՝ տեղի Ս. Հակոբ եկեղեցուն կից «Հայ Կեդրոն» կառուցելու առթիվ	3
Քննություն կուսակրոն քահանայության թեկնածուների	5
ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ—Հայրենական մեծ պատերազմի 40-ամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում	6
Սկյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի պլենումը՝ նվիրված Մեծ հաղթանակի քառասունամյակին	9
ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ—Ամավերջի հանդիսություն հոգևոր ձեմարանում Կ. Պոլսի հունաց Տիեզերական Պատրիարքի ներկայացուցիչները Մայր Աթոռում	12
ՍՏԵՓԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ—Սուրբ Ալբանյ եկեղեցու ուխտավորները Մայր Աթոռում	18
ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ—Եկեղեցական բեմ, լուրեր	21
Նոր հրատարակություն Մայր Աթոռում	25
Տ. ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱ ՆԵՐՍԵՍՅԱՆ—Քարոզ	26
ՄԻՍԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ—Քարոզ	28
Ողբունեի նախաձեռնություն	30
Նախապատրաստական ժողով Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի 6-րդ համագումարից առաջ	31
ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ	
Իրաքի հայոց թեմում	33
Լուրեր Միացյալ Նահանգների հայոց արևմտյան թեմից	34
Մեծ հաղթանակի 40-ամյակի առթիվ հարգանքի և խոնարհման այցելություն Բաքվի Եղբայրական գերեզմանին	36
Հախառնություն-եկեղեցապետ կիսը և նվիրյալ աշխատավորուհին	36
ԶԱՎԵՆ ՔԱՀԱՆԱ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ—Ուխտանեսն եպիսկոպոս Սեբաստիոն և իր «Պատմություն հայոց» երկը	38
ՀԱԿՈԲ ԾԱՅՐ. ՎՐԴ. ԳԸԼՆՃՅԱՆ—Անտիպ նամակներ Կարապետ եպիսկոպոսից, քաղված նրա մասին գերմաներեն լեզվով հրատարակված գրքից	44
ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՖԻԼԱՐԵՏ—Ռուս եկեղեցու ծագումը	49
Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ—«Ներածություն Աստվածաշունչի»	58
Հանգիստ Տ. Հարություն քահանա Եսայանի	60
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата	61
«Etchmiadzin» official journal of Holy Etchmiadzin	62
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԷՋՄԻԱԾԻՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 28.05.1985 թ.: Ստորագրված է տպագրության 28.06.1985 թ.:
Տպագրական 4 մամուլ+7 ներդիր, թուղթ 60×84/16, պատվեր 428

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1985 թ.